



*Հերագորական խմբի ղեկավար՝
ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

*Հերագորական խմբի անդամներ՝
ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ
ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԵՐԶՅԱՆ
ԼԻԼԻԹ ՔՈԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀԱԿՈՒ ԱՐՇԱԿՅԱՆ
ՎԵՆԵՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Ե Ր Ե Վ Ա Ն

«ՏԵՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2014

Մասնագիտական խմբագիր՝

Տիգրանյան Ի. Տ.

տ. գ. թ., պրոֆեսոր

Գրախոսներ՝

Բաղդասարյան Գ. Վ.

տ. գ. դ., պրոֆեսոր

Նազարյան Գ.Ա.

տ. գ. թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝

Աթոյան Կ. Լ. (նախագահ)

տ.գ.դ., պրոֆեսոր

Վարդանյան Գ. Ի.

տ.գ.դ., պրոֆեսոր

Սուվարյան Յու. Մ.

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր

Ավետիսյան Ս. Ս.

տ.գ.դ., պրոֆեսոր

Տ 260 **Տարածական զարգացում/** Կ. Գրիգորյան և ուրիշ.– Եր.: Տստեսագետ, 2014 – 88 էջ.–(«Ամբերդ» մատենաշար):

ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի «Տարածական զարգացում» հետազոտական ուղղության խմբի գիտական զեկույցում գնահատվել են ՀՀ-ում տարածական զարգացման հնարավորությունները և բացահայտվել դրանց իրականացման հիմնական ուղղությունները: Մշակվել են ՀՀ տարածական զարգացման հայեցակարգային հիմնադրությունները, վերլուծվել քաղաքների զարգացման բազմաթիվ մոդելներ, ուսումնասիրվել են տարածական զարգացման միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում: Կատարվել են ՀՀ մարզերի և համայնքների տնտեսական ռեսուրսների հետազոտություն և տարածքներում կրեատիվ արդյունաբերության զարգացման վերլուծություն: Հաշվարկվել է ՀՀ մարզերի տնտեսական զարգացման համաթիվը: Վերլուծվել են նաև Եղեգնաձոր քաղաքում նոր արժեղթաների ձևավորման և Վայոց Ձորի մարզում գինեգործության կլաստերի զարգացման հնարավորությունները:

Գիտական զեկույցը նախատեսված է դասախոսների, գիտաշխատողների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների և ուսանողների համար:

Հեղինակներ՝ **Գրիգորյան Կ.** (գլուխներ 1, 2 /համահեղ./, 3 /համահեղ./), **Աթոյան Կ.** (գլուխ 2 /համահեղ./), **Մկրտչայն Թ.** (գլուխ 5 /համահեղ./), **Խաչիկյան Ս.** (գլուխ 4), **Թերզյան Տ.** (գլուխ 6), **Քոչյան Լ.** (գլուխ 8), **Համբարձումյան Հ.** (գլուխ 7), **Արշակյան Հ.** (գլուխ 3 /համահեղ./), **Առաքելյան Վ.** (գլուխ 5 /համահեղ.):

Ներածություն..... 5

Գլուխ 1. Տարածական զարգացման հայեցակարգային հիմնադրույթներ 6

Գլուխ 2. Քաղաքների տարածական զարգացման մոդելների ուսումնասիրություն..... 14

Գլուխ 3. ՀՀ տարածքների ընդհանուր բնութագիրը..... 19

Գլուխ 4. Տարածական զարգացման գործընթացում կրթության և գիտության առանձնահատկությունները..... 26

Գլուխ 5. Երևանի կրեատիվ արդյունաբերության զարգացման հնարավորությունները 33

Գլուխ 6. ՀՀ մարզերի զարգացման համաթիվը և դրա բաղադրիչները 46

Գլուխ 7. Եղեգնաձոր քաղաքի զարգացման հնարավորությունների վերլուծություն..... 52

Գլուխ 8. Տարածաշրջանում կլաստերների ձևավորման մեխանիզմները. գինեգործության կլաստեր (Վայոց Ձորի մարզի օրինակով).. 61

Գրականության ցանկ 71

Հավելվածներ..... 75

Համառոտագրեր 83

Հեղափոխության բնագավառը և արդիականությունը

Ներկայում տարածքային տնտեսագիտության սահմանները զգալիորեն ընդլայնվել են, ներառելով առավելապես գլոբալ բնույթի հիմնախնդիրներ, և շեշտադրում են հատկապես տարածական զարգացման տեսանկյունը: Այս մոտեցումն ավելի բարձր մակարդակով է առաջադրում տարածական զարգացման հիմնախնդիրների համալիր լուծումներ, կիրառում նոր, ինովացիոն մեխանիզմներ, օգտագործում գիտության բազմաթիվ ճյուղերի հետազոտական ներուժը և կարողությունները:

Կարևոր է հաշվի առնել, որ ամեն մի բնակավայրի սոցիալտնտեսական զարգացման գործընթացում գոյություն ունեն ոչ միայն ընդհանուր բնույթի հիմնախնդիրներ՝ հատուկ տվյալ երկրին, այլև տարածքային առանձնահատուկ հիմնահարցեր, որոնց լուծման նպատակով անհրաժեշտ են տեղական պայմաններում կիրառելի մոտեցումներ և սկզբունքներ: Նշվածը լիովին համապատասխանում է ՀՀ մարզերին, համայնքներին, ինչպես նաև մայրաքաղաք Երևանին ու նրա վարչական շրջաններին:

Հեղափոխության ստարկսն ՀՀ տարածական զարգացումն է, իսկ հեղափոխության օբյեկտը՝ ՀՀ տարածքների տնտեսությունները:

Հեղափոխության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ-ում տարածական զարգացման հնարավորությունները և բացահայտել դրանց իրականացման հիմնական ուղղությունները:

Նշված նպատակին հասնելու համար հետազոտությունում առաջադրվում են հետևյալ *խնդիրները*.

- Մշակել ՀՀ տարածական զարգացման հայեցակարգային հիմնադրույթներ:
- Կատարել ՀՀ տարածքների՝ մարզերի և համայնքերի տնտեսական ռեսուրսների հետազոտություն և վերլուծել տարածքներում կրեատիվ արդյունաբերության զարգացման ներկա վիճակը և հնարավորությունները:
- Ուսումնասիրել տարածական զարգացման միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում:
- Ուսումնասիրել և բացահայտել ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության, տարածքային կլաստերների ու հանգույցների ձևավորման և զարգացման հնարավորությունները, քաղաքների և գյուղերի զարգացման շարժիչ ուժերը:
- Հաշվարկել ՀՀ տարածքների նոր տնտեսական համաթվերը և մրցակցային առավելությունները:

Հեղափոխությունն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները.

- Քաղաքներ:
- Գիտելիքահենք տնտեսություն:
- Կրեատիվ արդյունաբերություն:

ՀՀ-ում տարբեր ռազմավարական փաստաթղթեր ներառում են տարածական զարգացման հետազոտությանը և դրա թեմատիկ ուղղվածություններին առնչվող դրույթներ: Դրանց վերլուծությունը և գնահատականները կարևոր են ՀՀ-ում տարածական զարգացման արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար:

Տարածական զարգացմանը վերաբերող հիմնահարցերը ընդհանուր գծերով ամփոփված են **ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության** հիմնադրույթներում, ինչը, անշուշտ, կարող է նպաստել դրանց կենսագործմանը: Այդ ռազմավարության մեջ ազգային անվտանգության ներքին սպառնալիքների շարքում նշվում է ուրբանիզացումը (քաղաքակենտրոնացումը):

Դեռևս ԽՍՀՄ կազմում գտնվելիս Հայաստանում բարձր էր ուրբանիզացման մակարդակը: Այդ գործընթացը շարունակվել է նաև անկախացումից հետո. հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների՝ հատկապես մայրաքաղաքի միջև աշխատանքի շուկայի, կրթական հնարավորությունների և կյանքի որակի անհամաչափությունն է: Հայաստանի հետագա ուրբանիզացումը սպառնալիք է ներկայացնում ազգային անվտանգության համար:

ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունը դիտարկվել է նաև **ՀՀ կայուն զարգացման ծրագրում** (ԿԶԾ), ըստ որի այդ անհամաչափությունները բնորոշ են անցումային և զարգացող համարյա բոլոր երկրներին, այդուհանդերձ, ՀՀ-ում այդ տարբերությունն առավել ցայտուններից մեկն է:

Ուշագրավ է, որ ըստ վերոնշյալ ծրագրի դրույթների՝ ԿԶԾ-ի գործողության ժամկետում՝ մինչև 2021 թ., 1999–2006 թվականներին ձևավորված տարածքային զարգացման միտումների շարունակության դեպքում (բազային սցենար) տնտեսական կյանքի կենտրոնացումը Երևանում կտևի ԿԶԾ ողջ ժամկետում՝ 2015 թ. հասնելով 69.6, 2018 թ.՝ 71.8 և 2021 թ.՝ 73.8 տոկոսի: Համապատասխանաբար կշարունակի աճել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշներով չափվող կենսամակարդակների տարբերությունը Երևանի և Հայաստանի մարզերի միջև՝ 2015 թ. կազմելով մոտ 4.4, 2018 թ.՝ մոտ 4.9, իսկ 2021 թ.՝ մոտ 5.4 անգամ:

Ի տարբերություն ԿԶԾ բազային սցենարի՝ ԿԶԾ տարածքային զարգացման սցենարը նախատեսում է նպատակային տարածքային քաղաքականության իրականացում, որը բացակայում է բազային սցենարում, և

ուղղված կլինի Երևանից դուրս տնտեսական աճի արագացման խրախուսմանը:

Բացի դրանից, ՀՀ կառավարության 30.07.2011 թ. թիվ 25 արձանագրային որոշման 38-րդ կետով հավանության է արժանացել **ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգը**, որում առաջին անգամ առանձին փաստաթղթով ներկայացվել են ՀՀ տարածքային զարգացման խնդիրները՝ թեպետ բավականին ընդհանուր գծերով:

Տարածական զարգացմանն է առնչվում նաև 2011 թ. հունվարի 13-ին ՀՀ կառավարության հավանության արժանացած **ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը**: Բացի դրանից, 2011 թ. նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012–2016 թվականների գործողությունների ծրագիրը»: Մակայն ՀՀ տարածքներում միգրացիոն հոսքերի փաստացի վերլուծություն, ըստ էության, չի կատարվել:

Տարածքներում գյուղատնտեսության արդիականացման և գյուղի հիմնախնդիրների լուծման ուղիների բացահայտման հարցերը ամփոփված են հետևյալ փաստաթղթում՝ ՀՀ կառավարության 04.11.2010 թ. թիվ 1476-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»:

Հայաստանում տարածական զարգացման առնչվող ծրագրերին գործուն մասնակցություն ունեցող կազմակերպություններն են, մասնավորապես.

- ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամը,
- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID),
- Ասիական զարգացման բանկը,
- Գերմանիայի Վերականգնման վարկային հաստատությունը (KfW),
- Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը (GTZ),
- Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (JICA)
- Համաշխարհային բանկը,
- ՄԱԿ-ի զարգացման գործակալությունը (UNDP),
- ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO),
- ՄԱԿ-ի Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD)

- Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարությունը (DFID),
- Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը (OPEC),
- «Վորլդ Վիժն» Հայաստանը,
- ՀՀ տարածաշրջանային զարգացման եվրոպական ծրագիրը (REDAM),
- Լինսի հիմնադրամը:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից և նվիրատու կազմակերպություններից ու երկրներից ստացված վարկերով ու դրամաշնորհներով իրականացվող ծրագրերն ունեն երեք հիմնական ուղղություններ՝ ենթակառուցվածքների բարելավում (որը, թերևս, ամենամեծ ընդգրկումն ունի), գյուղատնտեսության հիմնախնդիրների լուծում, աջակցություն փոքր ու միջին ձեռնարկատիրությանը (ՓՄՁ)¹:

Մինչ վերջերս իրականացված ծրագրերում գործարարության զարգացմանն ուղղված բաղադրիչները, որպես կանոն, փոքրածավալ և սակավաթիվ են եղել: Նման ուղղվածության և նշանակալի չափերի ծրագրերի թվում են, մասնավորապես, Համաշխարհային բանկի «Գյուղական ձեռնարկության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» (RESCAD) և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագրերը:

ՀՀ-ում առկա բոլոր ռազմավարական փաստաթղթերում տարածական զարգացման հարցերի ներկայացվածության ոչ բավարար մակարդակը հուշում է ՀՀ տարածական զարգացման հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը և հրատապությունը: Այդ հիմնարար փաստաթղթի մեջ անհրաժեշտ է կիրառել հայեցակարգային հետևյալ սկզբունքները.

- տարածական զարգացման հայեցակարգը (կամ ռազմավարությունը) պետք է ընդգրկի սոցիալական, տնտեսական, աշխարհագրական և արտաքին ավելի մեծ թվով գործոններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են տարածքներում ընկերությունների գործունեության վրա,
- անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել տվյալ տարածաշրջանի ներքին միջոցներին և կարողություններին, ոչ թե արտերկրից ներդրումների կամ դրամական հատկացումներին, պետք է կենտրոնանալ ոչ թե տարածաշրջանի թերությունների կամ թույլ կողմերի, այլ հնարավորությունների և դրանց օգտագործման վրա,
- տարածական զարգացման ծրագրեր մշակելիս, բացի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից,

¹ Աղբյուրը՝ Տարածաշրջանային զարգացման հայեցակարգի (ռազմավարության) վերլուծական նյութեր և ուրվագծեր, նախագիծ, մարտ, AEPLAC, 2007:

անհրաժեշտ է ապահովել նաև այլ շահագրգիռ կողմերի, մասնավորապես, տեղական և արտասահմանյան գործարարների և գիտության ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը:

Տարածական զարգացման հայեցակարգի մեջ նպատակահարմար է ներառել հայեցակարգային հետևյալ դրույթները.

- Տարածքների համահարթեցման նոր մոտեցումներ, համընդհանուր քաղաքականությունից անցում նպատակայինի, մասնավորապես՝ զարգացման կենտրոնների ձևավորում և դրանց զարգացման նպաստում:
- Տարածքների մրցունակության բարձրացում և մրցակցային առավելությունների առևտրայնացում:
- Սահմանակից երկրների տարածքների հետ համագործակցության և ինտեգրման հնարավորությունների բացահայտում և օգտագործում (ներկայում փաստացի չօգտագործված հնարավորություններ Վրաստանի և Իրանի սահմանակից տարածքների հետ):
- Հանրային ներդրումների տարածքային բաղադրիչի գնահատում:
- Տեղական և միջազգային կազմակերպությունների ծրագրերի իրականացման միասնական մշտադիտարկում և այդ ծրագրերի հնարավորինս ներդաշնակումը ՀՀ տարածական զարգացման հայեցակարգի հիմնադրույթներին և նպատակներին:
- Քույր քաղաքների համագործակցության զարգացում:
- Համայնքների խոշորացման նոր մոտեցումներ՝ հիմնված տարածական զարգացման ծրագրերի վրա:
- «Հայկական նոր գյուղի» հայեցակարգի մշակում:
- Նոր աշխատատեղերի ստեղծումը տարածքային կլաստերներում, ագլոմերացիաներում, հանգույցներում և ցանցային կենտրոններում:
- Տարածական զարգացման ծրագրերին միտված կառուցվածքային հիմնադրամի ստեղծում:
- Միջմարզային և միջազգային համագործակցության ներուժի բացահայտում:
- Կառավարման ուղղահայաց և հորիզոնական կտրվածքներում փոխգործակցություն:

Մրցունակ և գրավիչ տարածքների (զարգացման կենտրոններ) որոշումը կարող է ապահովել տվյալ և հարակից տարածքների տնտեսական զարգացումը: Անհրաժեշտ է ֆինանսների, վարչական ղեկավարման, մարդկային և այլ ռեսուրսների հատուկ կենտրոնացում տարածքային զարգացման կենտրոններում: Ձեռներեցության ակտիվությունը, ներդրումային գործընթացը մրցունակ տարածքներում կլինեն առավել ինտենսիվ, թողնելով կու-

մույատիվ և մուտիպլիկատիվ ազդեցություն մյուս տարածքների վրա: Ընդ որում՝ տնտեսական զարգացման կենտրոնները կարող են չհամընկնել մարզային կենտրոնների կամ քաղաքային համայնքների հետ, ինչպես, օրինակ, Ծաղկաձորը, Ջերմուկը, Դիլիջանը, Ստեփանավանը, որոնք այսօր արդեն ունեն իրենց հեռանկարային ծրագրերը և այլն²:

Հայաստանում մինչ այժմ իրականացրած տարածքային կամ տարածաշրջանային քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել տարածաշրջաններում սոցիալական ու ենթակառուցվածքային խնդիրների լուծմանը, ինչը, սակայն, չի նպաստել տարածական դինամիկ զարգացմանը:

Պետական և միջազգային ծրագրերում գործարարության գործնական զարգացման ուղղությունը համեմատաբար նոր է և դեռ մեծ թափ չի ստացել. հարկ է նշել, որ այդ ուղղությունը հատուկ ուշադրության է սկսել արժանանալ վերջին մի քանի տարիներին: Այդ առումով կարևորվում են հատկապես ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ) հիմնադրամի ստեղծումն ու դրա գործունեությունն ու Համաշխարհային բանկի մի շարք որոշ ծրագրերում տեղ գտած՝ գործարարության զարգացման բաղադրիչները:

Տարածական զարգացման քաղաքականության հնարավոր գործիքները կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝ Տարածական զարգացման ծրագրավորում, Տարածական զարգացման ծրագրերի ֆինանսավորում, Տեղեկատվություն և խորհրդատվություն, Ենթակառուցվածքների օժանդակություն, կառուցվածքային հիմնադրամ:

Տարածական զարգացման գործում կարևոր է միջազգային համագործակցությունը: Օրինակ՝ Եվրոպական տարածաշրջանների ասամբլեային ՀՀ մարզերի անդամակցման արդյունքում հնարավոր են դառնում այդ կազմակերպության շրջանակներում իրականացվող ծրագրերին Հայաստանի տարածքների մասնակցությունը, ինչպես նաև երկկողմանի նոր կապերի ձևավորումը³:

Հայ-վրացական «ԵվրոԿովկաս» եվրառեզիոնի շրջանակներում հնարավոր է դարձել սահմանամերձ տարածքներում տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և մշակութային համագործակցությունը՝ եվրոպական հիմնադրամների (մասնավորապես՝ Հոլանդիայի կառավարության) օժանդակությամբ⁴:

² Տե՛ս ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգը

³ Եվրոպական տարածաշրջանների ասամբլեան միավորում է 35 երկրների 250 տարածաշրջաններ ու 16 միջազգային կազմակերպություն, համագործակցության, փորձի փոխանակման հնարավորություն է ստեղծում եվրոպական երկրների տարածաշրջանների միջև: Այն գործակցում է Եվրախորհրդի և Եվրամիության կառույցների հետ: ՀՀ Լոռու մարզը 2010 թ. նոյեմբերի 11-ին ասամբլեայի լիիրավ անդամ է դարձել:

⁴ Եվրոկովկասը միավորում է Վրաստանի 4 համայնքներ (Դմանիս, Բոլնիս, Մարնեուլ և Նինոծմինդա) և Հայաստանի 3 մարզերի (Տավուշ, Լոռի և Շիրակ) համայնքներ:

ՀՀ տարածական զարգացման քաղաքականության մշակման համար օգտակար է աշխարհի տարբեր երկրների, հատկապես՝ Եվրոպական Միությունում առաջավոր փորձի (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլ երկրներ), և, մասնավորապես, **կառուցվածքային հիմնադրամների** համակարգի օգտագործման հնարավորությունների ուսումնասիրությունը: Տվյալ համակարգը ԵՄ տարածքային քաղաքականության հիմնական գործիքն է, նախատեսված է տվյալ քաղաքում ավելացված արժեքի ծավալները ընդլայնելու համար անհրաժեշտ լրացուցիչ մասնավոր ներդրումներ ապահովելու համար: Հարկ է նշել, որ 2011 թվականին ընդունվել է «Եվրոպայի Խորհուրդ-Հայաստանի կառավարություն» Գործողությունների Քառամյա Պլանը՝ կապված տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների հետ:

Մեծ ուշադրության են արժանի նաև Եվրոպական Միությունում տարածաշրջանային պլանավորման նախարարությունների ծրագրերի իրականացման փորձը և դրա տեղայնացման և կիրառման հնարավորությունները ՀՀ-ում:

Կարևոր նշանակություն ունի նաև Հայաստանի Հանրապետության հետ համեմատելի երկրներում տարածական զարգացման քաղաքականության մշակման և իրականացման միջազգային փորձը : Հետաքրքիր է այնպիսի երկրների փորձը, ինչպիսիք են օրինակ՝ Էստոնիան, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Սլովակիան և այլն⁵: Նշված երկրներում տարածական զարգացման քաղաքականության հիմնական նպատակներից են.

1. տարածքների կայուն զարգացման համար նախադրյալների ստեղծում,
2. զբաղվածության և եկամտի բնագավառում միջտարածաշրջանային տարբերությունների նվազեցում,
3. համահարթեցման նպատակով դրամաշնորհների, սուբսիդիաների և սուբվենցիաների տրամադրում տարածքներին,
4. միջտարածաշրջանային և միջսահմանային համագործակցության իրականացում և եվրոպական ինտեգրում:

Միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակներում կարևորվում է նաև ԱՊՀ երկրների տարածական զարգացման փորձը, քանի որ դրանց խնդիրներն ունեն միանման ծագում և լուծման ուղիների նույն քանակի ռեսուրսներ: Հարկ է նշել, որ ԱՊՀ մասնակից պետությունների միջտարածաշրջանային և մերձսահմանային համագործակցության խորհրդի նիստում նախագահությունը 2011 թ. ստանձնել է ՀՀ-ն:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ, OECD) երկրների փորձը ցույց է տվել, որ նախկինում վարվող

⁵ Տե՛ս ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգը

քաղաքականությունները, որոնք տարածաշրջանային ներդաշնակ զարգացման էին փորձում հասնել ենթակառուցվածքների զարգացման մեծածավալ միջոցառումների և ներդրումների ներգրավմամբ, չկարողացան, շոշափելիորեն կատարված մեծ ծախսերով հանդերձ նվազեցնել տարածաշրջանների միջև անհամաչափությունները:

Այդուհանդերձ, ՏՀԶԿ երկրներում ներկայում հասունանում է տարածաշրջանային զարգացման նոր մոտեցում, որով հետամնաց տարածաշրջաններին «լրավճարներ» հատկացնելու կամ բաշխելու փոխարեն առաջարկվում է շեշտ դնել այնպիսի միջոցառումների վրա, որոնցով հնարավոր է բարձրացնել առանձին տնտեսական տարածաշրջանների մրցունակությունը:

Աշխարհում կան հետազոտական կենտրոններ (Think tanks)՝ մասնագիտացած տարածական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Դրանցից առավել հայտնիները հետևյալն են.

- Ուորք ֆաունդեյշն (Work foundation), Լանքասթերի համալսարան, Լոնդոն, ՄԲ
- Բարթլետ Խորացված տարածական հետազոտական կենտրոն (CASA), Լոնդոն, ՄԲ
- Տարածական զարգացման հետազոտության և պլանավորման կենտրոն, Հանովեր, Գերմանիա
- Դրեզդենի Լեյբնից ինստիտուտ, Գերմանիա
- Տարածական զարգացման և պլանավորման հոլանդական ինստիտուտ
- Տարածական զարգացման Նորդիք կենտրոն (Nordregio research), Շվեդիա
- ՏԶ նախաձեռնություն, Հարավաֆրիկյան Հանրապետություն և այլն:

Ուորք ֆաունդեյշնի փորձը հատկապես ուսանելի է, քանի որ այն գտնվում է Լանքասթերի համալսարանի կազմում և գրեթե ամբողջությամբ օգտագործում է համալսարանի գիտական ներուժը:

Տարածական զարգացման աշխարհի խոշորագույն ծրագրերը հետևյալն են.

- Եվրոպական տարածական զարգացման պլանավորման ցանց (ԵՄ),
- Ամերիկյան տարածական զարգացման հեռանկարներ (ԱՄՆ),
- Այլ ծրագրեր (Քաղաքի պլանավորման սխեմաներ, Տեղական ինտեգրացված զարգացման պլաններ և այլն):

Այդ ծրագրերի կառուցվածքի, մշակման գործընթացի, ֆինանսավորման աղբյուրների, իրականացման մեխանիզմների, մշտադիտարկման, հե-

տադարձ կապի և արդյունավետության գնահատման համակարգի ուսումնասիրությունը նույնպես շատ օգտակար է Հայաստանում տարածական զարգացման հայեցակարգի, ռազմավարության և առանձին ծրագրերի կազմման ու իրականացման աշխատանքների համար:

**ՔԱՂԱՔՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄՈԴԵԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Երկրի տարածական զարգացման համար կարևոր է քաղաքների զարգացման հնարավորությունների և հեռանկարների ուսումնասիրությունը:

Ժամանակակից քաղաքը, սովորաբար, կատարում է մի քանի գործառույթ՝ վարչաքաղաքական, արդյունաբերական, առևտրական, տրանսպորտային, մշակութային, գիտական և առողջարանային: Բայց կան նաև մեկ հիմնական գործառույթ ունեցող քաղաքներ. օրինակ՝ արդյունաբերական (Դետրոյտ), տրանսպորտային (Մուեզ), վարչաքաղաքական (Կանբերա), մշակութային, այդ թվում՝ համալսարանական (Քեմբրիջ, Օքսֆորդ), առողջարանային և մարզական (Ծաղկաձոր, Սոչի), կրոնական (Երուսաղեմ, Էջմիածին, Վատիկան, Մեքքա) և այլն:

Շատ երկրներում գերխոշոր քաղաքների շուրջը գոյացել են փոքր ու միջին մեծաթիվ քաղաքներ, որոնք բազմաթիվ կապերով կապված են գլխավոր քաղաքին: Քաղաքային բնակավայրերի նման խոշոր կուտակումներն առաջացրել են քաղաքային ագլոմերացիաներ. տարածքով ամենամեծ ագլոմերացիան Նյու Յորքն է (27375 կմ²), բնակչության թվով ամենամեծը՝ Տոկիոն (ավելի քան 37 մլն բնակիչ): Վերջինիս մեջ մտնում են Տոկիոյի 23 վարչական շրջանները, 26 այլ քաղաքներ, 24 գյուղական բնակավայրեր և այլ տարածքներ:

Ագլոմերացիաների ընդարձակման հետևանքով երբեմն դրանք սերտաճում (միաձուլվում) են՝ առաջացնելով մեգալոպոլիսներ: Երեք խոշոր մեգալոպոլիսներ են ձևավորվել ԱՄՆ-ում. Մերձատլանտյան կամ Բոսվաշ (Բոստոն և Վաշինգտոն քաղաքների միջև), Մերձլճային կամ Չիկիթս (Չիկագո և Փիթսբուրգ քաղաքների միջև) և Մերձխաղաղօվկիանոսյան կամ Սան-Սան (Սան Ֆրանցիսկո և Սան Դիեգո քաղաքների միջև):

Հաճախ երկրի խոշորագույն քաղաքը պետության մայրաքաղաքն է: Խոշորագույն քաղաքներում հաճախ սրվում են տվյալ երկրի բնապահպանական, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրները: Նման դեպքերում մայրաքաղաքները փոխադրվում են երկրի ավելի փոքր քաղաքներ, իսկ երբեմն ամայի վայրերում կառուցվում է նոր մայրաքաղաք: Օրինակ՝ Բրազիլիայում Ռիո դե Ժանեյրո նախկին մայրաքաղաքի փոխարեն ամայի վայրում հիմնադրվեց Բրազիլիա ներկայիս մայրաքաղաքը, Նիգերիայի մայրաքաղաքը բազմամիլիոնանոց Լագոս քաղաքից փոխադրվեց Աբուջա, Ղազախստանում Ալմաթիից՝ անհամեմատ փոքր քաղաք Աստանա:

Ուշագրավ է, որ խոշոր քաղաքները և քաղաքային ագլոմերացիաները զարգացման որոշակի մակարդակի հասնելուց հետո դադարում են աճել: Եթե մինչ այդ տեղի էր ունենում բնակչության հոսք դեպի ագլոմերացիայի կենտրոն, ապա ինչ-որ սահմանի հասնելուց հետո հոսքը փոխում է իր ուղղությունը. բնակչությունը գերադասում է հիմնավորվել ոչ թե կենտրոնում, այլ ագլոմերացիայի եզրամասերում և դրանցից դուրս:

Քաղաքների արագ աճի, հասարակական կյանքում դրանց դերի բարձրացման, քաղաքային ապրելակերպի տարածման գործընթացը կոչվում է «ուրբանիզացում» (քաղաքակենտրոնացում): Ուրբանիզացման մակարդակը զարգացած երկրներում բարձր է՝ 70–90%, սակայն աճի տեմպերը ցածր են, իսկ դրան հակառակ՝ աշխարհի մեծ մասում (զարգացող և թույլ զարգացած երկրներում) ուրբանիզացման մակարդակը ցածր է՝ 15–30 %, բայց աճի տեմպերը բարձր են: Որոշ դեպքերում նկատելի է սուբուրբանիզացում. դա այն երևույթն է, երբ ագլոմերացիայի կենտրոնից բնակչությունը արտահոսք է կատարում դեպի արվարձանները:

Քաղաքային բնակչության և քաղաքների արագ աճով հանդերձ՝ աշխարհի բնակչության կեսից ավելին բնակվում է գյուղական բնակավայրերում: Գյուղական տարաբնակեցման ձևերը տարբեր են: Դրանք կախված են երկրի տնտեսական առանձնահատկություններից և սոցիալական պայմաններից: Սովորաբար, մեծ գյուղերը ձևավորվում են ոռոգելի երկրագործության շրջաններում:

Ժամանակակից քաղաքի տարածական զարգացումը վերլուծության են ենթարկում՝ օգտագործելով մի շարք մոդելներ, որոնք մշակվել են, օրինակ՝ ԱՄՆ արդյունաբերական քաղաքների զարգացման ընթացքում կիրառված նյութերի հիման վրա: Դրանք որոշ ձևափոխություններով օգտագործվել են նաև եվրոպական երկրներում: Ուսումնասիրության ընթացքում ուշադրության են արժանացել հատկապես Բյորքեսի համակենտրոնացված գոտու, Հոյտի հատվածային, Հարրիսի և Ուլմանի բազմամիջուկային մոդելները:

Բյորքեսի համակենտրոնացված գոտու մոդելը⁶, որը մշակվել է դեռևս 1920-ական թվականներին, դիտարկում է քաղաքային միջավայրի զարգացումը որպես համակենտրոնացված տարածքների հավաքածու, որտեղ ամեն մի տարածք ունի հոդօգտագործման մի ձև և նշանակություն: Ներքին շրջանը կենտրոնական գործարար թաղամասն է, այնուհետև տարածվում են անցումային, աշխատողների թաղամասերի, թանկարժեք բնակավայրերի և արվարձանների գոտիները: Այս մոդելի բնորոշ հատկանիշը կենսամակար-

⁶ Contributions to urban sociology / edited by Ernest W. Burgess and Donald J. Bogue, 1964, <http://ewburgess.weebly.com/concentric-zone-model.html>

դակի և կենտրոնական գործարար թաղամասից հեռավորության միջև դրական կապն է:

Հետազոտությունների հիման վրա համակենտրոնացված գոտիների մոդելը ընդլայնվեց և ներկայացվեց **Հոյտի հատվածային մոդելով**⁷ հաշվի առնելով նաև տրանսպորտային ուղիների ազդեցությունը: Այս նոր մոդելը դիտարկում է քաղաքի զարգացումը որպես մի հատված, որը ձևավորվել է կենտրոնից սկիզբ առնող գլխավոր տրանսպորտային ուղիներով: Այս մոդելի շրջանակներում տրանսպորտային ուղիներին մոտ լինելը մեծացնում է հողի կապիտալացումը և ազդում դրա օգտագործման վրա: Այսպես՝ քաղաքի կենտրոնում գտնվում են գործարար շենքերը, իսկ արդյունաբերական ձեռնարկությունները՝ տրանսպորտային ուղիներին մոտ: Ցածր դասի բնակավայրերը գտնվում են արդյունաբերական և պահեստների շրջաններին մոտ, իսկ բարձր դասի բնակավայրերը՝ ավելի հեռու:

Սակայն արդեն 1940-ականների կեսերին պարզ դարձավ, որ խոշոր քաղաքները այլևս չեն տեղավորվում գոյություն ունեցող զարգացման մոդելներում: Զարգանում էին զգալի մասշտաբի արվարձաններ, որոնց մի մասը, որոշակի չափի հասնելով, սկսեց գործել որպես փոքր գործարար կենտրոն կամ զարգացման միջուկ: Թեև քաղաքի կենտրոնական հատվածը մնում էր որպես տնտեսական ակտիվության կենտրոն՝ պարզ դարձավ, որ այդ միջուկներում ևս զարգանում են գործունեության որոշակի ձևեր՝ հաճախակի միավորվելով կլաստերներում, այսինքն՝ ձևավորելով ավելացած արժեքի շղթա:

Հարրիսի և Ուլմանի բազմամիջուկային նոր մոդելի ուշադրության կենտրոնում է կենտրոնական թաղամասը, իսկ տրանսպորտային ճյուղերի մոտ գտնվում են թեթև արդյունաբերական և մեծածախ առևտրի շրջանները: Ծանր արդյունաբերությունը, հաճախ շրջապատված ցածր դասի բնակելի շրջաններով, գտնվում է քաղաքի արտաքին սահմաններում, իսկ ծայրամասերում՝ քաղաքամերձ բնակավայրեր և փոքր գործարար կենտրոններ:

Տնտեսությունում **տարածական տեղաբաշխմանը** հատուկ ուշադրության է արժանացրել բելգիացի տնտեսագետ **Ժակ Ֆրանսուա Տիսսը**⁸: Նա նշել է, որ «ավանդական գիտությունը տնտեսական ակտիվությունը դիտարկում է հավասարաչափ տեղաբաշխված տարածության մեջ: Բայց իրականում գոյություն ունեցող անհավասարաչափ բաշխումը, քաղաքների դերի անընդհատ աճի հետ մեկտեղ, ստիպեց տնտեսագետներին զբաղվելու տվյալ երևույթի օրինաչափությունների վերլուծությամբ»:

⁷ One Hundred Years of Land Values in Chicago. The relationship of the growth of Chicago to the rise in its land values, 1933

⁸ Thisse Jacques-François, (2011), "Economic Geography," CREA Discussion Paper Series 11-01, Center for Research in Economic Analysis, University of Luxembourg, http://www.wfr.uni.lu/recherche/fdef/crea/publications2/discussion_papers/2010

Նոր տնտեսական աշխարհագրության (ՆՏԱ) մոդելի գլխավոր նվաճումն այն է, որ ցույց է տալիս, թե ինչպես է շուկայի չափը փոխազդում ձեռնարկությունների ներքին տարածական տնտեսության մասշտաբների հետ: Դա հնարավորություն է տալիս որոշելու շուկայի ծավալը ընդոծին պատճառներով: Հավասարաչափ կայուն շրջանառության դեպքում ձեռնարկություններն առավել շահեկան են համարում արտադրությունները տեղակայել իրենց հաճախորդների մոտ, այդպես էլ նվազեցնում տրանսպորտային ծախսերը՝ առանց կրճատելու արտադրության արդյունավետությունը: Այստեղից հետևում է, որ բարձր տրանսպորտային ծախսերի պատճառով առանձին տարածքներ ինքնամեկուսացվում են (թեև իրենց ներսում կարող են ունենալ բարձր եկամուտներ): Տեսական մոդելում, եթե այդպիսի տեղաբաշխման գործոնը հավասարաչափ լինի, ապա տնտեսությունում ամեն մեկն արտադրում է միայն սեփական սպառման համար:

Բայց երբ տրանսպորտային ծախսերը ցածր են, ապա սկսվում է տարածքների միջև մրցակցություն: Միաժամանակ՝ գործում է **կումուլյատիվ օրենքը**: Տիսար մեջբերում է Փոլ Կրուգմանին՝ «ապրանքների արտադրությունը հակում կունենա կենտրոնանալու այնտեղ, որտեղ առկա է մեծ շուկա, բայց շուկան էլ կլինի մեծ այնտեղ, որտեղ կենտրոնանում է ապրանքների արտադրությունը»:

Հատկանշական է, որ, ըստ Փրայս Ուոթեր Հաուս Քոուփերս կազմակերպության տվյալների՝ 2009 թ. 30 խոշոր քաղաքներին ընկել է համաշխարհային ՀՆԱ-ի շուրջ 18%-ը: Կորեայի Հանրապետությունում մայրաքաղաքային շրջանը զբաղեցնում է երկրի մակերեսի 11,8%-ը, ապրում՝ բնակչության 48,6%-ը և արտադրվում երկրի ՀՆԱ-ի 47,8%-ը: Բրազիլիայում ՀՆԱ-ի 33,9%-ը արտադրվում է Սան-Պաուլու նահանգում, որտեղ ապրում է բնակչության 21,6%-ը, մինչդեռ տարածքն ամբողջ երկրի ընդամենը 2,9%-ն է: Փարիզում, որը զբաղեցնում է Ֆրանսիայի տարածքի ընդամենը 2,2%-ը, ապրում է բնակչության 18,2%-ը և արտադրվում ՀՆԱ-ի 28,3%-ը:

Հարկ է նշել, որ տարածքների տնտեսական ցուցանիշների տարբերությունը մեծ չափով կախված է նաև տեղական ընկերությունների, տնային տնտեսությունների, աշխատանքային ռեսուրսների միջև փոխազդեցությունից և նրանց վարքից: Եվ այստեղ անհրաժեշտություն է առաջանում անցում կատարելու ՆՏԱ-ից դեպի **քաղաքային տնտեսագիտությանը** (ՔՏ), իսկ ավելի հստակ՝ դեպի «ՆՏԱ գումարած ՔՏ» սինթեզը: ՔՏ հիմնարար մոդելը **միակենտրոն քաղաքն** է, որը ենթադրում է կենտրոնական գործարար շրջանի (ԿԳՇ) գոյություն, և որտեղ կենտրոնացած են աշխատանքային վայրերը: Ինչպես հայտնի է, նախկինում քաղաքների մեծ մասշտաբը մեծացնում էր բնակելի վայրերից գործարար շրջաններ հասնելու ամենօրյա ժամանակային ծախսերը: Սակայն հանրային տրանսպորտի զարգացումը կրճատել է

աշխատանքի հասնելու ժամանակային ծախսերը: Դա բոլորովին նոր հեղափոխություն էր, որը հնարավորություն ընձեռեց նոր **մեզապոլիսների** առաջացման:

Հետագայում քաղաքներն այնքան մեծացան, որ քաղաքային փոխադրումների ծախսերը կրկին ավելացան: Օրինակ, Փարիզի բնակիչը ծախսում է մոտավորապես տարեկան մեկ աշխատանքային ամիս տրանսպորտով տեղափոխվելու համար, մեծահասակները Մանհեթենում ծախսում են տարեկան 3–7 աշխատանքային շաբաթ:

Երբ ներքաղաքային տրանսպորտային ծախսերը աշխատողների համար անընդհատ նվազում են, իրականացվում է արտադրողական ուժերի փոփոխականությունից անցում մեծ քաղաքներում դրանց ամրապնդմանը: Սակայն ապրանքների մատակարարման ծախսերի նվազումը բերում է աշխատանքի և արտադրության տարածական ապակենտրոնացմանը:

Մեզապոլիսների համար քաղաքային փոխադրումների ժամանակային ծախսերի աճը ենթադրում է **երկրորդային գործարար կենտրոնների** (ԵԳԿ) առաջացման միտում: Կենտրոնական գործարար շրջանի հարակից շրջաններում բնակարանները թանկ են, ինչն էլ ստիպում է բնակչության մեծամասնությանը «նահանջել» դեպի ծայրամասեր: Երկրորդային գործարար կենտրոնների առաջացումը հնարավորություն է տալիս աշխատանքի վայր հասնելու ժամանակային ծախսերը կրճատել՝ պահպանելով բնակարանների նույն գնային մակադակը:

Բացի դրանից, կարող են առաջանալ երկրորդային գործարար մի քանի կենտրոններ, ինչը ստեղծում է մեզապոլիսի **բազմակենտրոն** կառուցվածք: Դա ցույց տալու համար, օրինակ՝ Տիսսը բերել է Կալիֆորնիայի ներքին շրջանների զբաղվածության աճը. 1990–2005 թթ. այն եղել է 5 անգամ ավելի մեծ, քան մերձակա տարածքներում: 21-րդ դարում շատ խոշոր քաղաքային ագլոմերացիաներ շարունակելու են ընդլայնվել ոչ միայն իրենց միջուկում աշխատանքային զբաղվածության խտության աճի, այլև բազմակենտրոն մոդելների ավելացման շնորհիվ:

ՀՀ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բնութագրական է, որ 2012 թ. տվյալներով արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինները Երևանում և ՀՀ մարզերում համապատասխանաբար 40,2 % և 59.8% են, իսկ շինարարության ծավալների տեսակարար կշիռները՝ 53.5% և 46.5%:

Իսկ ՀՀ տարածքների գոյություն ունեցող տնտեսական և քաղաքաշինական յուրացվածության առանձնահատկությունները հիմնականում պայմանավորված են բնակլիմայական պայմանների բազմազանությամբ, քաղաքաշինության և գյուղատնտեսության համար հողային ռեսուրսների սակավությամբ, մարդու տնտեսական գործունեությունը սահմանափակող բնական և հատակագծային գործոնների առկայությամբ, որոնք նախկին խորհրդային տնտեսական համակարգի սոցիալտնտեսական առանձնահատկությունների հետ միասին ստեղծել էին նախապայմաններ ՀՀ տարածքի անհավասարաչափ յուրացման համար:

Արդյունքում, տարածքը տարաբնակեցվել է⁹ խիստ անհավասարակշռված, ստեղծվել է միակենտրոն մի համակարգ՝ գերզարգացած կենտրոնական մասով (Երևանը և երևանյան ագլոմերացիան) և թույլ զարգացած ծայրամասերով (հատկապես՝ Սյունիքի և Տավուշի մարզերը, Շիրակի մարզի հյուսիսային տարածաշրջանը): ՀՀ հարուստ ռեսուրսային ներուժը (ջրային, հումքային, ռեկրեացիոն) օգտագործվել է մասնակիորեն և ոչ արդյունավետ:

Հարկ է նշել, որ խոշոր քաղաքների բնակչության տեսակարար կշիռը քաղաքային բնակչության կտրվածքով 12% է, մեծ քաղաքներինը՝ 5.3%, միջին քաղաքներինը՝ 25.9%, փոքր քաղաքներինը՝ 12.1%, փոքրագույն քաղաքներինը՝ 0.9 %¹⁰: Խոշորագույն քաղաք Երևանի բնակչության տեսակարար կշիռը քաղաքային բնակչության կտրվածքով 53.8 % է¹¹, իսկ հանրապետության բնակչության կտրվածքով 34.4%:

Հատկանշական է նաև, որ ըստ բնակչության թվի խոշոր քաղաքները մեծ տեսակարար կշիռ ունեն Շիրակի և Լոռվա մարզերում, մյուս մարզերում

⁹ Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումը ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի, կամ որևէ տարածքում ձևավորված բնակավայրերի ցանցը կոչվում է «տարաբնակեցում»:

¹⁰ Դասակարգման ամեն մի կարգում քաղաքների բնակչության միջին քանակը (առանց Երևանի) խոշոր քաղաքային բնակավայրերում 190.5 հազ. է, մեծ քաղաքային բնակավայրերում՝ 63.2 հազ., միջին քաղաքային բնակավայրերում՝ 30.2, փոքր քաղաքային բնակավայրերում՝ 11.0, փոքրագույն քաղաքային բնակավայրերում՝ 2.1 հազ. մարդ:

¹¹ Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաք Երևանը թվերով, 2012 թ, վիճակագրական ժողովածու, Երևան, ՀՀ ԱՎԾ

բացակայում են մեծ քաղաքները, դրանք միայն Արմավիրի և Կոտայքի մարզերում են, միջին քաղաքները համեմատաբար շատ են Արարատի և Լոռվա մարզերում, փոքր քաղաքները համեմատաբար շատ են Սյունիքի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում:

Աղյուսակ 1

ՀՀ քաղաքային բնակավայրերի դասակարգումը¹²

N	Մարզերի անվանումը	Քաղաքների թիվը	Այդ թվում՝ քաղաքները ըստ բնակչության թվի (հազ. մարդ)					
			փոքրագույն մինչև 5	փոքր 5-20	միջին 20-50	մեծ 50-100	խոշոր 100-500	խոշորագույն 500-ից ավելի
			1	Արագածոտն	3	-	2	1
2	Արարատ	4	-	1	3	-	-	-
3	Արմավիր	3	-	1	1	1	-	-
4	Գեղարքունիք	5	-	3	2	-	-	-
5	Լոռի	8	3	4	-	-	1	-
6	Կոտայք	7	1	3	2	1	-	-
7	Շիրակ	3	-	2	-	-	1	-
8	Սյունիք	7	3	2	2	-	-	-
9	Վայոց Ձոր	3	-	3	-	-	-	-
10	Տավուշ	5	1	3	1	-	-	-
11	Երևան	1	-	-	-	-	-	1
12	Ամբողջը/տեսակարար կշիռը ընդհանուր քանակում %	49/100	8/16,3	24/49	12/24.5	2/4.1	2/4.1	1/2.0

Վերլուծության արդյունքում բացահայտվել են նաև քաղաքային բնակչության և քաղաքային համայնքների բաշխվածության անհամամասնությունները: ՀՀ կտրվածքով քաղաքային բնակչության 53,8 %-ը կենտրոնացված է խոշորագույն քաղաք Երևանում, իսկ փոքր քաղաքներում, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր թվում կազմում է 49%-ը, բնակվում է բնակչության 7,8%, միջին քաղաքներում՝ բնակչության 16,6% (տեսակարար կշիռը՝ 24,5%), մեծ քաղաքներում՝ բնակչության 3,4 % (տեսակարար կշիռը՝ 4,1%): Ընդ որում հարկ է նկատել, որ խոշորագույն, խոշոր և մեծ քաղաքները կենտրոնացված են առավելապես Արարատյան, Շիրակի հարթավայրերում և

¹² Աղբյուրը՝ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության N 610, 10.04.2003 որոշմամբ, <http://www.mud.am/maps/tarebnak.pdf>

դրանց հարող տարածքներում (Արմավիրի, Շիրակի, Կոտայքի, Լոռվա մարզեր)¹³:

Հատկանշական է, որ ՀՀ գյուղական բնակչությունը նույնպես տեղաբաշխված է անհամամասնորեն: Ըստ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի տվյալների՝ ՀՀ կտրվածքով գյուղական բնակչության 36.8%-ը տեղաբաշխված է խոշոր գյուղական համայնքներում¹⁴, որոնց տեսակարար կշիռը կազմում է գյուղական համայնքների 11.2%-ը, իսկ փոքր գյուղական համայնքներում (տեսակարար կշիռը՝ 53.2 %) բնակվում է ընդամենը գյուղական բնակչության 18 %-ը:

Խոշոր գյուղական համայնքների մեծ տեսակարար կշիռ ունեն Գեղարքունիքի (21.8%) և Կոտայքի (23.3%) մարզերը, որտեղ համապատասխանաբար բնակվում են մարզերի գյուղական բնակչության 60.0%-ը և 52.4%-ը: Խոշոր գյուղական բնակավայրերից փոքր տեսակարար կշիռ ունի Վայոց Ձորի մարզը (2.4%), որտեղ բնակվում է մարզի գյուղական բնակչության 13%-ը: Սյունիքի մարզում խոշոր գյուղական բնակավայրերը լրիվ բացակայում են, մինչդեռ փոքր գյուղական բնակավայրերն ամենամեծ տեսակարար կշիռն ունեն (88.7%), որոնցում կենտրոնացված է մարզի գյուղական բնակչության 57.0 %-ը:

Մեծ են նաև գյուղական բնակավայրերի տարածքային տեղաբաշխման անհամամասնությունները: Խոշոր, մեծ, միջին մեծության գյուղական բնակավայրերը տեղաբաշխված են մարզերի հարթավայրային, նախալեռնային մասերում՝ զբաղեցնելով մարզի բերրի, ոռոգվող հողերը, բայց և գտնվում են միջպետական և պետական ճանապարհների բարենպաստ ազդեցության գոտում:

Բնակավայրերի խտության ամենամեծ ցուցանիշներն (բնակ./100 կմ²) ունեն Արմավիրի (0.75), Արագածոտնի (0.4), Արարատի (0.4) և Շիրակի (0.4) մարզերը, ամենափոքրը՝ Վայոց Ձորի մարզը (0.17), մնացած մարզերում այդ ցուցանիշը տատանվում է 0.20–0.28 սահմաններում¹⁵:

Բնակավայրերի խտության ամենամեծ ցուցանիշները (մարդ/կմ²) ունեն Արմավիրի (231), Կոտայքի (136), Արարատի (135) և Շիրակի (105) մարզերը, ամենափոքրը՝ Վայոց Ձորի մարզը (24): Ինչպես հայտնի է, բնակչու-

¹³ Աղբյուրը՝ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության N 610, 10.04.2003 որոշմամբ, աղբյուրը՝ <http://www.mud.am/maps/tarebnak.pdf>

¹⁴ Գյուղական համայնքներն ըստ բնակչության թվի դասակարգվել են հետևյալ ձևով. խոշոր՝ 3.0 հազարից ավելի մարդ, մեծ՝ 2.0–3.0 հազ., միջին՝ 1.0 –2.0 հազ. և փոքր՝ 0.1–1.0 հազ. մարդ:

¹⁵ Աղբյուրը՝ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության N 610, 10.04.2003 որոշմամբ, աղբյուրը՝ <http://www.mud.am/maps/tarebnak.pdf>

թյան թվաքանակի մեծացումը տեսականորեն հանգեցնում է միջինից բարձր IQ-ով բնակչության բացարձակ թվաքանակի մեծացմանը¹⁶:

ՀՀ տարածքն ըստ քաղաքաշինական-տնտեսական յուրացվածության աստիճանի կարելի է ստորաբաժանել հետևյալ գոտիների.

- ինտենսիվ յուրացված,
- թույլ յուրացված,
- ռեկրեացիոն և բնապահպանական¹⁷,
- տարաբնակեցման համար անբարենպաստ:

Գոտիների սահմաններն անցնում են բնական կամ հատակագծային սահմանափակումների տարրերով՝ գետերով, ոռոգման խոշոր ջրանցքներով, անտառների եզրերով, մայրուղային ավտոճանապարհներով և երկաթգծերով:

Այս առումով, տնտեսապես և քաղաքաշինորեն ինտենսիվ յուրացված գոտիներն ընդգրկում են Երևանը, Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի մարզերի հարթավայրային մասերը և Հրազդան, Քասախ գետերի հովիտները, Շիրակի մարզում՝ կենտրոնական հարթավայրային մասը, Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի ափամերձ շերտին հարող տարածքը, Լոռվա մարզում՝ սարահարթային մասը (Տաշիր գետի հովիտը), Ձորագետ, Փամբակ գետերի նեղ գետահովիտները, Վայոց Ձորի մարզում՝ Արփա գետի նեղ գետահովիտը, Սյունիքի մարզում՝ Վարարակ գետի հովիտը և սարահարթը, Որոտան, Ողջի, Մեղրի գետերի նեղ գետահովիտները:

Թույլ յուրացված գոտիները ընդգրկում են Կոտայքի, Արարատի մարզերում՝ Արագածի արևմտյան լանջերը, Գեղամա և Ուրցի լեռնաշղթաների ինտենսիվ յուրացված գոտիներին հարող արևմտյան, հարավ-արևմտյան ցածր լանջերը (մինչև 2000 մ), Արմավիրի մարզում՝ Բաղրամյանի տարածաշրջանը, Արագածոտնի մարզում՝ Արագածի հարավային, հարավ-արևելյան, հարավ-արևմտյան ցածր լանջերը, Շիրակի մարզում՝ Շիրակի հարթավայրը հյուսիսից, արևելքից, հարավ-արևելքից երիզող լեռնալանջերը, Լոռվա մարզում՝ սարահարթը և նեղ գետահովիտներին հարող ցածր լեռնալանջերը, Գեղարքունիքի մարզում՝ Վարդենիսի և Սևանի լեռնաշղթաների ցածր լեռնալանջերը, Ճամբարակի տարածաշրջանը, Սյունիքի մարզում՝ Որոտան, Ողջի, Մեղրի գետերի գետահովիտներին հարող ցածր լեռնալանջերը:

Հարկ է նշել, որ տարաբնակեցման համար անբարենպաստ գոտին ընդգրկում է 2000–2100 մ-ից բարձր տարածքները: ՀՀ տարածքի միայն 56.0 %-ն է պիտանի տարաբնակեցման համար, ընդ որում՝ այդ տարածքը տարա-

¹⁶ Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008, էջ 244:

¹⁷ Ռեկրեացիոն և բնապահպանական գոտիներն ընդգրկում են անտառտնտեսության հողերը, հատուկ պահպանվող տարածքները, ռեկրեացիոն գոտիները և օբյեկտները:

բնակեցվել է շատ անհամամասնորեն: Ինտենսիվ յուրացված գոտիները ՀՀ տարածքի 18.2 %-ն են, որտեղ կենտրոնացված է բնակչության 87.7 %-ը, իսկ քաղաքային բնակչության 98.6 %-ը, բնակչության խտությունը մի քանի անգամ գերազանցում է խտության էկոլոգիական շեմային չափանիշները (200 մարդ/կմ²), հիմնականում հասնելով 480–558 մարդ/կմ², բնակավայրերի խտությունը կազմում է 10 համայնք 100 կմ² վրա¹⁸:

Թույլ յուրացված գոտիները կազմում են ՀՀ տարածքի 38.0%-ն են, որտեղ բնակվում է բնակչության ընդամենը 12.3 %-ը, բնակչության խտությունը շատ ցածր է, տատանվում է 11.84 մարդ/կմ², բնակավայրերի խտությունը՝ 3 համայնք.100կմ² վրա:

Հարկ է ընդգծել, որ տարածքների քաղաքաշինական-տնտեսական յուրացվածության մակարդակներն ըստ մարզերի նույնպես խիստ անհամամասնական են. բացի Երևանից, տարաբնակեցված տարածքի ամենամեծ տեսակարար կշիռ ունի Արմավիրի (99.3 %), իսկ ամենափոքրը՝ Սյունիքի (37.3 %) մարզը: Ինտենսիվ յուրացված գոտու ամենամեծ տեսակարար կշիռն ունի Արմավիրի (62.8 %), իսկ ամենափոքրը՝ Տավուշի (5.0 %) մարզը: Թույլ յուրացված գոտու ամենամեծ տեսակարար կշիռն ունի Վայոց Ձորի (57.8 %), իսկ ամենափոքրը՝ Սյունիքի (26 %) մարզը:

Ընդհանուր առմամբ ինտենսիվ յուրացված գոտիների տարածքների տեսակարար կշիռները մարզերի կտրվածքներով տատանվում են 5.0-32.0 %-ի սահմաններում, որտեղ կենտրոնացված են մարզերի բնակչության 50.0-97.0 %-ը¹⁹:

Բնակավայրերի (համայնքների) տեղաբաշխման ամենամեծ խտություն (համայնք/100 կմ²) ունեն Արարատի (15), Գեղարքունիքի (13), ամենացածրը՝ Վայոց Ձորի (5), Շիրակի (6) մարզերի ինտենսիվ յուրացված գոտիները: Թույլ յուրացված գոտիներում ամենափոքր խտություն (համայնք/100 կմ²) ունեն Արարատի (0.4), Գեղարքունիքի (1), Վայոց Ձորի (2) մարզերը:

ՀՀ տարաբնակեցման հիմնական առանցքներից, թերևս, կարևորագույնը ձգվում է արևելք–արևմուտք ուղղությամբ, ընդգրկում է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասը (Երևան քաղաքը, Արմավիրի, Արարատի մարզերի ինտենսիվ յուրացված գոտիները), Երևան քաղաքից ձգվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում է Երևան–Սևան միջպետական նշանակության ավտոմայրուղու երկարությամբ՝ ընդգրկելով Կոտայքի և Արագածոտնի մարզերի ինտենսիվ յուրացված գոտիները, աստիճանաբար նեղանալով մինչև Սևան քաղաքը:

¹⁸ Աղբյուրը՝ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության N 610, 10.04.2003 որոշմամբ, աղբյուրը՝ <http://www.mud.am/maps/tarebnak.pdf>

¹⁹ Աղբյուրը՝ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության N 610, 10.04.2003 որոշմամբ, աղբյուրը՝ <http://www.mud.am/maps/tarebnak.pdf>

Այս առանցքին բնորոշ է քաղաքային բնակավայրերի մեծ թիվը (16 քաղաք, այդ թվում՝ խոշորագույն քաղաք Երևանը, մեծ քաղաքներ՝ Վաղարշապատը, Հրազդանը, Աբովյանը, միջին մեծության 12 քաղաք), նրանց մոտիկ տեղադրվածությունը (նրանց միջև եղած տրանսպորտային մատչելիությունը չի գերազանցում 0.5 ժամը), որը պայմանավորված էր նախկին սոցիալտնտեսական փուլի արտադրական կայուն կապերի առկայությամբ: Ներկայում այդ կապերը խիստ թուլացել են, բայց պահպանվել է բնակչության կենտրոնացված բնույթը: Այդ առանցքի վրա կենտրոնացված է ՀՀ քաղաքային բնակչության 66 %-ը, գյուղական բնակչության 44 %-ը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ծայրամասային մարզերի (Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Շիրակի հյուսիսային տարածաշրջանի, Սևանա լճի արևելյան ափի) քաղաքաշինական-տնտեսական յուրացումն ընթացել է շատ թույլ տեմպերով, անբավարար է քաղաքների միջև, ինչպես նաև գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև փոխկապակցվածությունը: Բացի դրանից, շարունակվում է բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ քաղաքային բնակչության տեսակարար կշռի աճը. 1960 թ. 50.2%-ից 2012 թ. հասել է 64%-ի (ընդ որում 1991 թ. կազմել է 68.9 % և միզրացիոն պրոցեսների հետևանքով իջել է):

Մերկա փուլում տարածական զարգացման քաղաքականությունը, որպես այդպիսին, Հայաստանում դեռևս ամբողջովին ձևավորված չէ և առավելապես հատվածական բնույթ ունի: Սահմանված առանձին նպատակներն ու խնդիրները կամ իրականացվող առանձին ծրագրերն ու միջոցառումները դեռևս լիովին տեղավորված չեն մեկ միասնական հայեցակարգային պատկերում:

Վերջին տարիներին Երևանում տնտեսական կյանքի կենտրոնացման հիմնական պատճառը ներդրումների շարունակական կենտրոնացումն է, հետևաբար տարածքային հավասարաչափ զարգացման մեջ էական դեր պետք է խաղա պետական և մասնավոր ներդրումների վերաուղղումը ՀՀ մյուս քաղաքներ և գյուղական բնակավայրեր:

Մերքին և արտաքին միգրացիոն հոսքերն ազդում են ՀՀ տարածական զարգացման վրա, այդ թվում նաև՝ տարաբնակեցման: Բնական և տնտեսական պայմանների պատճառով Հայաստանի տարաբնակեցման ձևախեղված կառուցվածքին բնորոշ է միակենտրոնությունը. ՀՀ դինամիկ զարգացման գործընթացներում առավելապես ներգրավված են մայրաքաղաքը, մասամբ նաև՝ խոշոր քաղաքները, իսկ փոքր և միջին քաղաքները, գյուղական բնակավայրերը, որոշ բացառություններով, դուրս են մնացել այդ գործընթացներից:

Տարածական զարգացման կենտրոնների համար նպատակահարմար է ստեղծել «Կառուցվածքային հիմնադրամ», որը երաշխիքներ և շուկայականից ցածր տոկոսադրույքներով վարկեր կտրամադրի ձեռնարկատիրության խթանման նպատակով:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածական զարգացումը կարող է հիմնվել գիտելիքահենք տնտեսության վրա, որի առանձնահատկություններից է այն, որ այդպիսի տնտեսությունն ապահովում է երկարատև կայուն զարգացման համար անհրաժեշտ մարդկային կապիտալի կուտակումը և դրա արդյունավետ զարգացումը²⁰: Հենց այս գործոնը կարող է էական դեր ունենալ ՀՀ տարածական զարգացման ծրագրերում, որոնք պետք է հիմնվեն որոշակի մոդելների վրա:

Տարածական զարգացման մոդելները տարբեր հետազոտողներ դիտարկել են տարբեր մոտեցումներով: Այսպես, Դեսմեթի և Ռոսսի Հանսբերգի (Desmet and Rossi-Hansberg, 2009) աշխատանքում ուսումնասիրվել են երկու տարբեր ժամանակահատվածներ ԱՄՆ տնտեսության համար՝ 1900–1920 և 1980–2000, ըստ որոնց արդյունքների ուղիղ կապ է հայտնաբերվել տարածական զարգացման և նորարարությունների միջև. քսաներորդ դարի սկզբի տարածական զարգացման հիմքում, որպես այդ ժամանակահատվածի նորարարություն, եղել է արդյունաբերությունը, իսկ նույն դարի վերջին 20-ամյակի՝ ծառայությունները²¹: Տարածական զարգացման մոդելների՝ Քուահի²², Բուսեկինեի²³ (Quah, 2002, Boucekkine, 2009) կատարած աշխատությունների հիմքում դրվել են ենթադրություններ, թե աշխարհագրական միևնույն տարածքի համար տրանսպորտային ծախսերը բավական փոքր են, և տարածական զարգացումը մեծ չափով պայմանավորված է տրանսպորտային ծախսերի փոքր տեսակարար կշռով:

Ինչպես ցույց են տալիս տարածական զարգացման մեծ փորձ ունեցող եվրամիության երկրների և ԱՄՆ-ի մոդելների ու մեխանիզմների ուսումնասիրությունները, այդ համակարգի գործունեության ապահովման համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ՝ նորարարական մոտեցումներ, բարձր որակավորում ունեցող աշխատուժ, այդ աշխատուժի մասնագիտական վերապատրաստում ապահովող կենտրոնների առկայություն, տրանսպորտային և այլ ենթահամակարգերի մատչելիություն: Այսինքն՝ տնտեսաաշխարհագրական ռեսուրսները և մարդկային կապիտալը դրվում են տարածական զարգացման հիմքում:

²⁰ Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն, հնարավորություններ և մարտահրավերներ, «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2008, էջ 150

²¹ Desmet, K. and Rossi-Hansberg, E., 2009 “Spatial Growth and Industry Age”, *Journal of Economic Theory*, 144, 2477-2502.

²² Quah, D., 2002. .Spatial Agglomeration Dynamics, *American Economic Review*, 92, 247-252.

²³ Boucekkine, R., Camacho, C., and Zou, B., 2009. .Bridging the Gap Between Growth Theory and the New Economic Geography: The Spatial Ramsey Model, *Macroeconomic Dynamics*, 13, 20-45.

Իսկ արդյոք ՀՀ-ում կարո՞ղ են ներդրվել տարածական զարգացման մոտեցումներ, և ի՞նչ է անհրաժեշտ իրականացնել դրա համար: Նախնական պատկերացում ունենալու համար, նախ և առաջ, պետք է ուսումնասիրել ՀՀ մարզերի հիմնական տնտեսական ցուցանիշները, այնուհետև՝ դրանք համադրել տարածական զարգացման սկզբունքներին և դիտարկել կյաստերների ձևավորման հնարավորությունները: Որպես այդպիսի ցուցանիշներ՝ սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ տնտեսական զարգացման տարբեր ծրագրերում գերակայություն ունեցող արդյունաբերությունը, հանքագործական արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Իսկ շինարարության, տրանսպորտի, կապի, առևտրի և ծառայությունների գծով մարզերի ցուցանիշները չեն դիտարկվել, քանի որ դրանք հիմնականում պայմանավորված են Երևան քաղաքին մոտիկությամբ. որքան մարզերը մոտ են մայրաքաղաքին, այնքան այդ ցուցանիշները բարձր են:

Արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության և գյուղատնտեսության ամենապարզ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես այդտեղ են ՀՀ տարածական զարգացման հնարավորությունները: Դրանք առավել մանրամասն դիտարկելու համար ստորև ներկայացվում է նշված բնագավառների ներուժը բնութագրող տնտեսական ցուցանիշներ, որոնց միջոցով իրականացվել է Երևանի և ՀՀ մարզերի համեմատական ուսումնասիրություն:

Երևան քաղաքի և ՀՀ մարզերի մի շարք տնտեսական ցուցանիշները 2011 թ.24 (տոկոսային արտահայտությամբ)

Աղյուսակ 2

	Արդյունաբերություն	Հանքագործական արդյունաբերություն	Գյուղատնտեսություն
Ընդամենը ՀՀ	100	100	100
Երևան	42.4	0.6	0.8
Արագածոտն	2.2	0.5	9.7
Արարատ	8.1	0.6	14.7
Արմավիր	4.2	0.1	17.0
Գեղարքունիք	1.8	3.8	19.2
Լոռի	7.3	4.2	7.2
Կոտայք	10.5	0.4	6.4
Շիրակ	4.3	0.1	11.7
Սյունիք	17.8	89.4	6.3
Վայոց ձոր	0.8	0.1	2.1
Տավուշ	0.6	0.2	4.9

²⁴ ՀՀ ԱՎԾ պաշտոնական հրապարակումներում 2012 թ. ամփոփ տվյալները ներկայացված ցուցանիշների գծով դեռևս չեն հրապարակվել, իսկ նախորդ տարիների ցուցանիշները 2011 թ. ցուցանիշներից էականորեն չեն տարբերվում:

Աղյուսակ 2-ի տվյալների ուսումնասիրությունն իրականացվել է այն սկզբունքով, որ որպես տվյալ մարզի կամ Երևան քաղաքի հարաբերական առավելություն դիտարկվում է այն ցուցանիշը, որը մոտավորապես հավասար է կամ գերազանցում է 10% սահմանագիծը: Այս տեսանկյունից ակնհայտ առավելություն ունեցող Երևան քաղաքի հետ միասին Սյունիքի ու Կոտայքի մարզերն ունեն արդյունաբերական բավական մեծ ներուժ՝ համապատասխանաբար 42.4, 17.8 և 10.5 տոկոս ՀՀ-ում: Արդյունաբերական առումով փոքր չէ նաև Արարատի մարզի տեսակարար կշիռը՝ 8.1%՝ պայմանավորված Արարատի ցեմենտի գործարանով և գյուղատնտեսական արտադրանք վերամշակող մի շարք ձեռնարկություններով, որոնք կենտրոնացած են Արարատ քաղաքում:

Հանքագործական արդյունաբերության բացարձակ առավելություն ունի Սյունիքի մարզը՝ մոտ 90% ամբողջ հանրապետության մասշտաբով, որը պայմանավորված է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատով: Քանի որ մյուս մարզերը և Երևանը հանքագործական արդյունաբերության գծով ունեն նկատելիորեն ցածր ցուցանիշներ, իսկ Սյունիքի մարզը, բացի հանքագործական արդյունաբերությունից, ունի նաև արդյունաբերական մեծ ներուժ, ապա կլաստերի ձևավորման առումով հանքագործական արդյունաբերությունը կարելի է չառանձնացնել արդյունաբերությունից:

Գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշներով առավելություն ունեցող մարզերի ցանկն ավելի ընդգրկում է՝ Արագածոտնի՝ 9.7%, Արարատի՝ 14.7%, Արմավիրի՝ 17.0%, Գեղարքունիքի՝ 19.2% և Շիրակի՝ 11.7% մարզեր: Լոռու մարզն արդյունաբերության և գյուղատնտեսության ցուցանիշներով ունի 7%-ի շրջանակներում տատանվող ցուցանիշներ, իսկ Տավուշի և Վայոց Ձորի տվյալներն ուսումնասիրված ցուցանիշների մասով որևէ առավելություն չունեն: Սակայն պետք է նշել, որ վերջին երեք՝ Լոռու, Տավուշի և Վայոց Ձորի մարզերի համար առավել բնութագրական է հանգստի և զբոսաշրջության կազմակերպումը՝ պայմանավորված բնակլիմայական պայմաններով ու ռեկրեացիոն ռեսուրսներով: Զբոսաշրջության զարգացումը Վայոց Ձորում և Գորիսում ամրագրված է նաև պետական մակարդակով ընդունված մի շարք ծրագրերում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում տարածական զարգացման ծրագրեր կարող են մշակվել որոշակի ուղղություններով՝ ապահովելով հետևյալ տիպի կլաստերների ձևավորում:

1. Արդյունաբերական կլաստեր՝ Երևան քաղաք, Արարատ քաղաք, Սյունիքի (առանց Գորիսի տարածաշրջանի) և Կոտայքի մարզեր:
2. Գյուղատնտեսական կլաստեր՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի մարզեր:

3. Զբոսաշրջային կլաստեր՝ Լոռու, Տավուշի, Վայոց Ձորի մարզեր, Գորիսի տարածաշրջան:

Նշված կլաստերների գործունեության արդյունավետությունը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում կարող են լինել ավելի մեծ, եթե դրանց զուգահեռ գործեն նաև գիտակրթական կլաստերներ: ՀՀ-ում գործող գիտակրթական համակարգը նույնպես կենտրոնացած է Երևան քաղաքում: Մակայն մարզերում առկա են որոշակի ռեսուրսներ, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել և որոնք կարող են դառնալ մարզերի մարդկային կապիտալի զարգացման հիմք՝ նպաստելով վերը նշված կլաստերներին: Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի և ՀՀ մարզերի գիտակրթական որոշ բնութագրիչներ, որոնք տալիս են ընդհանուր պատկերացում:

Աղյուսակ 3

Երևան քաղաքի և ՀՀ մարզերի մի շարք գիտակրթական բնութագրիչներ և այլ ցուցանիշներ, 2012 թ.25


	Բնակչություն հազ. մարդ	Բարձրագույն կրթական հաստատություններ	10.000 բնակչի հաշվով					
			Զբոսվածներ, այդ թվում՝	Գիտական հիմնարկներում	Գիտական սարհման ունեցող	Հաճախումներ		
						Բարձր. կրթակ. հաստատություններ	Միջին և նախն. մասնագ. կրթօջայիներ	Հանրակրթական դպրոցներ
Երևան	1.127.3	51	3290	46	16	703	180	1055
Արագածոտն	142.9	0	3878	25	8	0	23	1390
Արարատ	281.7	0	4793	1	0	0	59	1259
Արմավիր	287.4	2	5059	5	0	11	67	1324
Գեղարքունիք	243.1	2	3563	0	0	75	79	1334
Լոռի	282.2	4	4499	0	0	163	118	1349
Կոտայք	283.5	2	3851	6	1	18	81	1332
Շիրակ	282.3	8	3258	3	1	208	150	1279
Սյունիք	153.0	4	3924	0	0	138	104	1199
Վայոց ձոր	56.1	2	5219	0	0	46	69	1320
Տավուշ	134.8	2	4561	0	0	128	84	1298

²⁵ Աղյուսակը հեղինակը կազմել է՝ օգտագործելով ՀՀ ԱՎԾ հրատարակած «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2012» ժողովածուի և <http://www.armstat.am/am/?nid=50> կայքի տվյալները

Աղյուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս մի շարք կարևոր փաստեր: Նախ, պետք է նշել, որ ամբողջ զբաղվածների մեջ գիտական հիմնարկներում զբաղվածները և դրանցից գիտական աստիճան ունեցողները գերկենտրոնացած են Երևան քաղաքում, ինչը նշանակում է մարզերի գիտական ներուժի՝ գրոհն մոտ ցուցանիշներ, հետևաբար՝ նաև մարզերում գիտելիքահեն տնտեսության ներդրման և նորարարական մոտեցումների զարգացման անբավարար նախադրյալ: Այս առումով մարզերի ամենաբարձր ցուցանիշն ունի Արագածոտնի մարզը՝ 10.000 բնակչի հաշվով 25 զբաղվածներ գիտական հիմնարկներում, որոնցից 8-ը՝ գիտական աստիճանով: Այս ցուցանիշով Արագածոտնի մարզն ունի Երևանի 50%-ին մոտ ցուցանիշ՝ գիտական հիմնարկներում 46 զբաղվածներ, որոնցից 16-ը ունեն գիտական աստիճաններ: Նկատենք, որ մարզում չի գործում որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն, և այդ ցուցանիշները, հավանաբար, պայմանավորված են Բյուրականի աստղադիտարանով: Ուշագրավ է, որ 10.000 բնակչի հաշվով հանրակրթական դպրոց հաճախողների ամենացածր ցուցանիշը՝ 1055 աշակերտ, արձանագրվել է Երևանում, իսկ ամենաբարձրը Արագածոտնի մարզում՝ 1390 աշակերտ կամ Երևանի համեմատ 25%-ով ավելի շատ, այն դեպքում, երբ բարձրագույն կրթական հաստատություններ հաճախողների շարքում նույն 10.000 բնակչի հաշվով Երևանն ունի ամենաբարձր ցուցանիշը՝ 703 ուսանող, իսկ Արագածոտնի մարզի նույն ցուցանիշը կազմում է 0: Այս դեպքում կարելի է ենթադրել, որ այդ մարզի դպրոցների շրջանավարտները սովորում են Երևանում:

Երևանն առաջատար դիրքում է նաև միջին և նախնական մասնագիտական կրթօջախներ հաճախողների տեսակարար կշռով՝ 180 հաճախող, իսկ Արագածոտնի մարզը դարձյալ ունի ամենացածր ցուցանիշը՝ 23: Անհրաժեշտ է նկատել, որ և՛ Արագածոտնի և՛ Արարատի մարզերի համար, ինչպես բարձրագույն կրթական հաստատություններ, այնպես էլ միջին և նախնական մասնագիտական կրթօջախներ հաճախողների տեսակարար կշիռն ամբողջ հանրապետությունում ամենացածրն է, իսկ այս երկու մարզերն ունեն գյուղատնտեսական կլաստերի զարգացման բարձր ցուցանիշներ: Հարկ է նկատել, որ Արագածոտնի մարզը տիպային օրինակ կարող է լինել մարզերում գիտելիքահեն տնտեսության զարգացման առումով. թեպետ տնտեսական ցուցանիշներով այս մարզն ունի գյուղատնտեսական կլաստերի զարգացման նախադրյալներ, սակայն դա չի խոչընդոտում այլ ոլորտում գիտելիքի զարգացմանը և գիտական ցուցանիշներով մարզերի մեջ առաջինը համարվելուն:

Աղյուսակ 3-ի տվյալների հիման վրա տնտեսաչափական եղանակով մարզերի համար գնահատվել է նաև ըստ բնակչության թվի տվյալ մարզում գտնվող բարձրագույն կրթական հաստատություն հաճախող ուսանողների թիվը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1

Տվյալ մարզի բարձրագույն կրթական հաստատություններ հաճախող ուսանողների բաշխվածությունն ըստ բնակչության թվի

Գնահատում իրականացնելու նպատակով կազմվել է գծային ռեգրեսիոն հավասարում, որն աղյուսակ 3-ի տվյալներով ունի հետևյալ տեսքը՝ $y=22.85+0.79x$, որտեղ կորելյացիայի գծային գործակիցն է $r_{xy}=0.41$, ինչը նշանակում է, որ կապը չափավոր է: Այսինքն՝ ըստ մարզերի բնակչության գործում է տվյալ մարզում գտնվող բարձրագույն կրթական հաստատություն հաճախելու նախընտրելիության միջինին մոտ համամասնություն: Ամենամեծ շեղումներն արձանագրվել են Արագածոտնի և Արարատի մարզերում, որտեղ չկան բարձրագույն կրթական հաստատություններ, ինչպես նաև Շիրակի մարզում, որտեղ միջին և նախնական մասնագիտական կրթօջախ հաճախելու ցուցանիշը Երևանից հետո ամենաբարձրն է (տես՝ աղյուսակ 3):

Միջին և նախնական մասնագիտական կրթօջախ հաճախողների ցուցանիշը մարզերի մեծ մասում ավելի բարձր է բարձրագույն ուսումնական հաստատություն հաճախողների քանակից, ինչը նշանակում է, որ բնակչության շրջանում կարևորվում է միջին մասնագիտական կրթությունը: Հետևաբար, կլաստերների մշակման ծրագրերում պետք է ուշադրություն դարձնել այնպիսի ապրանքների կամ ծառայությունների թողարկմանը, որոնք կարելի է արտադրել միջին մասնագիտական կրթության որակավորումների շրջանակում: Այս դեպքում կարևոր նշանակություն է ձեռք բերում ձեռագործական ապրանքների արտադրությունը, որը հնարավոր է իրականացնել տնային պայմաններում, և որի համար մեծ կապիտալ ներդրումներ չեն պահանջվում:

ՀՀ տարածքային կառավարման մարմինները չունեն լայն հնարավորություններ և ռեսուրսներ իրականացնելու մարզերի զարգացման տնտեսական ծրագիր: Այս դեպքում կարևորվում է տարածական զարգացման սկզբունքների ներդրումը, որը կարող է դառնալ մեր հանրապետության տարածքների սոցիալտնտեսական ցուցանիշների բարելավման կարևոր պայման: Դա ենթադրում է որոշակի տարածքի զարգացմանը նպաստող բոլոր ռեսուրսների համալիր օգտագործում՝ տարածքները չդիտարկելով վարչական սահմանների համատեքստում: Այսինքն՝ տնտեսաաշխարհագրական ռեսուրսները և մարդկային կապիտալը դրվում են տարածական զարգացման հիմքում: Սակայն դրա համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ, որոնք վերաբերում են տվյալ տարածքի սուբյեկտների միջև համագործակցության սկզբունքներին և շահերին:

Տարածական զարգացման ծրագրերի մշակման համատեքստում կարևորվում է կլաստերների ձևավորումը: Ըստ ուսումնասիրությունների՝ մեր հանրապետության մարզերում և Երևան քաղաքում կարելի է ձևավորել չորս տիպի կլաստերներ՝ գյուղատնտեսական, արդյունաբերական, զբոսաշրջային և կրթական: Թեպետ Երևան քաղաքի համար կան կրթական կլաստերի ձևավորման բոլոր հիմքերը, այնուամենայնիվ, Արագածոտնի մարզի օրինակը, երբ զարգացման գյուղատնտեսական ռեսուրսներ ունեցող մարզը Երևանից հետո առաջինն է գիտական ցուցանիշներով, ինչպես նաև այն հանգամանքը, որ բոլոր մարզերի բնակչությունը միջինին մոտ համամասնությամբ հաճախում է հենց մարզերում գործող բարձրագույն կրթական հաստատություններ, ցույց են տալիս, որ մարզերում կա հնարավորություն բարձրագույն կրթության միջոցով զարգացնելու մարդկային կապիտալը և գիտելիքահեն տնտեսությունը, որոնք կարևոր պայմաններ են տարածական զարգացման ծրագրեր մշակելու համար:

Դրան զուգահեռ մարզերում մեծ է նաև միջին և նախնական մասնագիտական կրթօջախ հաճախողների ցուցանիշը, որոնց շրջանակներում շտրվող որակավորումները կարող են նպաստել կլաստերների զարգացման համար անհրաժեշտ մասնագետների պատրաստմանը, ինչպես նաև տնային տնտեսություններում ձեռագործական ապրանքների արտադրությանը:

Տնտեսագիտության հայտնի «ռեսուրսների սահմանափակության» խնդիրը անընդհատ նոր պահանջներ է առաջադրում տնտեսագիտությանը, և ձևավորվող նոր դպրոցներն և ուղղություններն այս խնդրի լուծման սեփական մոտեցումն են առաջ քաշում: Այս առումով, ռեսուրսների սահմանափակության խնդիրը զգալիորեն նպաստել է կրեատիվ տնտեսության ձևավորման անհրաժեշտության գիտակցմանը²⁶, քանի որ հիմնվում է անսահմանափակ ռեսուրսի՝ մտավոր կապիտալի վրա: Մարդու մտավոր-ստեղծագործական հնարավորություններն անսպառ ռեսուրս են, աճող ազդեցություն ունեն տնտեսական գործընթացների վրա: Ուստի այդ ռեսուրսի վրա հիմնված արտադրությունը կարելի է համարել «կրեատիվ արդյունաբերություն», իսկ այդպիսի արդյունաբերություն ունեցող տնտեսությունը՝ «կրեատիվ տնտեսություն»:

Կրեատիվ արդյունաբերությունը ապրանքների և ծառայությունների արտադրության և տեղաբաշխման պարբերաշրջանների ամբողջությունն է՝ հիմնված ստեղծարարության և մտավոր կապիտալի վրա: Գիտության և նորագույն տեխնոլոգիաների հետ մեկտեղ կրեատիվ արդյունաբերությունը որպես անկյունաքար է ծառայում կրեատիվ և գիտելիքի տնտեսության համար: Կրեատիվ կամ ստեղծարար արդյունաբերությունը (creative industries) ժամանակակից տնտեսության գլխավոր հատվածներից է, որին վերագրվում են կինոն, երաժշտությունը, կերպարվեստը, կատարողական արվեստը, թանգարանային բիզնեսը, նորաձևությունը, հրատարակչական գործը, գովազդը, ձևավորումը, ճշգրիտ ճարտարագիտությունը, համակարգչային տեխնոլոգիաները, մշակութային զբոսաշրջությունը և այլն:

Ամերիկացի սոցիոլոգներ Ջ. Հոկինսը (Howkins, 2001) և Ռ. Ֆլորիդան²⁷ (Florida, 2002) իրենց աշխատություններում առաջինն են անդրադարձել կրեատիվ տնտեսությանը: Նրանք ուշադրություն են դարձրել տնտեսության զարգացման վրա գիտնականների, արվեստագետների, տաղանդավոր մարդկանց ազդեցությանը, որոնք օժտված են ստեղծարար մտածողությամբ, ընդունակ են ծնելու օրիգինալ, ոչ ավանդական գաղափարներ:

Ռ. Ֆլորիդան կարծում է, որ ժամանակակից տնտեսությունում գլխավոր շարժիչ ուժը կրեատիվ լինելն է, այսինքն՝ ձեռնարկության ընդունակու-

²⁶ Клоудова Й., (Братиславский юридический институт, Братислава), Влияние развития креативной экономики на экономически отсталые регионы, «Вопросы экономической политики», 2009. Режим доступа: <http://www.econorus.org/repec/journal/2010-5-110-125r.pdf>

²⁷ Флорида Р., Креативный класс: люди, которые меняют будущее. – М.: Классика-XXI, 2005.

թյունը տեղեկատվության և գիտելիքների հիման վրա ստեղծել նոր արդյունք, կամ արտադրվող արդյունքին տալ նոր ձև, որը կապահովի արտադրողին մրցակցային առավելություններ²⁸: Այսինքն՝ ստեղծագործական մոտեցումը հաջողության երաշխիքն է յուրաքանչյուր գործունեության մեջ: Եվ ժամանակակից ապրանքների և ծառայությունների ավելացված արժեքի մեծ մասը հենց նորամուծական բաղադրիչն է:

Կրեատիվ արդյունաբերությունը ժամանակակից քաղաքներում դարձել է ազդեցիկ գործիք, որը շատ արագ փոխում է քաղաքների պատկերը, մարդկանց կյանքի որակը, նպաստում տարածքի սոցիալոնտեսական զարգացմանը²⁹: Այսինքն՝ քաղաքների զարգացման նոր մոտեցումը պահանջում է այնպիսի քաղաքականության իրականացում, որը կապահովի մարդկային ռեսուրսների ներգրավում և պահպանում: Այսօր արդիական են ոչ թե զանգվածային աշխատատեղերը, այլ գրավիչ, ստեղծագործ, ժամանակակից քաղաքացուն հարմար անհատական աշխատատեղերը:

Նեղ իմաստով՝ կրեատիվ արտադրության հիմնարար ռեսուրսը տեղեկատվությունն է, ավելի լայն իմաստով՝ տեղեկատվությունը և գիտելիքը: Կրեատիվ արտադրության միավոր կարելի է համարել կրեատիվ կլաստերները³⁰: «Կրեատիվ կլաստերը հատուկ վայր է մի քանի ձեռնարկությունների» կազմակերպությունների, արտադրամասերի կամ գրասենյակների, որոնք խմբավորված են միևնույն տարածության մեջ և զբաղվում են ստեղծարար արտադրական գործունեությամբ: Կրեատիվ կլաստերների առանձնահատուկ գիծը ստեղծարարության և գործարարության ընդհանուր մթնոլորտն է, որը նպաստում է ստեղծարար արդյունքի արտադրությանը³¹:

Երևանի կրեատիվ արդյունաբերությունը

Երևանը հանրապետության խոշորագույն տնտեսական և արդյունաբերական կենտրոնն է: Երևանում է կենտրոնացած հանրապետության բնակչության շուրջ 35%-ը: 2012 թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի 40,2%-ը բաժին է ընկել Երևանին: Այստեղ է կենտրոնացած հանրապետության մտավոր, մարդկային, տնտեսական և գիտատեխնիկական

²⁸ Стариков А.А., «Дизайн и конкурентноспособность промышленности», Архитектон: известия вузов, №19, сентябрь 2007 г., [Электронный ресурс] // Режим доступа: http://archvuz.ru/2007_3/8

²⁹ Хакимова Е.Р., «Креативные индустрии как сектор новой экономики», Международный информационно-аналитический журнал «Креативная экономика и социальные инновации», №1(1) 2011 г., стр. 20.

³⁰ Хакимова Е.Р., «Креативные индустрии как сектор новой экономики», Международный информационно-аналитический журнал «Креативная экономика и социальные инновации», №1(1) 2011 г., стр. 22.

³¹ Гончарик Алексей, Политика в области творческих индустрий: зарубежный опыт и российские реалии [Электронный ресурс] // Режим доступа:

http://www.creativeindustries.ru/rus/publications/creative_industries_politics

ներուծի զգալի մասը: Այսպես, 2012 թ. Երևանի գիտատեխնիկական աշխատանքների ծավալի բաժինը հանրապետության գիտատեխնիկական աշխատանքների ծավալի մեջ կազմել է 93%³²:

Հանրապետությունում գիտատեխնիկական աշխատանքներ ու մշակումներ իրականացնող աշխատողների քանակը 2012 թ. տարեվերջին կազմել է 5598 մարդ, որից 4885-ը՝ Երևանում: Մայրաքաղաքում գիտատեխնիկական աշխատանք ու մշակումներ իրականացնող աշխատողների շուրջ 48,5 %-ը կանայք են:

Երևանի գիտական ու կրթական ոլորտները բնութագրող ցուցանիշներ, 2012 թ.

Աղյուսակ 4³³

	<i>Բացարձակ մեծություն</i>	<i>Տեսակարար կշիռը հանրապետությունում, %</i>
Մշտական բնակչությունը, որից տնտեսապես ակտիվ բնակչությունը	1 127 300	34.4
գրավվածներ	477 200	33.1
ԳՏ աշխատանքներում գրավվածներ	333 300	28.4
Կրթական հաստատություններ, որոնցից բուհեր	4885	87.3
ԳՏ կազմակերպություններ	610	72
	53	81
	62	86.1


Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակը հանրապետությունում 72 է, որից 62-ը գտնվում են Երևանում:

Այս ամենն անմիջական և ուղղակի վկայությունն է հանրապետության տնտեսության զարգացման գործում Երևանի ունեցած մեծ դերակատարության: Երկրի տնտեսության մի շարք ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի աղբյուրի բաժինն ապահովում է Երևանը: Այսինքն՝ առկա է էական խզում Երևանի և հանրապետության մյուս տարածքների ու մարզերի զարգացման մակարդակների միջև:

Երևանի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության տնտեսության մեջ ներկայացված է գծապատկեր 2-ում:

³² «Հայաստանի Հանրապետության մարզերն ու Երևան քաղաքը թվերով 2012», Վիճակագրական ժողովածու, http://armstat.am/file/article/marz_12_23.pdf

³³ «Հայաստանի Հանրապետության մարզերն ու Երևան քաղաքը թվերով 2012, Վիճակագրական ժողովածու http://armstat.am/file/article/marz_12_35.pdf



Գծապատկեր 2³⁴


Երևանի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները՝ ՀՀ տնտեսության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում 2011 թ.

Սակայն, այս ամենով հանդերձ, պետք է արձանագրել, որ Երևանն իր գիտատեխնիկական և ինտելեկտուալ ներուժը լիարժեք չի իրացնում: Նախ, Երևանի արդյունաբերության բաժինը հանրապետության արդյունաբերական արտադրանքի մեջ վերջին տարիներին անընդհատ նվազել է՝ 2001 թ. 49.1%-ից 2012թ. հասել է՝ 40.2%, սակայն սա չի նշանակում, թե վկայում, որ մեծացել է մյուս մարզերի արդյունաբերության տեսակարար կշիռը. պարզապես երկրի ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության տեսակարար կշռի շարունակական նվազման պայմաններում նվազման առյուծի բաժինը ընկել է հենց Երևանին. 2001 թ.՝ 20.2% , իսկ 2011 թ.՝ 15%:

Երկրորդ, ինչպես և հանրապետությունում ընդհանրապես, Երևանում առավել ընդգծված ձևով արդյունաբերության մասնաբաժնի նվազումը ուղեկցվել է շինարարության մասնաբաժնի ավելացմամբ, ինչը նշանակում է, որ, նախ, աճի այդ տեմպերի երկարատև պահպանումը հնարավոր չէ, բացի դրանից շինարարությունն այն ճյուղն է, որն առավել պահպանողականություն է ցուցաբերում գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների ներդրման հարցում:

³⁴ «Հայաստանի Հանրապետության մարզերն ու Երան քաղաքը թվերով 2012», Վիճակագրական ժողովածու, <http://armstat.am/am/?nid=82&id=1392>

Եվ, վերջապես, Երևանի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի առավել խորքային ուսումնասիրության պարագայում պարզ է դառնում, թե որքան փոքր է մտավոր ռեսուրսի վրա հիմնված արտադրությունների՝ (որոնց կարելի է բնորոշել որպես կրեատիվ արդյունաբերություն) մասնաբաժինը մայրաքաղաքի արդյունաբերական արտադրության մեջ:



Գծապատկեր 3 | Երևանի արդյունաբերության կառուցվածքը³⁵

Ինչպես տեսնում ենք, մայրաքաղաքի արդյունաբերության կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ապահովում է մշակող արդյունաբերությունը՝ 80.6%, միայն որի մեջ էլ, ըստ տրամաբանության, կարող են ներառված լինել գիտելիքի վրա հիմնված արտադրությունները:

Սակայն մշակող արդյունաբերության ծանրակշիռ մասն ապահովում են այնպիսի արտադրություններ, որոնց մեջ նույնպես գիտատար արտադրանքն, ըստ էության, բացակայում է. դրանք են սննդի, խմիչքի, ծխախոտի արտադրությունը, որոնք միասին կազմում են մայրաքաղաքի մշակող արդյունաբերության շուրջ 60.0%-ը: Իսկ մշակող արդյունաբերության այն ուղղությունները, որոնք իրենց գործունեության մեջ կարող են որոշակիորեն առնչվել կրեատիվ արդյունաբերությանը (դեղագործական, քիմիական, համակարգչային, էլեկտրոնային, օպտիկական սարքավորումների արտադրությունը, մեքենաների և սարքավորումների արտադրություն և այլն) Երևանի մշակող արդյունաբերության մեջ չնչին տեսակարար կշիռ ունեն՝ գումարա-

³⁵ «Հայաստանի Հանրապետության մարզերն ու Երևան քաղաքը թվերով 2012», Վիճակագրական ծողովածու, http://armstat.am/file/article/marz_12_10.pdf

յին 5.3%, կամ 17.5 մլրդ դրամ, և չեն կարող շոշափելի արդյունավետություն ունենալ:

Այսինքն՝ Երևանը «կրեատիվ արդյունաբերության» կետային և նոսր բաշխվածություն ունեցող տարածք է, որի սոցիալատնտեսական զարգացման խնդիրների լուծումը պայմանավորել կրեատիվ արդյունաբերության զարգացման հնարավորություններով՝ դեռ վաղ է:

Ուստի, ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը հայտարարել է գիտալիքահենք տնտեսություն կառուցելու երկարաժամկետ ռազմավարական նպատակի մասին, ըստ որի Հայաստանը պետք է դառնա բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է: Այս տեսլականի իրագործումը պահանջում է աստիճանական անցում ռեսուրսահնտեսիվ արտադրություններից դեպի ունակությունների և հմտությունների, այնուհետև՝ գիտելիքի վրա հիմնված արտադրությունների գերակշիռ դերակատարության երկարաժամկետ հեռանկարում³⁶:

Տեղեկարվական տեխնոլոգիաների (SS) ոլորտ

Հայաստանում 2012 թ. տեղեկատվական և հեռահաղորդակցության (ՏՀՏ) ոլորտում գործունեություն իրականացնող 360 ընկերություններից 325-ը կամ շուրջ 90%-ը տեղակայված են Երևանում³⁷: Այդ ընկերությունների շուրջ կեսը զբաղվում է համակարգչային տեխնիկայի և պարագաների ներմուծմամբ և վաճառքով, իսկ ոլորտի տարեկան շրջանառությունը 225.0 մլն ԱՄՆ դոլար է 2012 թ. տվյալներով³⁸: Իհարկե, ներմուծող ընկերությունների մի մասն իրականացնում է նաև ներմուծված պարագաներից համակարգիչների հավաքման գործունեություն՝ կամ, այսպես կոչված՝ «համակարգիչների արտադրություն»: Մակայն նրանց հիմնական գործունեությունը համակարգիչների և սարքավորումների ներմուծումն ու վաճառքն է, և համակարգիչների հավաքման գործունեությունից ստեղծվող ավելացված արժեքը մեծ չէ՝ նույնիսկ եթե այն վերագրենք կրեատիվ արտադրությանը:

Երևանի SS ընկերությունների մյուս կեսն արտահանում է արտադրանք կամ ծառայություններ, ընդ որում արտահանում են հիմնականում համակարգչային ծրագրեր, ծրագրային լուծումներ և վեբկայքեր: Արտահանվող մյուս արտադրանքներն ու ծառայությունները փոքր տոկոս են կազմում:

³⁶ Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, 2011թ.

³⁷ Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն, Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ, 2012թ.

³⁸ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, «Հայաստանի ՏՀՏ ոլորտի հետազոտության հաշվետվություն 2012», <http://www.mineconomy.am/uploads/State-of-Industry-Report-2012-EDITED-ARM.pdf>

Ըստ «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամի հետազոտությունների՝ վերջին 3-4 տարիների ընթացքում ՏՏ ոլորտում նոր ստեղծվող ընկերությունների 60%-ի հիմնական գործունեությունը սեփական արտադրանքի կամ ծառայության մշակումն է, ինչը վկայում է Հայաստանի ՏՀՏ ոլորտում նորարարության աճող դերի մասին:

ՏՏ ոլորտի արտադրանքի արտահանման շուկայում շարունակում են գերիշխել արտասահմանյան ընկերությունները, որոնց բաժինը 83% է: Ծրագրային ապահովում և ծառայություններ ոլորտի խոշոր ձեռնարկությունները արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են, որոնք գրեթե լիովին արտահանում են իրենց արտադրանքը: Բացի դրանից, տեղական շատ ընկերություններ նույնպես արտահանում են իրենց արտադրանքի և ծառայությունների զգալի մասը: Ոլորտի արտահանման առավելագույն մասը՝ մոտ 54%-ը, ուղղվում է ԱՄՆ և Կանադա, 31%-ը՝ Եվրոպա, երրորդ տեղում են Ռուսաստանն ու ԱՊՀ մյուս երկրները՝ 6%³⁹:

Միկրոսխեմաների նախագծման ոլորտում մասնագիտացող արտասահմանյան ընկերությունները Հայաստանում հիմնում են նաև գիտահետազոտական կենտրոններ՝ օգտվելով տեղի շտրիպի և ստեղծագործ մասնագետների ու համեմատաբար ցածր աշխատավարձերի առավելություններից և իրականացնում⁴⁰:

- ծրագրեր, որոնք օժանդակում են տարբեր ոլորտներում նորարարական ՏՏ լուծումների ներդրմանը,
- մրցույթներ, որոնք խթանում են մասնագետներին՝ կիրառելու իրենց երևակայությունը ու ստեղծագործական ունակությունները նորարարական տեխնոլոգիական ծրագրերի ստեղծման համար,
- դասընթացներ, որոնք նպաստում են որակյալ աշխատուժի մասնագիտական զարգացմանն ու մրցունակության բարձրացմանը,
- ռեսուրսների և ենթակառուցվածքի տրամադրում ՏՏ ոլորտի սկսնակ ընկերություններին, մասնագետներին և ուսանողներին՝ ստեղծելով հնարավորություն օգտվելու նորագույն գործիքներից ու տեխնոլոգիաներից:

Ոլորտի զարգացման նպատակով 2012 թ. Երևանում ստեղծվել է առաջին՝ ՄԱՐՍ ազատ տնտեսական գոտին (ԱՏԳ): Ազատ տնտեսական գոտու ստեղծման հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով նպաստել արտահանման ծավալների աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանը և ապահովել կայուն տնտեսական զարգացում:

³⁹ Աղբյուրը՝ <http://news.uite.org/am/industry-representatives/?n=224>

⁴⁰ Աղբյուրը՝ <http://uite.org/hy/%D5>

Ընդհանուր առմամբ, Երևանի տարածքում գործում են երկու ազատ տնտեսական գոտիներ՝ «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ, որոնք ունեն բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝ էլեկտրոնիկայի, ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և բիոտեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության (տվյալների/ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներում: Ազատ տնտեսական գոտու շահագործողներն ազատված են շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի և մաքսատուրքի վճարման պարտավորություններից:

Ղեղագործություն և միջուկային բժշկության ոլորտ

Հայաստանում տեղական արտադրության ղեղամիջոցներն ապահովում են ներքին շուկայի պահանջարկի շուրջ 10%-ը, նախկին՝ 5-7%-ի փոխարեն⁴¹: Հանրապետությունում ղեղամիջոցների արտադրության լիցենզիա ունեցող 17 ընկերություններից Երևանում գործում են 13-ը: Արտադրության և իրացման ամենամեծ ծավալներն ապահովում են 7 դեղագործական ընկերություն, իսկ 5 ընկերություն զբաղվում են նաև փորձագիտությամբ: Երևանը ապահովում է հանրապետության դեղագործական արտադրանքի արտադրության 75%, արտահանման ծավալների՝ 85%, իսկ ոլորտում զբաղվածների շուրջ 80%-ը: Երևանի դեղագործական արտադրանքի ծավալների շուրջ 62%-ն արտահանվում է: Արտահանման հիմնական շուկան ԱՊՀ երկրներն են՝ 38-40%, Եվրամիության երկրներ 10%, մնացածը՝ այլ երկրներ: 2013 թ. առաջին 9 ամիսների արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է շուրջ 65%-ով, որը պայմանավորված է 2013 թվականի հունվարի 1-ից ոլորտի արտադրանքի նկատմամբ ՀՀ կառավարության՝ եվրոպական GMP (Good Manufacturing Practice) ստանդարտներին անցնելու մասին որոշմամբ: Այդ ստանդարտներն են կիրառում նաև Ռուսաստանը, Ուկրաինան, ինչպես նաև այն բոլոր երկրները, որոնք ներկրում են հայկական ղեղամիջոցները: Երեք ընկերություններ՝ Ֆարմատեկը, Լիկվորը և Արքիմեդը մինչև տարեվերջ կավարտեն անցումը GMP ստանդարտներին, իսկ մնացած ընկերությունները ներկայացրել են անցման ժամանակացույցները:

Երևան քաղաքի դեղագործության ոլորտի առաջատարներից մեկը Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Լ. Մնջոյանի անվ. նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտն է, որը հիմնադրվել է 1995թ. և գործունեության հիմնական ոլորտներն են սրտանոթային համակարգի հիվանդությունների, չարորակ ուռուցքների, նյարդահոգեկան

⁴¹ Աղբյուրը՝ <http://www.organik.com/news/view/19681.html>

խանգարումների և վարակիչ հիվանդությունների դեմ բուժական և կանխարգելիչ դեղամիջոցների, վիրաբուժության մեջ կիրառվող դեղամիջոցների մշակում և արտադրություն: Ընդ որում, ինստիտուտը միակն է հանրապետության դեղարտադրող ընկերությունների մեջ, որն օգտագործում է տեղական հումքը: Ինստիտուտն ունի ավելի քան 14-15 պրեպարատային մշակումներ, որոնք GMP ստանդարտի պատճառով դեռևս չեն առևտրայնացվել⁴²:

Միջուկային բժշկության ոլորտում Երևանը իրական հնարավորություն ունի դառնալու տարածաշրջանում առաջատարը՝ շնորհիվ Ազգային մրցունակության հիմնադրամի՝ Հայաստանի Ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ստեղծման ծրագրի (ՀՈՒԳԿ): ՀՈՒԳԿ-ը բաղկացած է Հայաստանի առաջին ուռուցքաբանության կլինիկայից, որի շինարարությունն արդեն ավարտվել է և նախատեսվում է գործարկել 2014 թ. հունվարի 1-ից: Այն հազեցած կլինիկա քաղցկեղի բուժման համար անհրաժեշտ պոզիտրոնային ճառագայթային /էմիսիոն/ տոմոգրաֆիայի (PET) ժամանակակից ախտորոշիչ սարքով՝ պետությանը պատկանող ցիկլոտրոնի միջոցով ինտեգրված վիրահատական միջամտություններին աջակցելու և պոզիտրոնային ճառագայթային տոմոգրաֆիայի համար անհրաժեշտ ռադիոիզոտոպներ մատակարարելու նպատակով: ՀՈՒԳԿ-ի ստեղծման ծրագիրը բաղկացած է երեք փուլից.

- ռադիոիզոտոպների արտադրության և մոլեկուլյար ախտորոշման կենտրոնի ստեղծում,
- ճառագայթային թերապիայի կենտրոնի ստեղծում,
- քիմիաթերապիայի և վիրաբուժական ուռուցքաբանական կենտրոնի ստեղծում:

ՀՀ կառավարության և ամերիկյան «Գլոբալ Մեդիքլ Սոլյուշնս» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրված համաձայնագրի համաձայն՝ ռադիոիզոտոպների արտադրության, ռադիոդեղագործության և մոլեկուլյար ախտորոշման կենտրոնի կառավարումը կիրականացնի վերջինիս⁴³: Կենտրոնը կունենա առնվազն 150 բժշկական մահճակալ և համալրված կլինիկա բնագավառում առկա ժամանակակից ախտորոշիչ և բուժական սարքավորումներով: Կենտրոնում կաշխատեն շուրջ 200 բժշկական և սպասարկող անձնակազմ:

Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնը կարտադրի ուռուցքային հիվանդությունների ախտորոշման և քաղցկեղի բուժման համար անհրաժեշտ միջուկային իզոտոպեր, ինչ, միևնույն ժամանակ, կմեծացնի այլ

⁴² Աղբյուրը՝ <http://www.sci.am/resorgs.php?oid=14&langid=2>

⁴³ «Գլոբալ Մեդիքլ Սոլյուշնս» ընկերությունը մասնագիտացված է միջուկային բժշկության բնագավառում և գործունեություն է ծավալում աշխարհի մի շարք երկրներում, ադ թվում՝ Ավստրալիա, Նոր Զելանդիա, Թաիլանդ, Չինաստան, Բրազիլիա և այլն:

կլինիկաների կարողությունները այդ բնագավառներում բարձրորակ բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով: Իհարկե, սրա հիմքում ընկած է ցիկլիտրոնի ձեռքբերումը, որը կարտադրի անհրաժեշտ իզոտոպները: Ռադիոիզոտոպների արտադրության և մոլեկուլյար ախտորոշման կենտրոնը, որպես Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի մաս, նպատակ ունի հիմնելու միջուկային բժշկության միջազգայնորեն հավաստագրված ծառայությունների համալիր և ուղի հարթելու քաղցկեղի բուժման հեղափոխական զարգացման համար:

Երկրորդ փուլում, ապահովելով կապիտալացում հետագա գործարար հնարավորություններից, ՀՈՒԳԿ-ը կարող է դառնալ քաղցկեղի բուժման հաստատությունների խումբ, որոնք կտրամադրեն մասնագիտացված ծառայություններ, օրինակ՝ քաղցկեղի վիրաբուժական միջամտություններ և քաղցկեղով հիվանդ երեխաների բուժում: ՀՈՒԳԿ-ի ծառայությունների շրջանակի ընդլայնումը կարող է ներգրավել հիվանդներ այլ երկրներից:

Ի վերջո, ՀՈՒԳԿ-ը կարող է դառնալ միջազգային ճանաչում և համբավ վայելող քաղցկեղի բուժման «քաղաք», որտեղ հիվանդներին կմատուցվեն այնպիսի բարդ ուռուցքաբանական ծառայություններ, ինչպիսիք են պոզիտրոնաթերապիան կամ անհատականացված բուժման կենտրոնները: ՀՈՒԳԿ-ը կդառնա առաջնակարգ վայր տարբեր երկրների այն հիվանդների համար, որոնք փնտրում են ուռուցքային հիվանդությունների ախտորոշման և բուժման բարձրակարգ հաստատություն:

Այն պետք է լինի Հայաստանում ուռուցքային հիվանդությունների բուժման և կանխարգելման՝ ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած կենտրոն, որը կմատուցի միջուկային ախտորոշման, ճառագայթային բժշկության, քիմիաթերապիայի և վիրաբուժության ներհիվանդանոցային և արտահիվանդանոցային համալիր ծառայություններ⁴⁴:

Ժամացույցի արտադրություն

Երևանը ունեցել է ժամացույցի արտադրության բավական լուրջ ավանդույթներ: 1980-ական թթ. Երևանի ժամացույցի երկու գործարանները տարեկան արտադրել են 4-5 մլն ժամացույց, որից միայն ոսկե ժամացույցները՝ շուրջ 50 հազ. հատ: Այսօր Երևանում 5 ընկերություններ զբաղվում են ժամացույցի արտադրությամբ, որոնցում զբաղված է 113 մարդ⁴⁵:

2011 թ. արտահանվել է մոտ 8 մլն դոլարի ժամացույց (ժամացույցի բաղադրիչ): Ժամացույցների 85%-ը արտահանվել է ԱՄՆ: Հայկական ժամացույցներն արտահանվում են նաև Ուզբեկստան (ընդհանուրի 7%), Թուրքմենստան (ընդհանուրի 5%), այլ երկրներ: Բացի դրանից՝ Հայաստանը ժամա-

⁴⁴ Աղբյուրը՝ <http://www.gov.am/am/news/item/10794/>

⁴⁵ Աղբյուրը՝ <http://umba.am/hy/topic.php?id=21198>

ցույցի բաղադրիչներ է արտահանում Շվեյցարիա: Ժամացույցի հիմնական արտադրողներն են՝ «Երևանի ոսկերչական գործարան-1 Գնումներ», AWI, «Այ-Ջի-Օու-Ար» ընկերությունները, Frank Muller-ի Հայաստանի ներկայացուցչությունը: Հայաստանում արտադրվածները հիմնականում դասվում են թանկարժեք ժամացույցների դասին: Իրացման նոր շուկաների առկայությունը նշված ընկերություններին հնարավորություն կտա էականորեն ավելացնելու արտադրության ծավալները:

Ճշգրիտ ճարտարագիտություն


Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտը բնորոշվում է որպես բարձր ճշգրտությամբ կամ գիտատարության բարձր մակարդակով բնորոշվող օպտիկական, էլեկտրոնային, մեխանիկական և մեքենաշինական արտադրանքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների համախումբ: Հայաստանում ոլորտը հիմնականում արտադրում է՝ չափիչ և ստուգող սարքավորումներ, ջերմակարգավորիչ սարքեր, բժշկական և արդյունաբերական նշանակության, գերկարծր և բարձր ճշգրտության գործիքներ, ինչպես նաև էլեկտրատեխնիկական սարքավորումներ:

Ոլորտում գործունեություն է ծավալում 54 ընկերություն, որոնց շուրջ 70% գործում է Երևանում: Ոլորտի տարեկան շրջանառությունը մոտ 40 մլն դոլար է, որից Երևանն ապահովում է շուրջ 85%-ը, կամ 33.5 մլն դոլարը: Երևանի ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի արտադրանքի արտահանման ծավալները 15-17 մլն դոլար է, զբաղված է շուրջ 3200 մարդ, որից ճարտարագետներն ու գիտաշխատողները՝ 1650⁴⁶:

Մայրաքաղաքի ճարտարագիտական ընկերությունները հիմնականում զբաղված են էներգետիկայի, ջրային տնտեսության և հեռահաղորդակցության ոլորտներում: Քաղաքի տնտեսության մնացած ճյուղերում զբաղված ճարտարագիտական ընկերությունների քանակը փոքր է:

Թեև ճշգրիտ ճարտարագիտության ոլորտը ՀՀ կառավարությունը սահմանել է որպես գերակա, մշակվել է 2011-2020 թթ. ոլորտի զարգացման ռազմավարությունը և իրականացվել են որոշակի քայլեր, այնուամենայնիվ, պետք է նշել, որ առայժմ ոլորտի զարգացման տեմպերը բավարար համարել չի կարելի: Ոլորտը շարունակում է սպասարկել հիմնականում ներքին և մասնակիորեն ԱՊՀ ու ռուսական շուկաները՝ իր ավանդական սարքաշինական, գործիքաշինական և հաստոցաշինական արտադրանքով:

⁴⁶ «Ճշգրիտ ճարտարագիտություն», ոլորտային ռազմավարություն 2011-2020թթ., Զարգացման Հայկական գործակալություն, www.ada.am/files/937/documents/precision.pdf



Գծապատկեր 4⁴⁷

Երևանի ճարտարագիտական ընկերությունների բաշխումն ըստ մասնագիտացման ոլորտների

Պետք է նշել, որ որոշ նախապայմանների պարագայում Երևանը իրոք կարող է հավակնել դառնալու ճշգրիտ ճարտարագիտության կենտրոն: Դրա համար առկա են լուրջ ներքին նախադրյալներ՝ Խորհրդային Միությունից հարուստ գիտատեխնիկական ժառանգություն, ձևավորված արտադրական և ենթակառուցվածքային բազա, նախկին ԽՍՀՄ երկրների հետ տեխնոլոգիական, ստանդարտային և մշակութային ընդհանրություններ և պահպանված կապեր, ճարտարագիտական կրթական համակարգ և անդրազգային կազմակերպությունների հետ հաջողված կրթական նախագծերի փորձ: Բացի դրանից, առկա են նաև բարենպաստ գլոբալ միտումներ՝ գիտատար սպառողական ապրանքնատեսակների (smart home, smart հագուստներ) լայն կիրառություն կենցաղում, ավանդական էժան աշխատուժ ունեցող երկրների՝ Չինաստանի, Հնդկաստանի բիզնես միջավայրերից դժգոհություններ այդ թվում՝ աշխատուժի թանկացման պատճառով, որը ստիպում է անդրազգային կորպորացիաներին փնտրել արտադրությունների տեղակայման նոր շուկաներ, ոլորտի համար որակյալ և համեմատաբար էժան աշխատուժի անընդհատ աճող պահանջարկ ամբողջ աշխարհում: Այս հնարավորություններն ու կառավարության ոլորտի զարգացման հստակ, հասցեական և հետևողական քաղաքականության իրականացումը և ճարտարագիտական կրթության համակարգում ժամանակակից լաբորատոր բազայի ձևավորումը, կրթական ծրագրերի միջազգային պահանջներին համապատասխանեցումը հանրապետության ճշգրիտ ճարտարագիտության ոլորտը կարող են դարձնել տնտեսության առաջատարը՝ ապահովելով տնտեսության աճի բարձր տեմպեր. արդյունքում Հայաստանը կդառնա ճարտարագիտական ոլորտի տարածաշրջանային հանգույցներից մեկը՝ ունենալով մի քանի զարգացած արտադրական միավորներ:

⁴⁷ Աղբյուրը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ԱՎԾ, UM Comtrade online database, Ի-Վի Քոնսալթինգ:

- Ժամանակակից քաղաքների զարգացման նոր մոդելները պահանջում են ոչ թե զանգվածային, այլ ստեղծագործ, ժամանակակից քաղաքացուն հարմար անհատական աշխատատեղերը,
- Երևանը «կրեատիվ արդյունաբերության» կետային և խիստ նոսր բաշխվածություն ունեցող տարածք է, որի սոցիալտնտեսական զարգացման խնդիրների լուծումը պայմանավորել կրեատիվ արդյունաբերության զարգացման հնարավորություններով՝ դեռ վաղ է:
- ՏՏ ոլորտը Երևանի համար լուրջ զարգացման հեռանկարներ ունի և կարող է դառնալ քաղաքային կլաստերի հաջողված օրինակ, սակայն զարգացման տեմպերը գոհացուցիչ համարել չի կարելի. 2000 թ.-ից ոլորտը գերակա է համարվել, և իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, սակայն 13 տարի հետո ապահովում է ընդամենը 225 մլն դոլարի շրջանառություն,
- ՀՀ կառավարությունը պետք է առավելագույն օժանդակություն ցուցաբերի դեղագործական ընկերություններին՝ եվրոպական GMP ստանդարտը կիրառելու և համապատասխանության սերտիֆիկատը ստանալու, քանի որ այն մեր ընկերություններին հնարավորություն կտա ոչ միայն պահպանելու արտահանման Ռուսական և ԱՊՀ շուկան, այլ առանց դժվարության հասանելի կդառնան եվրոպական, ամերիկյան և արևելասասիական շուկաները,
- Միջուկային բժշկության ոլորտում Երևանը կարող է դառնալ միջազգային ճանաչում և համբավ վայելող՝ քաղցկեղի բուժման քաղաք, որտեղ հիվանդներին կնատուցվեն ներհիվանդանոցային և արտահիվանդանոցային բարդ ուռուցքաբանական համալիր ծառայություններ՝ միջուկային ախտորոշման, ճառագայթային բժշկության, քիմիաթերապիայի և վիրաբուժության, պոզիտրոնաթերապիան և այլն:

Առկա ներքին նախադրյալները և բարենպաստ գլոբալ միտումները լավագույն հնարավորություններն են ստեղծել Ճշգրիտ Ճարտարագիտության քաղաքային կլաստերի ձևավորման ու զարգացման համար: Այդ հնարավորությունները պետք է մեկտեղվեն ոլորտի զարգացման հստակ, հասցեական և հետևողական պետական քաղաքականության ու ժամանակակից ճարտարագիտական կրթության համակարգի ձևավորման հետ:

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԹԻՎԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ՀՀ մարզերի զարգացման համաթիվը բնութագրում է մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր կողմերը: Առանձնացվել է 5 հիմնական մասնավոր ցուցանիշ՝ **մարզերի ժողովրդագրական համաթիվը, նորարարության համաթիվը, մրցունակության համաթիվը, տնտեսական և սոցիալական համաթիվերը:** Դիտարկենք այս համաթիվերը և մանրամասն նշենք դրանք ձևավորող գործոնները:

1. Ժողովրդագրական համաթիվ

ՀՀ աճող տնտեսությունն աշխատանքային ռեսուրսներով ապահովելը գերակա խնդիր է: Այս ցուցանիշի դիտարկումը կարևոր է՝ հասկանալու համար թե որքան աղետալի է մարզի ժողովրդագրական վիճակը՝ արտագաղթի և մարզերում առկա տնտեսական վիճակի հետևանքով: Մարզերում ժողովրդագրական համաթիվը հաշվարկելիս առաջարկվում է դիտարկել հետևյալ գործոնները⁴⁸.

- բնական աճը,
- միգրացիայի մնացորդը,
- կենսաթոշակառուների քանակը:

Բնական աճի օգնությամբ փորձ է արվում գնահատելու մարզերում ծնելության և մահացության դինամիկան: Միգրացիայի մնացորդը օգնում է հասկանալ բնակչության ներհոսքերը և արտահոսքերը: Կենսաթոշակառուների քանակի միջոցով անուղղակի գնահատվում է մարզում ծերացման մակարդակը:

2. Նորարարության համաթիվ

21-րդ դարում թվային տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում կայուն տնտեսական աճի վեկտորները պարզաբանելիս հնարավոր չէ շրջանցել տեխնոլոգիական առաջընթացը՝ պայմանավորված նորարական տեխնոլոգիաների, մարդկային կապիտալի կատարելագործմամբ: Այս ցուցանիշի հաշվարկումը բավական բարդ է, քանի որ մարզերի մակարդակով համապատասխան տեղեկատվությունը լրիվ կամ մասնակիորեն բացակայում է: Սակայն, փորձ է արվել գտնելու սկզբնական ցուցանիշներին մոտ ցուցանիշներ, որոնք առկա են մարզերում, ինչպիսիք են.

- բուհում սովորող ուսանողների թիվը,
- մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեությունը,

⁴⁸ Աղբյուրը՝ <http://armstat.am/am/?nid=50>

- աշխատանքի արտադրողականությունը մարզերի արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում,
- էկոլոգիականությունը:

Նորարարությունը տնտեսության այն կարևորագույն բաղադրիչներից է, որն էապես փոխում է տնտեսական աճի որակը: Այն հաշվարկելու համար դիտարկվել է մարզի բուհերում սովորողների քանակը, քանի որ մեծ հավանականությամբ բարձրագույն կրթությամբ օժտված աշխատուժն ապագայում պետք է ապահովի տնտեսական աճի նորարական մասը: Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ծավալները թույլ կտան մեծացնելու ապագա հայտնագործությունների հավանականությունը: Աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության, և գյուղատնտեսության մեջ թույլ է տալիս հասկանալու, թե որքանով են այս ճյուղերը ընդունակ եղել կլանելու տեխնոլոգիական նորարարությունները: Էկոլոգիականությունը նկարագրում է միավոր արտանետումներին բաժին ընկնող գյուղատնտեսության և արդյունաբերության արտադրանքը:

3. Մրցունակության համաթիվ

Մրցակցությունը վկայությունն է ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական առումով առողջ իրավիճակի: Մրցակցային դաշտն անուղղակիորեն փորձ է արվել գնահատելու հետևյալ ցուցանիշների օգնությամբ.

- մեկ շնչի հաշվով մանրածախ առևտրաշրջանառության ծավալը,
- մանրածախ առևտրի օբյեկտների քանակը,
- մանրածախ առևտրում գործող կազմակերպությունների ծախսերի ծավալները,
- անվանական աշխատավարձերը՝ պետական և մասնավոր ոլորտներում:

Մրցակցության ապահովումը հիմքն է նորարարական տնտեսության ձևավորման: Հետևապես, մրցակցությունը բնութագրելու համար, նախ, փորձ է կատարվել մարզերում գնահատել մեկ բնակչի հաշվով մանրածախ առևտրի շրջանառության ծավալները: Որքան այն բարձր է, այնքան ակտիվ են փոքր և միջին գործարարության կազմակերպությունները: Մանրածախ առևտրի օբյեկտների քանակությունը հնարավորություն է ընձեռում պարզելու մրցակցային միջավայրի շրջանակները: Մանրածախ առևտրի կազմակերպությունների ծախսերով հնարավոր է հասկանալ, թե որքանով է բարդ փոքր և միջին գործարարության ծավալումը: Աշխատավարձերի տարբերությունը պետական և մասնավոր ոլորտում ցույց է տալիս, թե որքանով են գրավիչ մասնավոր կազմակերպությունները պետականների համեմատ (աշխատողների տեսանկյունից):

4. Տնտեսական զարգացման համաթիվ

Տնտեսության զարգացվածության աստիճանն առաջնային դեր է կատարում: Զարգացած տնտեսությունն, իր հերթին, կարող է նպաստել բոլոր

ուորսների արագ և կայուն վերելքին: Տնտեսական զարգացվածության համաթիվը բնութագրելու համար դիտարկվել են մարզերում հետևյալ ցուցանիշները.

- մշակող արդյունաբերության ծավալը,
- հանքագործական արդյունաբերության ծավալը,
- բուսաբուծության ծավալը,
- անասնաբուծության ծավալը,
- շինարարության ծավալը,
- առևտրաշրջանառության ծավալը,
- ծառայությունների ծավալը,
- գործազրկության մակարդակը:

Արդյունաբերության աճը ենթադրում է ոչ միայն արդյունաբերական արտադրանքի թողարկում, այլ արդյունաբերությանն առնչվող ճյուղերի վերելք, հետևապես՝ վերջինիս դինամիկայի դիտարկումը պարտադիր է տնտեսական զարգացածության համատեքստում: Հաջորդ գործոնը գյուղատնտեսությունն է: Թեև գյուղատնտեսությունը մարզերում համարվում է առաջնային ճյուղ, նրա զարգացածությունն այն չէ, ինչն անհրաժեշտ է: Հարկավոր է նշել, որ արդեն ժամանակն է չսահմանափակել մարզը միայն գյուղատնտեսությամբ. մարզերում բոլոր հեռանկարները կան նաև արդյունաբերության զարգացման: Շինարարության ծավալների փոփոխությունը ենթադրում է կապիտալի ստեղծում, որն էական դեր կարող է խաղալ մարզերում կայուն աճի ապահովման համար: Առևտրաշրջանառության ծավալների փոփոխությունը նկարագրում է գործարարության աշխուժությունը: Ծառայությունների մատուցման ծավալների աճը ենթադրում է նոր որակի արտադրանքների ստեղծում, որը նոր որակ կհաղորդի տնտեսական աճին: Եվ, վերջապես, տնտեսական աշխուժությունը նկարագրվում է գործազրկության մակարդակով: Հայտնի է, որ հատկապես մարզերում արտագաղթի հիմնական պատճառներից է գործազրկության բարձր մակարդակը:

5. Սոցիալական զարգացման համաթիվ

Սոցիալական հիմնախնդիրները հույժ հրատապ են, հենց դրանց վիճակն է ստիպում բնակիչներին լքելու մարզերը: Գաղտնիք չէ, որ հիվանդանոցների պակասի պատճառով մարդիկ շատ դեպքերում ուղղակի չեն կարողանում բուժվել, ինչը հանգեցնում է ծանր հետևանքների: Նախքան լուծումներ առաջարկելը՝ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպիսի վիճակ է տիրում մարզերում սոցիալական առումով: Այդ նպատակով առաջարկվում է դիտարկել հետևյալ գործոնները⁴⁹.

- բժիշկների քանակը մարզերում,

⁴⁹ Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_13_19.pdf

- ամբուլատոր-պոլիկլինիկաների և հիվանդանոցների քանակը,
- մեկ շնչի հաշվով ամբուլատոր-պոլիկլինիկաների և հիվանդանոցների հաճախումների քանակը,
- կենսաթոշակի միջին չափը,
- բնապահպանական ընթացիկ ծախսերը,
- մեկ բնակչի ապահովումը բնակելի մակերեսով,
- սպառողական ծախսերը՝ մեկ շնչի հաշվով,
- մեկ մանկավարժին բաժին ընկնող աշակերտների քանակը,
- մեկ դպրոցում աշխատող մանկավարժների քանակը,
- գրանցված հանցագործությունների քանակը:

Մարզերում առողջապահական արդիական համակարգերի ներդրումը հնարավորություն կտա խուսափել բնակչության շրջանում հիվանդությունների տարածումից: Այդ համակարգի բաղկացուցիչներն են համարվում հիվանդանոցների և նրանցում աշխատող բժիշկների քանակը: Սակայն, միայն կառույցների ապահովումը բավարար չէ, անհրաժեշտ են խթաններ, որմարդիկ կարողանան հաճախել հիվանդանոց, այսինքն՝ անհրաժեշտ է դիտարկել մեկ շնչի հաշվով հիվանդանոցների հաճախումների քանակը: Թոշակատուների ապրուստը կարևորագույն սոցիալական խնդիր է, որը դիտարկելու համար առաջարկվել է ուսումնասիրել կենսաթոշակի չափը: Բնապահպանական միջոցառումներն ուղղակիորեն ազդում են բնակչության տրամադրվածության վրա, բնակավայրերը դարձնելով ավելի հաճելի և առողջական իմաստով ապահով, հիմք չտալով բնակիչներին լքելու սեփական հողերը: Բնակարաններով ապահովվածությունը բնակչին ապագայի հույս է տալիս: Սպառման խթանումը մարզերում կօգնի ավելի արագ վերականգնելու վերջիններիս տնտեսությունները, հետևապես մեկ շնչին ընկնող սպառողական ծախսերի պատկերի բացահայտումն էապես կարող է ազդել վարվող տնտեսական քաղաքականության վրա: Երեխաների ուսման ապահովումն այն հիմնական սոցիալական խնդիրներից է, որոնք անտեսելն անհնար է, քանի որ դպրոցներում համապատասխան մասնագետների ապահովումը ոչ միայն ինքնին ներդրում է ձևավորվող մարդկային կապիտալում, այլ նաև մարզերում գրագիտության մակարդակի բարձրացմանը նպաստող, ինչպես նաև արտագաղթը և հանցագործությունների թիվը երեխաների շրջանում նվազեցնող կանխարգելիչ գործողությունների իրականացում: Եվ, վերջապես, մարզերում բնակիչների անվտանգության ապահովումը մարդկանց հնարավորություն է ընձեռում շարունակելու իրենց գործունեությունը՝ հանուն սեփական բարեկեցության ապահովման:

Այժմ փորձենք հաշվարկել նշված համաթվերը և նրանց միջոցով ստանալ ընդհանուր համաթիվը: Այդ նպատակով անհրաժեշտ է ամեն մի վար-

կանիշի մեջ մտնող ցուցանիշները բերել մեկ չափողականության, դա կարող ենք անել հետևյալ բանաձևի օգնությամբ⁵⁰.

$$G_{ij} = \frac{G_{ij} - G_{jmin}}{G_{jmax} - G_{jmin}} \quad (1)$$

որտեղ՝ G_{ij} -ն i -րդ մարզի j -րդ գործոնի նորմավորված մեծությունն է,
 G_{ij} -ն i -րդ մարզի j -րդ գործոնի արժեքն է,
 G_{jmin} -ն j -րդ գործոնի նվազագույն արժեքն է, ըստ բոլոր մարզերի,
 G_{jmax} -ն j -րդ գործոնի առավելագույն արժեքն է, ըստ բոլոր մարզերի:

Նկարագրենք ժողովրդագրական համաթվի հաշվարկման խնդիրները, որոնք հիմք են մյուս ցուցանիշների հաշվարկման համար՝ նմանատիպ եղանակով:

Նախ և առաջ (1) բանաձևի օգնությամբ պարզենք ժողովրդագրական համաթիվը ձևավորող գործոնների չափողականությունը՝ օգտագործելով ԱՎԾ 2011 թ. տվյալները ըստ մարզերի: Այդ հաշվարկների արդյունքում կստանանք՝

$$G_{i1}, G_{i2}, G_{i3}$$

որտեղ՝ G_{i1} -ը նկարագրում է բնական աճի նորմավորված մեծությունը i -րդ մարզի համար:
 G_{i2} -ը նկարագրում է միգրացիայի մասցորդի նորմավորված մեծությունը i -րդ մարզի համար:
 G_{i3} -ը նկարագրում է կենսաթոշակատուների թվի նորմավորված մեծությունը i -րդ մարզի համար:

Վերը բերված ցուցանիշները հաշվարկելուց հետո **ժողովրդագրական համաթիվը** կարող ենք ստանալ հետևյալ բանաձևով.

$$F_{i\sigma}^t = \frac{G_{i1} + G_{i2} + G_{i3}}{3} \quad (2)$$

որտեղ՝ $F_{i\sigma}^t$ -ն ժողովրդագրական համաթիվն է i -րդ մարզի համար:

Վերը նկարագրված եղանակով հաշվարկում ենք մյուս 4 համաթվերը, որի արդյունքում ստանում ենք $F_{i\sigma}^t, F_{i\sigma}^t, F_{i\sigma}^t, F_{i\sigma}^t$, որտեղ $F_{i\sigma}^t, F_{i\sigma}^t, F_{i\sigma}^t, F_{i\sigma}^t$ -ը համապատասխանաբար i -րդ մարզի նորարության, մրցունակության, տնտեսական և սոցիալական զարգացվածության համաթվերն են:

⁵⁰ Беков Р. С., Пространственно-временные характеристики и противоречия динамизма региональной экономики России // Экон. вестн. РГУ. 2004. Т. 2.4. С. 101-102.

Մարզերի զարգացման համաթիվը հաշվարկելու նպատակով օգտագործվել է հետևյալ բանաձևը.

$$F^i = \frac{F_{G}^i + F_{H}^i + F_{C}^i + F_{A}^i + F_{B}^i}{5} \quad (3)$$

որտեղ՝ F^i -ն i -րդ մարզի զարգացման մակարդակը նկարագրող համաթիվն է:

Զարգացման համաթիվը տատանվում է [0,1] միջակայքում. որքան այն մոտ է 1-ի, այնքան մարզն ավելի զարգացած է, որքան մոտ է 0-ի՝ այնքան հետամնաց: Կատարված հաշվարկները երևում են ստորև աղյուսակում:

ՀՀ մարզերի զարգացման համաթիվը 2011 թ. տվյալներով | Աղյուսակ 5

<i>Մարզի անվանումը</i>	<i>Ընդհանուր համաթիվը</i>
Կոտայք	0.55
Արարատ	0.51
Շիրակ	0.47
Արմավիր	0.46
Լոռի	0.441
Սյունիք	0.436
Գեղարքունիք	0.34
Տավուշ	0.30
Արագածոտն	0.29
Վայոց Ձոր	0.16

Աղյուսակ 5-ից պարզ է, որ զարգացածության տեսանկյունից վերջին տեղում է հայտնվել Վայոց Ձորի մարզը, իսկ առաջին տեղում՝ Կոտայքը: Ունենալով այս արդյունքները՝ պետական մարմինները կարող են տեսնել այն խնդիրները, որոնք առկա են մարզերի տարբեր ոլորտներում, և իրականացնել ուղղորդված տնտեսական քաղաքականություն՝ խթանելու համար տնտեսական աճը:

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունում խնդիր է դրվել բացահայտելու ՀՀ առանձին համայնքների զարգացման հնարավորությունները, վերլուծելու առկա և հնարավոր ռեսուրսները, առաջարկելու սոցիալախնայուն ցուցանիշների բարելավման ուղղություններ:

Հետազոտությունը իրականացնելու համար ուսումնասիրվել են ընտրված համայնքի (ք. Եղեգնաձոր, Վայոց Ձորի մարզ) սոցիալախնայուն կարողությունները, համապատասխան վիճակագրական ցուցանիշները, վերլուծվել են համայնքում ձևավորվող արտադրական արժեչոթյանները, հնարավոր ռեսուրսները, որոնց հիման վրա առաջարկվել են տնտեսական նոր արժեչոթյաններ: Հետազոտության արդյունքներով մշակվել է SWOT մատրիցա:

Վայոց Ձորի մարզը (տարածքը 2308 քառ. կմ է, որը ՀՀ տարածքի ընդամենը 7.8%-ն է՝ առավել փոքր մարզը) հետխորհրդային ժամանակաշրջանում ձևավորվել է Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջանների միավորումից: Ներկայումս այն ներառում է երեք քաղաքային (Եղեգնաձոր՝ մարզկենտրոն, Վայք, Ջերմուկ) և 41 գյուղական համայնքներ (ընդամենը՝ 52 գյուղ):

Եղեգնաձոր քաղաքը Երևանից 123 կմ հեռավորության վրա է: Շրջապատված է բարձր լեռների շարքով, գտնվում է Արփա գետի ավազանում (2360 քառ. կմ), որն ունի արտասովոր փոփոխական բնույթ: Հրաբուխները, երկրաշարժերը, Արփա գետի ջրերը և վտակները առաջացրել են մեծ և փոքր գագաթներով բազմաթիվ լեռնաշղթաներ, ձգված տարբեր ուղղություններով, կիրճեր, լեռնանցքներ, բարձրավանդակներ, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական հուշարձաններ: Կլիման առհասարակ ցամաքային է, խստաշունչ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և տաք կամ շոգ ամառներով:

Եղեգնաձոր քաղաքը շրջակա գյուղերով ունի բազմահարուստ ֆաունա և ֆլորա: Բնական անտառները տարածքի 4,6 տոկոսն են: Եղեգնաձորի շրջանում հանդիպող բազմաթիվ բույսեր և կենդանիներ գրանցված են Կարմիր գրքում:

Համայնքի տարածքում հանքային հանածոներից կան շինարարական քար (ֆելզիտ, գրանիտ), ապակու հումք, գրավյա:

Համայնքի բնակչությունը 2001 թ. մարդահամարի տվյալներով 8187 մարդ է, քաղաքապետարանի տվյալներով՝ մշտական բնակչությունը 2012 թ. 9394 մարդ է (տե՛ս հավելված 1):

Եղեգնաձոր համայնքի բնակիչների ընդամենը 46.4%-ն է աշխատու՛նակ, իսկ աշխատանքով ապահովված են դրանց 48.2%-ը:

Եղեգնաձորը մինչև անցյալ դարի 90-ական թվականները եղել է խոշոր արդյունաբերական կենտրոն: Քաղաքում գործել է ռելեի գործարանը՝ 1100 աշխատատեղով, տրիկոտաժի ֆաբրիկան՝ 500 աշխատատեղով, «Էլեկտրասարք» գործարանը՝ 300 աշխատատեղով, պահածոների գործարանը՝ 250 աշխատատեղով, կոշիկի ֆաբրիկան՝ 200 աշխատատեղով, պանրագործարանը, գորգագործական ֆաբրիկան և այլն: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, որտեղ ընդգրկված էին բնակչության 35%-ը այժմ չեն գործում:

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ Եղեգնաձորի տնտեսական կառուցվածքում գերակշռում են արտադրությունն ու շինարարությունը: Եղեգնաձոր քաղաքում գործող կազմակերպությունների (272 կազմակերպություն) 69,1%-ը առևտրով զբաղված ընկերություններն են, 23.5%-ը՝ ծառայություններ մատուցող, և ընդամենը 7,1%-ը՝ արտադրական կազմակերպություններ (հավելված 2): Մակայն, հաշվի առնելով արտադրական կազմակերպություններում զբաղվածների քանակը, պետք է նշել, որ զբաղված բնակչության 20%-ը աշխատում է արտադրական ընկերություններում, ևս առնվազն (ոչ բոլոր շինարարական կազմակերպությունների աշխատակիցների քանակն է հասանելի) 4%-ը՝ շինարարական ընկերություններում: Գյուղատնտեսության բնագավառում բնակչության զբաղվածությունը 12% է:

Ներկայում ամենախոշոր ձեռնարկությունը ռելեի գործարանն է (ՌԱՖԷԼԳՐԻԳ ՓԲԸ) 300 աշխատատեղով, որտեղ արտադրվում են հիմնականում ավտոմեքենաների ռելեներ: Ընկերության ողջ արտադրանքն արտահանվում է: 2011 թ. ընկերությունն արտադրել է 701 մլն ռելե՝ 2010-ի 598 մլն փոխարեն: Աճը պայմանավորված է եղել նրանով, որ ընկերությունը ռելե է մատակարարել ոչ միայն ռուսաստանյան գործընկերներին, այլև Ռուսաստանում արտոնագրով աշխատող արտասահմանյան գործընկերների:⁵¹ Մակայն, ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2011 թ. |ՀՀ-ում արտադրվել է 702,3 հազար հատ ռելե, իսկ 2012 թ.՝ 530,2 հազար հատ, կամ 2011 թ.-ի 75,5%-ը:⁵² Նշենք, որ 2013 թ.-ից ՌԱՖԷԼԳՐԻԳ ՓԲԸ-ն ռե-

⁵¹ Հայ Զինվոր: ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնաթերթ: #49 (965) 13.12.2012 19.12.2012 // <http://www.hayzinvor.am/18113.html>

⁵² Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2012 թվականի հունվար-դեկտեմբերին: Վիճակագրական տեղեկագիր: Երևան, 2013, էջ 4

լեներ է մատակարարելու ինքնաթիռաշինական ընկերություններին՝ ուկրաինական «Անտոնով» պետական ընկերությանը և ռուսական «Սոլխոյի քաղաքացիական ինքնաթիռներ» ՓԲԸ-ին⁵³:

Աշխատակիցների թվով հաջորդ խոշոր ընկերությունը Ճանապարհաշինարարական և շահագործման ձեռնարկությունն է, որտեղ աշխատում է 94 մարդ, ընդ որում՝ 2012 թ. այս ընկերությունը 13 454 հազ. դրամի եկամտահարկ է վճարել⁵⁴:

«Գոլդեն Գոութ» ՍՊԸ-ն արտադրում է 7 տեսակի այծի պանիր և 1 տեսակի կովի պանիր: «Գոլդեն Գոութ» ՍՊԸ-ն միակն է Հայաստանյան շուկայում, որ զբաղվում է այծի անարատ կաթից պանիրների արտադրությամբ:

Մինչ վերջերս ընկերությունն արտադրությունն իրականացրել է Վայոց ձորի Գողթանիկ գյուղում՝ օգտագործելով միայն Եղեգնաձորի տարածաշրջանի 5 համայնքների ընդունման կետերի արտադրանքը, սակայն արտադրանքի հանդեպ աճող պահանջարկը հնարավոր չէ բավարարել արտադրական ներկա հզորությամբ:

Հայաստանում «Գոլդեն Գոութ» ՍՊԸ-ի սպառողները մեծածախ ու մանրածախ վաճառքի և սննդի սպասարկման կետերն են: Ընկերությունն արտահանում է իր արտադրանքի մոտ 70%-ը, որը արտադրության հզորացման դեպքում կավելանա:

Նոր պայմանների շնորհիվ՝ քաղաքում զարգանում են փոքր ձեռնարկությունները՝ գինեգործական, տակառագործական, քարի մշակման, բետոնյա իրերի, հացաթխման, հրուշակեղենի պատրաստման, կահույքի արտադրության և այլն: Նշված ձեռնարկություններում, ընդհանուր առմամբ, աշխատում է 120 մարդ: Արտադրվում են «Արենի», «Վերնաշեն» բարձր տեսակի գինիներ, տարբեր չափերի փայտյա տակառներ, ծաղկամաններ, երեսպատման սալիկներ, շինաքար, միջնորմի սալիկներ, կահույք և այլն:

Համայնքում գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են անասնապահությունը, այգեգործությունը, պտղաբուծությունը, դաշտավարությունը, մեղվաբուծությունը: Համայնքն ունի 450 հա գյուղատնտեսության նշանակության ոռոգելի հողատարածք, որն օգտագործվում են մասամբ: Արտավայրերը ջրարբիացված չեն: Համայնքում պահվում է 576 խոշոր և մանր եղջերավոր անասուն, 4500 թև թռչուն, 430 փեթակ մեղու: Արտադրվում է գինի, մեղր, միս, կաթ, պանիր, ձու, հացահատիկ, մրգեր: Դաշտամիջյան ճանապարհների վիճակը մասամբ բավարար է:

⁵³ Հայաստանի տնտեսական նորություններ: Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն: 04.12.2012 // <http://armenianeconomy.com>

⁵⁴ 2012 թ. հաշվետու տարվա արդյունքներով Հայաստանի հանրապետության պետական բյուջե երեք մլն դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկ վճարողների (հարկային գործակալների) ցանկ // <http://www.taxservice.am>

Եղեգնաձորում գյուղատնտեսությունը բնութագրող ցուցանիշները հետևյալն են (աղյուսակ 6)։

Աղյուսակ 6

Եղեգնաձոր քաղաքի բանջարաբուծությունը և պտղաբուծությունը⁵⁵

	Հացահատիկ			Կարտոֆիլ			Բանջարեղեն			Պտուղ			Խաղող		
	Ցանքատարածք, հա	Բերք, ց	Բերքատվություն	Ցանքատարածք, հա	Բերք, ց	Բերքատվություն	Ցանքատարածք, հա	Բերք, ց	Բերքատվություն	Ցանքատարածք, հա	Բերք, ց	Բերքատվություն	Ցանքատարածք, հա	Բերք, ց	Բերքատվություն
2010	15.3	269.2	17.6	8.7	1044	120.0	45.6	5481	120.2	43.6	510	11.7	34	1360	40.0
2011	15.4	480.8	31.2	6.7	910	135.8	36.2	5461	150.9	43.6	590	13.5	34	1580	46.5
2012	16.4	401	24.5	4.1	790	192.7	32	3539	110.6	44	820	18.6	34	1350	39.7

Ըստ աղյուսակի տվյալների՝ հացահատիկի ցանքատարածքները 2012-ին 2010 և 2011 թթ. համեմատությամբ աճել են համապատասխանաբար 7,2 և 6,4 տոկոսով, սակայն եթե 2010-ի համեմատությամբ բերքատվությունն աճել է 39,2%-ով, ապա 2011-ի համեմատությամբ՝ նվազել 21,5%-ով։ Կարտոֆիլի ցանքատարածքները նվազել են համապատասխանաբար 52,9 և 38,9 տոկոսով, իսկ բերքատվությունը՝ աճել 60,6 և 41,9%-ով։ Բանջարեղենի ցանքատարածքները նվազել են 29,8 և 11,6%-ով, իսկ բերքատվությունը՝ 8 և 26,3%-ով։ Պտղի ցանքատարածքները աճել են 0,1%-ով, իսկ բերքատվությունը՝ 59 և 37,8%-ով։ Խաղողի ցանքատարածքները վերջին երեք տարիների ընթացքում անփոփոխ են, իսկ բերքատվությունը 2011-ին 2010-ի համեմատությամբ աճել է 16,3%-ով, սակայն 2012-ին՝ նվազել 14,6%-ով։

Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնում հաշվարկել են ամբողջական արտադրանքի արժեքային շղթաները, որոնք Եղեգնաձորում երևին են.

1. Խաղողի աճեցում → գինի → շշալցում → վաճառք
Արժեշղթայում ներգրավված են Եղեգնաձորի և շրջակա համայնքների այգեգործությամբ զբաղվող տնտեսություններ և գինու արտադրամասերը։
2. Մրգերի աճեցում → օղիներ → շշալցում → վաճառք

⁵⁵ Աղբյուրը՝ Բնապահպանական տեղեկատվության կենտրոնների ցանց (Օրհուս)։ // http://www.aarhus.am/index.php?option=com_content&view=article&id=1924&Itemid=751&lang=am։ Բերքատվության ցուցանիշը հաշվարկել է հեղինակը

Արժեշտը ներգրավված են Եղեգնաձորի և շրջակա համայնքների այգեգործությանը զբաղվող տնտեսությունները և «ՎՎՎ Ագրո» ՍՊԸ-ն:

3. Այծի կաթ → պանիր → տարայավորում → վաճառք
«Գոլդեն Գոուլթ» ՍՊԸ:

2011 թ. բազմակողմանի համագործակցության պայմանագրեր են կնքվել ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Խոյի նահանգի ղեկավարության հետ, որի արդյունքում առաջիկայում կվերագործարկվեն կվարցիտների հանքավայրը և Եղեգնաձորի՝ տարածաշրջանում միակ պահածոների գործարանը: Իրանի առաջարկով ուսումնասիրություններ են կատարվում Եղեգնաձորի պահածոների գործարանը վերագործարկելու համար: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համաֆինանսավորմամբ՝ 250 հազար դոլար կտրամադրի իրանական կողմը, 400 հազար՝ ՀՀ կառավարությունը: Գործարանի վերագործարկումը կապահովի 70 աշխատատեղ⁵⁶, ինչը կկրճատի գործազրկությունը մոտ 30%-ով:

Պահածոների գործարանի վերագործարկման արդյունքում հնարավորություն կստեղծվի ձևավորել նոր արժեշտը:

Մթերքի աճեցում → վերամշակում → տարայավորում → վաճառք:

Զբոսաշրջությունը նույնպես տարածաշրջանում կարող է առանձնահատուկ արժեշտ ձևավորել, քանի որ առկա են բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, ենթակառուցվածքները: Տարածաշրջանը հարուստ է բնապատմական ռեսուրսներով, առկա են հյուրանոցներ և հյուրատներ, սննդի օբյեկտներ, իսկ կլաստերավորման հնարավորությունները մեծանում են համայնքում գործող մասնագիտացված գիտական հաստատության առկայությամբ (ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի §Զբոսաշրջության կառավարում՝ մասնագիտությունը կարող է ապահովել անհրաժեշտ որակավորման մարդկային ռեսուրսներ):

Եղեգնաձորի շրջանի զբոսաշրջային գրավչությամբ օժտված տարածքներն են բնական, պատմամշակութային և ավանդույթային 28 հուշարձանները: Հաշվի առնելով բնապատմական ներուժը, տարածաշրջանի լանդշաֆտային, ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը, հնարավորություն կա տարածաշրջանում զարգացնելու զբոսաշրջային մի շարք ուղղություններ, մասնավորապես՝ արկածային, պատմամշակութային, գիտական, կրոնական, ագրարային:

Եղեգնաձոր քաղաքի զբոսաշրջային ռեսուրսների վերլուծության նպատակով կիրառում ենք զբոսաշրջային-ռեկրեացիոն ներուժի համալիր գնահատման ցուցանիշների համակարգ՝ համապատասխան կշռման գործակիցներով՝ ներկայացված ստորև:

⁵⁶ Աղբյուրը՝ «Կվերագործարկվի Եղեգնաձորի պահածոների գործարանը»: 29.12.2011թ. // <http://mardik.am>

Կատարված ուսումնասիրությամբ ստացված տվյալներն ամփոփ զե-տեղված են աղյուսակի մեջ (տե՛ս հավելված 3), որը բաղկացած է 3 հիմնա-կան թեմատիկ բաժիններից՝

- բնական պայմաններ և ռեսուրսներ,
- մշակութային-պատմական գործոններ,
- սոցիալ-տնտեսական գործոններ:

Ջրոսաշրջային ռեսուրսների կշռային գործակիցների գումարները ցույց են տալիս, որ բնական ռեսուրսների ընդհանուր կշիռը 3.48 է, պատմա-մշակութային ռեսուրսներինը՝ 5.59, իսկ ենթակառուցվածքների ընդհանուր գնահատականը՝ 8.6: Սա կարող է վկայել, որ նույնիսկ արդի ենթակառուց-վածքների պայմաններում տարածաշրջանն ունի զբոսաշրջության զարգաց-ման բավարար հնարավորություն: Հաշվի առնելով պատմամշակութային ռե-սուրսների կշռի գերազանցությունը բնական ռեսուրսների համեմատ՝ կարող ենք առաջարկել զբոսաշրջության պատմամշակութային ուղղության զար-գացման հենքի վրա ոլորտին առնչվող ենթակառուցվածքների բարելավու-մը: Ընդ որում, այս վերլուծության թերություններից է այն, որ հնարավորու-թյուն չի ընձեռում առանձին անդրադարձ կատարելու գյուղական կամ ագ-րարային զբոսաշրջային ուղղությանը, ինչի բավարար ներուժ կա այս տա-րածաշրջանում:

Տնտեսական զարգացման համար մեծ նշանակություն ունի համապա-տասխան ենթակառուցվածքների առկայությունը, մասնավորապես՝ տրանս-պորտային ենթակառուցվածքը: Եթե Եղեգնաձորի տրանսպորտային ենթա-կառուցվածքը, Երևանը Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի հետ կապող մայրուղին ապահովում են հանրապետական նշանակության ճանապարհների որակա-կան պահանջները, ապա ներհամայնքային կապերը բարելավման կարիք ունեն:

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկա-րությունը 38800 մ է, որից ասֆալտապատ՝ 26200 մ, մնացածը՝ գրունտային: Փողոցների մակերեսը 417800 քմ է: Քաղաքի կենտրոնի փողոցները բարե-կարգ վիճակում են: Քաղաքում կա 6 կամուրջ՝բարեկարգ վիճակում:

Ինչպես նկատում ենք աղյուսակ 7-ից՝ փողոցների, անցումների և հրա-պարակների (ներառյալ մայթերը) ընդհանուր մակերեսը դիտարկվող ժամա-նակաշրջանում փոփոխության է ենթարկվել միայն 2011 թ.՝ 48.5 հազ. քմ-ով, ընդ որում՝ նույն տարում բարեկարգվել է ևս 24.9 հազ. քմ փողոցների և ան-ցումների երկարությունն ավելացել է 2.8 կմ-ով, բարեկարգվել է ևս 8 կմ-ը: Հետաքրքրական է նաև, որ, վիճակագրական աղբյուրի տվյալները համընկ-նում են ողջ Վայոց ձորի մարզի ցուցանիշների հետ, ինչը վկայում է, որ մար-զի մյուս քաղաքային համայնքներում՝ Վայքում և Ջերմուկում, որևէ բարե-կարգում ճանապարհների նորոգում և նորի կառուցում տեղի չի ունեցել:

Ճանապարհային տնտեսության վիճակը Եղեգնաձորում, Վայոց Ձորում և ընդամենը ՀՀ քաղաքային համայնքներում 2007-2012 թթ.⁵⁷

	Եղեգնաձոր				Վայոց ձոր				Ընդամենը ՀՀ քաղաքային համայնքներ			
	Ընդամենը	որից՝ բարեկարգված	Ընդամենը	որից՝ բարեկարգված	Ընդամենը	որից՝ բարեկարգված	Ընդամենը	որից՝ բարեկարգված	Ընդամենը	որից՝ բարեկարգված	Ընդամենը	որից՝ բարեկարգված
2007	369.3	207	36	22	1013.8	811	85.5	67.5	40142.930613.8	3680.8	2943	
2008	369.3	207	36	22	1013.8	811	85.5	67.5	40574.930628.4	3617.4	2894.5	
2009	369.3	207	36	22	1013.8	811	80	62	40367.830776.3	3594	2821.6	
2010	369.3	207	36	22	1013.8	811	80	62	40725.830891.6	3629.3	2829.3	
2011	417.8	280.4	38.8	32.8	1062.3	884.4	82.8	72.8	40777 31464.6	3632.6	2845.9	
2012	417.8	280.4	38.8	32.8	1062.3	884.4	82.8	72.8	40975.732006.7	3645.9	2827.8	

Միայն 2009 թ. Ջերմուկի ճանապարհների երկարությունը նվազել է 5.5կմ-ով: 2011 թ. էթե Վայոց Ձորի մարզի ճանապարհների կառուցապատման և բարեկարգման աշխատանքների 100%-ը իրականացվել են Եղեգնաձոր քաղաքում, ապա պետք է նշել նաև, որ ՀՀ քաղաքային բոլոր համայնքներում ճանապարհների մակերեսի ավելացման աշխատանքների 94.73%-ը իրականացվել է Վայոց ձորում, հետևաբար՝ Եղեգնաձորում:

Եղեգնաձոր քաղաքի ընդհանուր ճանապարհներից, անցումներից 84.5%-ը բարեկարգված են, ի տարբերություն հանրապետության բոլոր քաղաքային համայնքների հանրագումարի, որից ընդամենը 77,6%-ն է բարեկարգ: Սակայն ՀՀ բոլոր քաղաքային համայնքների փողոցների, անցումների և հրապարակների (ներառյալ մայթերը) բարեկարգման աշխատանքների ընդամենը 12.81%-ն են իրականացվել Եղեգնաձորում: 2011 թ. ՀՀ բոլոր քաղաքային համայնքների երկարությունն ավելացել է 3.3 կմ-ով, որից 2.8-ը

⁵⁷ «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2012 թվականին», Վիճակագրական ժողովածու: Երևան, 2013 // <http://armstat.am/am/?nid=82&id=1485>

կամ 84.85%-ը՝ Եղեգնաձորում: Բարեկարգման աշխատանքների ընդամենը 65.06%-ն է իրականացնել Եղեգնաձորում:

Բնակչության կապը Երևանի և տարածաշրջանի գյուղերի հետ իրականացվում է երթուղային տաքսիների և ավտոբուսների միջոցով:

Համայնքի տարածքում գործում է 7 տաքսի ծառայություն և 2 երթուղային տաքսի, որոնց ծառայությունները բավարարում են բնակչության կարիքները: Փողոցներում տեղադրված են բավարար քանակի ճանապարհային երթևեկության նշաններ, կենտրոնական փողոցները նշագծված են: Քաղաքի երեք խաչմերուկներում գործում են լուսային կարգավորիչներ: Տեղադրված նշանները բավարարում են քաղաքում անվտանգ երթևեկություն կազմակերպելու համար⁵⁸:

Աղյուսակ 8

Եղեգնաձորի տնտեսական զարգացման հնարավորությունների SWOT մատրիցա⁵⁹

<p>Ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատուժի առկայություն • Ամբողջական արժեշղթաների առկայություն • Ճանապարհների հարաբերական բարեկարգվածություն • Տարանցիկ ճանապարհ (Երևան-Սյունիք, ԼՂՀ կապող մայրուղի) • Տարրական, միջնակարգ, բարձրագույն կրթության հասանելիություն • Ոռոգման բավարար հնարավորություններ • Համայնքի ֆինանսական կայունությունը 	<p>Թույլ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Անաշխատունակ բնակչության մեծ քանակ • Քաղաքային ենթակառուցվածքների ցածր որակ • Մայրաքաղաքից հեռավորությունը • Գյուղմթերքների վերամշակող կազմակերպությունների բացակայություն
<p>Հնարավորություններ</p> <ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսական արտադրանքի բերքատվության աճ • Լրացուցիչ գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն • Բնական և պատմամշակութային հարուստ ռեսուրսներ • Միջպետական սահմանի մոտ լինելը (Իրանի ԻՀ) • Արդյունաբերական ներուժի և փորձի առկայություն • Արտասահմանյան ներդրումների ներգրավում 	<p>Սպառնալիքներ</p> <ul style="list-style-type: none"> • Սահմանամերձ գոտի • Եղանակային խիստ պայմաններ • Որակյալ կադրերի արտահոսք

⁵⁸ Աղբյուրը՝ Եղեգնաձոր համայնքի 2013-2016 թթ. Զարգացման քառամյա ծրագիր: Հաստատվել է համայնքի ավագանու 04.02.13թ.թիվ 10 որոշմամբ: // www.yeghegnadzor.am

⁵⁹ Մշակել է հեղինակը

Օգտագործելով առկա աշխատուժը՝ Եղեգնաձոր քաղաքը հնարավորություն ունի վերագործարկելու պահածոների գործարանը, մարքեթինգային քաղաքականության միջոցով զարգացնելու զբոսաշրջությունը, նպաստելու գործազրկության և որակյալ կադրերի արտահոսքի կրճատմանը: Առաջարկվող ուղղությունները կարող են նպաստել նաև միջպետական կապերի զարգացմանը, մասնավորապես՝ դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն արտադրանքի արտահանմանը և զբոսաշրջիկների ներգրավմանը:

Հաշվի առնելով բացահայտված արտադրական արժեչոթաները և զբոսաշրջային ներուժի առկայությունը, կարծում ենք, դրանց համադրումը հնարավորություն կտա տարածաշրջանում ձևավորելու գյուղատնտեսական-զբոսաշրջային կլաստեր, ինչը իր սիներգիկ ազդեցությամբ կնպաստի տարածաշրջանի սոցիալտնտեսական զարգացմանը:

Եղեգնաձորի արտադրական հնարավորությունները և գյուղատնտեսության դերը համայնքի զարգացման գործընթացում հնարավորություն են ընձեռում համայնքին զուտ վարչական կենտրոնից անցնելու բազմաճյուղ տնտեսության ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 8

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ. ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԼԱՍՏԵՐ (ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՀՀ տնտեսության տարածական զարգացման համար կարևոր է տնտեսության տարածքային բոլոր բաղադրիչների համաչափ և կայուն զարգացումը:

ՀՀ տնտեսության տարածական կայուն զարգացումը ենթադրում է ինչպես ՀՀ մարզերի, այնպես էլ տարբեր համայնքների, շրջանների ու «վայրերի» ներդաշնակ զարգացում:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել «տարածքի» զարգացման բացարձակ և համեմատական առավելությունները, բացահայտել սոցիալ-ժողովրդագրական հնարավորությունները, տնտեսության ճյուղային կառուցվածքի և տարածական զարգացման կազմակերպման առանձնահատկությունները և առկա հիմնախնդիրները:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ տարածքի ճյուղային մրցունակության գնահատման և մրցունակության բարձրացման լավագույն փորձը կլաստերներն են:

Մ. Պորտերի սահմանմամբ՝ կլաստերը կենտրոնացված աշխարհագրական հատկանիշով փոխկապված ընկերությունների (մասնագիտացված մատակարարման և ծառայությունների մատուցման մեջ), համապատասխան ոլորտների ընկերությունների, ինչպես նաև որոշակի բնագավառներում փոխկապված գործունեություններով կազմակերպությունների (օրինակ՝ համալսարաններ, ստանդարտացման գործակալություններ, առևտրային միավորումներ) խումբ է, որոնք մրցակցում են և, միևնույն ժամանակ, իրականացնում համատեղ աշխատանք:⁶⁰

Կլաստերի չափերը տատանվում են առանձին համայնքից մինչև պետության կամ պետությունների խմբի սահմաններ: Կլաստերները չեն ձևավորվում ինքնաբերաբար: Դրանց գոյացումը հնարավոր է միայն այնտեղ, որտեղ առկա են անհրաժեշտ գործոններ, միջոցներ և կոմպետենցիաներ: Կլաստերը, որպես տարածաշրջան, ըստ Պորտերի, ունի հստակ և վճռորոշ մրցակցային առավելություններ այլ տարածաշրջանների համեմատ՝ ի շնորհիվ բարձր արտադրողականության, նորամուծությունների և գործարարության նոր ձևերի զարգացման:

⁶⁰ Портер М., Конкуренция / Пер. с англ. - М.: Изд. дом «Вильямс», 2005. - С. 256.

Զարգացած երկրներում իրականացված բազմաթիվ տեսական և փորձարարական հետազոտությունները վկայում են, որ աշխարհագրորեն իրար կողքի գտնվող երկու ընկերությունների գործունեությունը հիմնականում ավելի արդյունավետ է, քան մեկուսացված դեպքում: Միևնույն ժամանակ ճգնաժամը չի վերացրել այդ օրինաչափությունը, և տեղաբաշխվածության առանձնահատկությունները լիովին կարող ենք համարել ոչ միայն արդյունավետության, այլ նաև ընկերությունների գոյատևման վրա ազդող գործոն:

Հարց է առաջանում. արժի արդյոք ակտիվորեն զարգացնել տարածաշրջաններում կլաստերների ստեղծման և զարգացման սկզբունքները, կամ պե՞տք է արդյոք նվազեցնել պետական մարմինների միջամտությունը: Վերոնշյալ հարցերի պատասխանները գտնելու համար անհրաժեշտ է հետազոտել կլաստերային քաղաքականությունը:

Կլաստերային քաղաքականություն ասելով հասկանում ենք գործարարության և իշխանության փոխհարաբերությունների շրջանակ՝ կողմնորոշված տարածաշրջանային կլաստերների խթանման միջոցով մրցունակության բարձրացմանը:

Վերջին երկու տասնամյակում կլաստերների նկատմամբ հետաքրքրությունն ուղեկցվում է տարածաշրջանի հանդեպ, իբրև վերլուծության միավորի, ուշադրության մեծացմամբ:

Ըստ Մ. Պորտերի՝ ճյուղային արդյունաբերական քաղաքականության կլաստերային մոտեցման առավելությունն է.

- միմյանց լրացնող ռազմավարական խմբերի /գնորդներ, մատակարարներ, լրացնող հաստատություններ/ փոխազդեցության վերլուծությունը,
- որոշակիորեն մրցակից համարվող, բազմակիորեն փոխկապված տարբեր ճյուղերի կազմակերպությունների համագործակցությունը,
- մասնավոր-պետական գործընկերության մեխանիզմների կիրառումը: Այս գործընկերությունը տեղի է ունենում արտադրողականության բարձրացման, մրցակցության ամրապնդման և սիներգետիկ արդյունքի շրջանակներում:

Աղյուսակ 9-ում ներկայացված են խաչաձև կարգավորման հիմնական մեխանիզմները և դրանց իրագործման որոշ միջոցառումների:

Որոշ երկրների «քեյս» վերլուծությունները ցույց են տալիս, որ իշխանությունները կիրառում են ռազմավարական ճյուղերի ընտրության ուղղակի կառավարման մեթոդներ: Այսպիսի «աճի կետերը» ծառայում են որպես անցումային փուլ դեպի «ճշմարիտ կլաստերային քաղաքականություն»: Մա այն քաղաքականությունն է, որն ապահովում է տարածաշրջանային կայուն ինստիտուտային և նորարարական միջավայր:

Խաչաձև կարգավորման հիմնական մեխանիզմները և դրանց իրագործման որոշ միջոցառումները


Պայմանների ձևավորում	Կաստերի զարգացման խթանում	Ակտիվ գործողություններ	Բիզնես մշակույթի աջակցում
Կրթական հաստատությունների աշխատանքի որակի բարձրացում	Փոխգործունեության և գիտելիքների փոխանակման հարթակի ստեղծում	Նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում	Նախաբիզնեսի կառուցվածքի ստեղծում /բիզնես ինկուբատորներ, տեխնոպարկեր/
Ենթակառուցվածքային օբյեկտների անխափան աշխատանքի ապահովում	Բոլոր մասնակիցների ջանքերի կոորդինացում	Շահագրգիռ անձանց ներգրավում	Կլաստերային նախաձեռնությունների աջակցում
Օրենսդրության մեջ միջակայքերի վերացում	Մասնակիցների միջև վստահության ամրապնդում	Կլաստերի մասնակիցների ընդհանուր խնդիրների բացահայտում և դրանց հնարավոր վերացում	

Առավել ևս, կլաստերային քաղաքականությունը ենթադրում է խաչաձև կարգավորման չափորոշիչներ և բացառում՝ կլաստերների արհեստական ձևավորումը: Փորձը ցույց է տալիս, որ հաջողակ կլաստերներ ստեղծվում են հիմնականում այն դեպքում, երբ ընկերության սեփականատերերը որոշում են կայացնում արտադրության տեղաբաշխման վերաբերյալ՝ ելնելով սեփական դրդապատճառներից⁶¹: Խաչաձև կարգավորման հարաչափերից առավել հայտնի է “կլաստերների ստեղծման պայմանների ձևավորումը” և դրանց հաջող գործունեությունը:

Տարածաշրջաններում կլաստերների ձևավորման հնարավորությունների վերլուծություններն ամբողջությամբ հիմնված են գործարար միջավայրի ուսումնասիրության, մրցունակ արտադրության առկայության, արտադրության կառուցվածքի տարբերակման աստիճանի, կազմակերպությունների նորարական ակտիվության, բիզնեսի ենթակառուցվածքների ապահովվածության բարելավման վրա:

Մյուսմասիկ ձևով այս ամենը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ (գծ. 5).

⁶¹ Polt W., The role of governments in networking.// Innovative Networks: Co-operation in National Innovation Systems. OECD Publications, 2001.



Գծապատկեր 5 | Կլաստերների զարգացման պարբերաշրջանային մոդելը

Ներկայացված մոդելում ներառված են 4 հիմնական բլոկներ.

- 1) *Կլաստերի միջավայր*: Ներկայացնում է տարածաշրջանի գործարար միջավայրի ընդհանուր ցուցանիշները, որոնք ձեռնարկությունների տեղաբաշխվածության համար բնութագրում են տարածքի գրավչությունը:
- 2) *Կլաստերի շարժիչ ուժեր*: Դրանք ռեսուրսային ցուցանիշներ են, որոնք անհրաժեշտ են կլաստերների ձևավորման համար (օրինակ՝ մարդկային ռեսուրսներ, գիտական նվաճումներ, փոխներգործության կապուղիներ և այլն):
- 3) *Կլաստերի զարգացում*: Ցուցանիշներ, որոնք բնութագրում են կլաստերավորման ընթացիկ գործընթացները օրինակ՝ ձեռնարկությունների այն զանգվածը, որը միտված է համագործակցության, կազմակերպությունների և գիտական հաստատությունների միջև համատեղ նախագծերի առկայությունը և այլն):
- 4) *Կլաստերի արդյունքներ*: Արդյունքային ցուցանիշներ, որոնք արտացոլում են կլաստերի ազդեցությունը նորարարական ակտիվության վրա,

ցանցային փոխազդեցության զարգացման գործընթացները և տարածաշրջանի մրցունակությունն ամբողջությամբ:

Առաջին երեք բլոկերը մուտքային ինդիկատորներն են (input), իսկ վերջին բլոկը՝ արդյունքային (output):

Կլաստերների զարգացմանն առնչվող հետազոտություններում ցուցանիշների վերջնական սանդղակ են հայտնվում ինչպես հասանելի վիճակագրական ինդիկատորները, այնպես էլ փորձագիտական ճանապարհով ստացված արդյունքները: Կլաստերավորման գործընթացի գնահատման ժամանակ հիմնականում հնարավոր չէ հետազոտությունը ձևավորել և ներկայացնել վիճակագրական քանակական ինդիկատորների տեսքով՝ դրանց իսկ բացակայության պատճառով: Հետևաբար, որպես տեղեկությի հավաքման մեթոդ՝ հետազոտություններում, կիրառվում է փորձագիտականը:

Արտասահմանյան մասնագիտական գրականության տեսամեթոդական ուղղությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս տարածաշրջանում սահմանել կլաստերի ձևավորման տեխնոլոգիան, որը ենթադրում է երեք հիմնական փուլ (հավելված 1):

Առաջին՝ *նախնական փուլն* ունի մեծ կարևորություն, որում պարզվում են և սահմանվում կլաստերավորման հնարավորությունները և մշակվում կլաստերային նախագծերի իրացման ծրագիրը:

Երկրորդ՝ *հիմնական փուլի* խնդիրն է տարածաշրջանում կլաստերավորման գործընթացների ակտիվացումը՝ գործընթացի մեջ ներգրավելով հնարավոր մասնակիցների: Կլաստերավորման սկզբնավորման համար, անհրաժեշտ է տարածաշրջանի տեղական իշխանությունների նախաձեռնողականությունը: Իշխանությունների գործողությունները պետք է առաջնահերթ ուղղված լինեն կլաստերային նախագծերի պլանավորման, իրացման, մասնակիցների շահերի ճշգրտման, ներքին բախումները չբացառող գործընթացները համակարգող կենտրոնի ձևավորմանը:

Համակարգող խորհրդի ձևավորումից հետո հարկավոր է սահմանել կլաստերի նպատակներն ու խնդիրները, հիմնական մասնակիցների կազմը, այսինքն՝ արտադրողներ, մատակարարներ, սպառողներ, գիտահետազոտական կազմակերպություններ, որոնք, կախված կլաստերի պրոֆիլից, մշակում են անհրաժեշտ ճարտարագիտական և սոցիալական ենթակառուցվածքներ և այլն: Անհրաժեշտ է նաև կլաստերի հիմնական մասնակիցների միջև զարգացնել հաղորդակցման կապուղիներ ըստ ալգորիթմի՝ հիմնական փուլի արդյունքը պետք է լինի զարգացման ծրագրի իրագործումը, հետևաբար՝ տարածաշրջանում կլաստերի ձևավորումը:

Երրորդ՝ *վերջնական* փուլում իրականացվում է կլաստերի գործունակության գնահատում՝ այնպիսի ցուցանիշներով, որոնք բնութագրում են տնտեսական զարգացումը: Ըստ գնահատման արդյունքների՝ ճշգրտվում է

կլաստերի զարգացման ծրագիրը և կատարվում են համապատասխան փոփոխություններ:

Հայաստանում կլաստերների զարգացման մակարդակը, ըստ մրցունակության համաշխարհային զեկույցի, գնահատվում է բավական ցածր՝ 2.93՝ 7 հնարավորից. ՀՀ-ը 151 երկրների շարքում 108-րդն է⁶²:

Նպատակային կլաստերային ուղղվածության հիմնական բնութագրիչը պահանջարկի և մատակարարումների ոլորտում հստակ մշակված միջոցառումներին բազմակողմանի աջակցությունն է: Այդ քաղաքականությունը նպաստում է պետական և տնտեսական կառույցների սերտ համագործակցությանը, ինչի շնորհիվ Արդյունքում տնտեսական միավորները զբաղվում են նաև ավանդական պետական հարցերով, օրինակ՝ միջազգային ստանդարտներին համապատասխան առևտրային համաձայնագրերի վերաբերյալ ազգային իրավական ակտերի ընդունումը:⁶³

Ստորև ներկայացնենք գինեգործության զարգացման հնարավորությունները ՀՀ Վայոց Ձորի մարզում՝ որպես ճյուղային կլաստերի օրինակ:

Գինեգործությունը Վայոց Ձորի մարզում

Գինեգործությունն ավանդաբար եղել և այժմ էլ Վայոց Ձորի մարզի առաջատար ճյուղերից մեկն է: Գինու արտադրությունը զարգացած է ինչպես արդյունաբերական մակարդակով՝ համապատասխան գործարաններում, այնպես էլ տնային պայմաններում: Գինեգործությունը հատկապես տարածված է ցածրադիր և միջին գոտիներում, որտեղ զարգացած է խաղողագործությունը, հիմնականում Եղեգնաձորի տարածաշրջանում: Արենի, Աղավնաձոր, Գետափ, Մալիշկա, Վերնաշեն, Արփի և այլ գյուղերի տնտեսությունների մինչև 50%-ը տնային պայմաններում զբաղվում է գինու արտադրությամբ:

Վայոց Ձորի մարզում շրջված գինու արտադրությամբ զբաղվում է առնվազն 9 ընկերություն, որոնք տարածքային առումով տեղակայված են հետևյալ կերպ (աղյուսակ 10):

Մարզում խոշորագույն գինի արտադրողը «Գետափի գինու գործարանն» է, հիմնվել է 1938 թ., «Վեդի-Ալկո» ընկերության մասնաճյուղն է:

Վայոց Ձորի մարզում գինու արտադրությունը հիմնված է հիմնականում «Արենի» տեսակի խաղողի հումքի վրա: Ըստ գինեգործական ընկերությունների ղեկավարների՝ հենց այս տեսակի խաղողով է պայմանավորված գինու բարձր իրացվելիությունը և պահանջարկը: Խաղողի մթերումներն իրականացվում են բացառապես Վայոց Ձորի մարզում: Ժամանակին մի

⁶² Աղբյուրը՝ http://www.ev.am/media/documents/ACR/ACR2010/ACR2010_arm.pdf

⁶³ Աղբյուրը՝ <http://www.cf.am/files/news/226/7ca0682dce8c76b.pdf>

քանի ընկերություն փորձել են այլ մարզերում հիմնել «Արենի» տեսակի խաղողի այգիներ և վերամշակել բերքը, սակայն վերջին որակական հատկանիշները զգալիորեն զիջել են Վայոց Ձորի մարզում աճեցված խաղողից գինու հատկանիշներին:

Աղյուսակ 10

Վայոց Ձորի մարզի գինեգործական ընկերությունները⁶⁴

Ընկերության անվանումը	Վայրը
«Արենի Գինու Գործարան»	գ.Արենի
«Քիմլեյ»	գ.Արենի
«Գետափի Գինու Գործարան»	գ.Գետափ
«Գինեթաս»	գ.Արփի
«Քարանձավ»	գ.Արփի
«Գինեքար»	գ.Աղավնաձոր
«Մեծ Սյունիք»	գ.Աղավնաձոր
«Գետնատուն»	ք.Եղեգնաձոր
«Վայք Գրուպ»	ք.Վայք

2001-2004 թվականներին Վայոց Ձորում ընդլայնվել են խաղողի տնկարկների տարածությունները: Դա մինչ այսօր շարունակվում է. խաղողի տարածքը կազմում է 928 հա է, որից 885 հա՝ բերքատու:

Քանի որ «Արենի» տեսակի խաղողն աճեցվում է բացառապես Վայոց Ձորի մարզում, ապա դրա առաջարկը խիստ սահմանափակ է, ինչը մթերողների սուր մրցակցության պայմաններում, հանգեցրել է խաղողի գների կտրուկ բարձրացման: 2013 թ. մթերումներն իրականացվել են 150-250 դրամ/կգ գնով: Արենի սորտի խաղողը մթերվել է 200-240 դրամով, իսկ սպիտակ սորտերը 140-170: Մթերման ծավալների մոտ 50%-ը իրականացնում է «Գետափի գինու գործարանը» (հավելված 2): Շուկայի նման իրավիճակը ստիպել է գինեգործական ընկերությունների մի մասին հիմնել խաղողի սեփական այգիներ, ինչը հնարավորություն է ընձեռում սեզոնին մթերելու անհրաժեշտ քանակությամբ բարձրորակ հումք: Նման այգիների ամենամեծ ծավալը՝ մոտ 150 հա, հիմնել է «Գետափի գինու գործարանը»: Առնվազն 50 հա այգիներ հիմնել են այլ կազմակերպություններ:

Հումքային բազայի ընդլայնումը կարևորվում է նաև այն առումով, որ գինեգործական կազմակերպություններն աշխատում են իրենց իրական հզորության 30-40%-ի չափով: Հումքային բազայի սակավությանը զուգահեռ, գինեգործների գործունեությունը դժվարանում է նաև սուր մրցակցության, ներ-

⁶⁴ Վայոց Ձորի մարզի տնտեսական հետազոտություն: Հայաստանի տարածքային զարգացման եվրոպական ծրագիր. Հոկտեմբեր 2004

քին շուկայի հագեցվածության և հատկապես ֆինանսական միջոցների սակավության պատճառով:

Վայոց Ձորի մարզի գինեգործական կազմակերպություններից 5-ը սերտորեն համագործակցում են USDA MAP ծրագրի հետ, որն աջակցել է նրանց ոչ միայն հիմնման փուլում, այլ նաև հետագայում՝ տրամադրելով վարկեր և դրամաշնորհներ՝ 5-75 հազ. ԱՄՆ դոլարի սահմաններում:

Ավանդաբար՝ հայկական գինու խոշորագույն շուկան համարվել է Ռուսաստանը և այս միտումը պահպանվել է առ այսօր: 2013թ. 6 ամսում սաստան է արտահանվել 557 հազ. լիտր գինի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 265 հազ. լիտրի համեմատ: Ռուսական շուկան ունի մեծ ներուժ. սպառումն աճում է և գերազանցում տարեկան 1 մլրդ լիտրը: Հայկական գինու բաժինը այդ մեծ շուկայում մոտ 0,3% է:

Վայոց Ձորի մարզի գինեգործների արտադրանքից Ռուսաստան է արտահանվում «Գետափի գինու գործարանի» արտադրանքի 40%-ը, մյուս ընկերությունների արտադրանքի՝ 15-20%-ը: Ռուսական շուկայում հայկական գինու հիմնական մրցակիցը վրացական գինին է: Թեև նրանք գործում են շուկայի տարբեր հատվածավորում: Բացի Ռուսաստանից, Վայոց ձորի մարզի գինիներն արտահանվում են նաև Ղազախստան և Եվրոպա:


Գինեգործը գիտի, որ տվյալ ապրանքի միջազգային շուկան խիստ պահանջներ է ներկայացնում արտադրանքի որակական (համահոտային) հատկանիշների, փաթեթավորումը և արտաքին տեսքին:

Վայոց Ձորի մարզի գինեգործական ընկերություններն իրենց արտադրանքն իրացնում են տեղական առաքիչների, «Փեթակ» մեծածախ առևտրի համալիրի և որոշ խանութների ցանցի միջոցով: 5 ընկերություն համագործակցում են Մոսկվայի «Արենի» մեծածախ իրացման կենտրոնի հետ: Բոլոր ընկերություններն ապրանքային վարկեր են տրամադրում իրենց հաճախորդներին՝ իրացումները կազմակերպելու համար:

Վայոց Ձորի մարզի գինեգործները համագործակցում են: 4 ոչ մեծ ընկերություններ միավորվել են՝ ստեղծելով «Գինեգործների միություն» ինչը նրանց թույլ է տալիս համատեղելու իրենց ջանքերը շշերի և պիտակների ձեռքբերման գործում, ինչպես նաև սահմանել խաղողի մթերման ընդհանուր գներ:

Վայոց Ձորում գինեգործական կլաստերի հնարավոր տարբերակի դիտարկման համար իրականացվել է տարածքում գինու արտադրության և իրացման պայմանների SWOT վերլուծություն թվով 5 փորձագետների շրջանում (հավելված 6):

Գծապատկեր 6-ում ներկայացվում է գինեգործության կլաստերավորման գործընթացի մասնակից միավորների փոխկապվածությունը, որը տեղայնացվել է ըստ Վայոց Ձորի մարզում գինեգործության կլաստերի ձևավորման պայմանների:



Գծապատկեր 6 | Վայոց Ձորի մարզի գինեգործական կլաստեր

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ նշենք, որ գինեգործության ոլորտը Վայոց Ձորի մարզում զարգացման լուրջ հեռանկարներ և հնարավորություններ ունի և հիմք է տալիս գինեգործության կլաստերավորման քաղաքականության իրագործման:

Գյուղատնտեսների, արտադրողների, կրթական և գիտական հաստատությունների, զբոսաշրջային ընկերությունների, առևտրային և մարքեթինգային կազմակերպությունների ու կլաստերավորման գործընթացի մասնակից սուբյեկտների սերտ համագործակցությամբ արդյունքում հնարավոր է ստեղծել մրցունակ գինեգործության կլաստեր:

Աջակցություն իրականացնող կազմակերպություններին Վայոց Ձորի մարզում գինեգործության կլաստերի ձևավորման և զարգացման համար խորհուրդ ենք տալիս իրականացնել հետևյալը.

- ստեղծել երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսներից մատչելի պայմաններով օգտվելու հնարավորություններ,
- նպաստել ՓՄՁ-ներում սարքավորումների արդիականացմանը,
- գինեգործական ընկերություններին ապահովել գինեգործության ժամանակակից զարգացման, նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվությամբ,
- օժանդակել գինեգործությամբ զբաղվող ՓՄՁ-ներին մարքեթինգային ռազմավարություն մշակելու և իրականացնելու հարցում,
- նպաստել խաղողի մթերման ծավալների ավելացմանը, ապահովել հարկային արտոնություններ՝ ուղղված կլաստերին մասնակից սուբյեկտների գործունեությանը:

1. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2012 թվականի հունվար-դեկտեմբերին: Վիճակագրական տեղեկագիր: Երևան, 2013թ.
2. ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագիր:
3. Բնապահպանական տեղեկատվության կենտրոնների ցանց (Օրիուս): http://www.aarhus.am/index.php?option=com_content&view=article&id=1924&Itemid=751&lang=am
4. Գրիգորյան Կ.Հ., Տեղական ինքնակառավարման հիմնական մոդելները և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, «Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում», հանրապետական գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ, Երևան, «Նահապետ» հրատարակչություն, 2009, էջ 30-33
5. «Եվրոպայի Խորհուրդ-Հայաստանի կառավարություն» Գործողությունների Քառամյա Պլանը, 2011 (*Կոնկրետական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումներ*)
6. Եղեգնաձոր համայնքի 2013-2016 թթ. Զարգացման քառամյա ծրագիր: Հաստատվել է համայնքի ավագանու 04.02.13թ.թիվ 10 որոշմամբ: // www.yeghegnadzor.am
7. Կվերագործարկվի Եղեգնաձորի պահածոների գործարանը: 29.12.2011թ. // <http://mardik.am>
8. Հայաստանի Հանրապետության արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, 2011թ.
9. Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն, Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ, 2011թ., 2012թ.
10. «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով», վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002-2011թթ.
11. «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով», 2010, 2012՝, վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, 2012թթ. հրապարակումներ
12. «ՀՀ վիճակագրական տարեգիրք», վիճակագրական ժողովածու, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001-2012թթ. հրապարակումներ
13. «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբեր ամիսներին», վիճակագրական ժողովածու, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003-2012թթ. հրապարակումներ
14. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն
15. ՀՀ կայուն զարգացման ծրագիր (ԿԶԾ)
16. ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգ
17. ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը

18. Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը
19. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության N 610, 10.04.2003 որոշմամբ, <http://www.mud.am/maps/tarebnak.pdf>
20. Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2012 թվականին: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2013
21. Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տնտեսական քարտեզ:
22. // <http://smednc.am/ecomap/?gyux=exegnadzor>
23. Հայաստանի տնտեսական նորություններ: Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն: 04.12.2012
24. // <http://armenianeconomy.com>
25. Հայ Զինվոր: ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնաթերթ: #49 (965) 13.12.2012–19.12.2012 // <http://www.hayzinvor.am/18113.html>
26. Համաշխարհային բանկի «Գյուղական ձեռնարկության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» (RESCAD) ծրագիր
27. Սուվարյան Յու. Մ., Տնտեսության հանրային կառավարում. մեթոդաբանություն և արդի հիմնախնդիրները, Երևան, 2003, 88 էջ
28. Տարածաշրջանային զարգացման հայեցակարգի (ռազմավարության) վերլուծական նյութեր և ուրվագծեր, նախագիծ, մարտ, AEPLAC, 2007:
29. 2012 թ. հաշվետու տարվա արդյունքներով Հայաստանի հանրապետության պետական բյուջե երեք մլն. դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկ վճարողների (հարկային գործակալների) ցանկ: // <http://www.taxservice.am>
30. Ճշգրիտ ճարտարագիտություն, ոլորտային ռազմավարություն 2011-2020թթ., ԶՀԳ, www.ada.am/files/937/documents/precision.pdf
31. Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն, հնարավորություններ և մարտահրավերներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2008, 402 էջ
32. Վայոց Ձորի մարզի տնտեսական հետազոտություն: Հայաստանի տարածքային զարգացման եվրոպական ծրագիր. Հոկտեմբեր 2004: 181 էջ:
33. Беков Р. С. Пространственно-временные характеристики и противоречия динамики региональной экономики России // Экон. вестн. РГУ. 2004. Т. 2.4, С. 101-102.
34. Бунич А., “7 принципов новой экономики для России (от индустриального к информационному сообществу)” // iBusiness. – 2000. – № 1-2.
35. Гнедовский М., Творческие индустрии: политический вызов для России, www.strana-oz.ru (“Отечественные записки”).
36. Гончарик А., Политика в области творческих индустрий: зарубежный опыт и российские реалии: www.creativeindustries.ru. Креативная экономика и социальные инновации, №1 (1) 2011, 24
37. Григорян К.Г., “Теоретические аспекты и международный опыт пространственного развития”, статья, Материалы международной научной конференции “Теория и практика модернизации хозяйственных укладов и экономических институтов периферийных регионов”, Северо-Кавказский научно-исследовательский институт экономических и социальных проблем Южного федераль-

- ного университета, изд-во “Центр Универсальной Полиграфии”, Ростов-на-Дону, РФ, 2013, стр. 173-179
38. Клоудова Й. (Братиславский юридический институт, Братислава), Влияние развития креативной экономики на экономически отсталые регионы, “Вопросы экономической политики”, 2009:
<http://www.econorus.org/repec/journal/2010-5-110-125r.pdf>
 39. Мингалева Ж. А., Гайфутдинова О.С., Основные методологические подходы к оценке уровня инновационной конкурентоспособности экономических систем // Методология планирования инновационного развития экономических систем. СПб., 2008., С. 648-681.
 40. Портер М., Конкуренция / Пер. с англ. - М.: Изд. дом «Вильямс», 2005. - С. 256.
 41. Стариков А.А., “Дизайн и конкурентоспособность промышленности”, Архитектон: известия вузов, №19, сентябрь 2007г.: http://archvuz.ru/2007_3/8
 42. Стратегия инновационного развития регионов России и роль университетских комплексов в модернизации образования/В.А. Голенков [и др.]. М.,2003.
 43. Ускова Т.В., Развитие региональных кластерных систем. // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз 1 (1)2008 .- стр. 92-103
 44. Флорида Р., Креативный класс: люди, которые меняют будущее. – М.: Классика-XXI, 2005
 45. Хакимова Е.Р., “Креативные индустрии как сектор новой экономики”, Международный информационно-аналитический журнал “Креативная экономика и социальные инновации”, №1(1) 2011г., стр.22
 46. Boucekine, R., Camacho, C., and Zou, B., 2009. Bridging the Gap Between Growth Theory and the New Economic Geography: The Spatial Ramsey Model, Macroeconomic Dynamics, 13, 20-45.
 47. Caves R., Creative Industries: Contracts between art and commerce. – Harvard University, Press: Harvard, 2000. __
 48. Contributions to urban sociology / edited by Ernest W. Burgess and Donald J. Bogue, 1964, <http://ewburgess.weebly.com/concentric-zone-model.html>
 49. Desmet, K. and Rossi-Hansberg, E., 2009 “Spatial Growth and Industry Age”, Journal of Economic Theory, 144, 2477-2502.
 50. Morrison K. and Potts J., Industry policy as innovation policy // Creative Destruction.Vol. 1. – № 1 (2008).
 51. One Hundred Years of Land Values in Chicago. The relationship of the growth of Chicago to the rise in its land values , 1933
 52. Potts J., Cunningham S., Hartley J., Ormerod P. ,Social network markets: A new definition of the creative industries // Creative Destruction. – Vol. 1. – № 1 (2008).
 53. Polt W.. The role of governments in networking.// Innovative Networks: Cooperation in National Innovation Systems. OECD Publications, 2001.
 54. Price Waters Haus Coopers, <http://www.pwc.com/am/en/index.jhtml>
 55. Thisse Jacques-François, (2011), "Economic Geography," CREA Discussion Paper Series 11-01, Center for Research in Economic Analysis, University of Luxembourg,

- http://wwwfr.uni.lu/recherche/fdef/crea/publications2/discussion_papers/2010
56. Quah, D., 2002. .Spatial Agglomeration Dynamics, American Economic Review, 92, 247-252.
57. Work foundation, Լանքասթերի համալսարան, Լոնդոն, ՄԲ,
<http://www.theworkfoundation.com/Reports>
58. <http://armstat.am/am/?nid=50>
59. <http://report.gov.am>
60. <http://vdzor.gov.am/enterprises/>
61. <http://www.armenianwinefestival.am>
62. <http://www.cf.am/files/news/226/7ca0682dcce8c76b.pdf>
63. http://www.ev.am/media/documents/ACR/ACR2010/ACR2010_arm.pdf
64. <http://www.smednc.am>

Հավելված 1

Եղեգնաձորի բնակչության կազմն ու կառուցվածքը⁶⁵

կանայք	4955 մարդ
տղամարդիկ	4439 մարդ
բնակչության տարիքային կազմը	
0-6 տարեկան	573 մարդ
7-17 տարեկան	1680 մարդ
18-65 տարեկան	6521 մարդ
65-ից բարձր տարեկան	620 մարդ
բնակչության խոցելի խմբեր	
թոշակառուներ	1747 մարդ
փախստականներ	210 մարդ
միակողմանի ծնողազուրկ երեխաներ	35 մարդ
երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	2 մարդ
հայրենական պատերազմի մասնակիցներ	4 մարդ
հաշմանդամներ	850 մարդ
աշխատանքային ռեսուրսներ	4360 մարդ
գրադավաձներ	2100 մարդ
գործազուրկներ	220 մարդ
ընտանեկան վիճակագրություն	
ընտանիքների թիվը	2582 ընտանիք
«Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	567 ընտանիք
գոհվածների ընտանիքներ	12 ընտանիք

⁶⁵ Եղեգնաձոր համայնքի 2013-2016 թթ. Զարգացման քառամյա ծրագիր: Հաստատվել է համայնքի ավագանու 04.02.13 թ. թիվ 10 որոշմամբ: // www.yeghegnadzor.am

Հավելված 2

Եղեգնաձորում գործող կազմակերպությունների քանակը՝ ըստ գործունեության ոլորտների⁶⁶

Գործունեության տեսակ	Քանակ	Գործունեության տեսակ	Քանակ
<i>Առևտուր՝ այդ թվում՝</i>		<i>Ծառայություններ՝ այդ թվում՝</i>	
Պարենային խանութներ	52	Վարսավիրանոցներ	7
Մսամթերքի վաճառք	9	Ավտոտեխնասարկում	5
Բանջարեղենի վաճառք	8	Հյուրանոցներ (100 ննջատեղ)	2
Այլուրի վաճառք	4	Հյուրատներ	2
Ավիատոմսերի վաճառք	3	Ռեատորաններ և հասարակական սննդի այլ օբյեկտներ	13
Դեղատուն	5	Ուղևորավոխադրողներ	25
Հագուստի վաճառք	46	Տաքսի ծառայություն	7
Կոշիկի վաճառք	5	Շինարարություն և ճանապարհաշինություն	3
Օձանելիքների վաճառք	4		
Նվերներ	10		
Ծաղկի խանութներ	2	<i>Արտադրություններ, այդ թվում՝</i>	
Թաղման պարագաների	2	Գինու արտադրություն	2
Չայնապակների վաճառք	2	Օդու արտադրություն	1
Տնտեսական	6	Այծի պանրի արտադրություն	1
Ավտոպահեստամասեր	6	Հացարուկեղենի արտադրություն	5
Կահույքի վաճառք	5	Ավտոմեքենաների ռեկենդի արտադրություն	1
Կենցաղային և էլեկտրական տեխնիկայի վաճառք	6	Տակառագործություն	1
Բենզայցակայաններ	5	Կահույքի արտադրություն	5
Գազայցակայաններ	5	Երկաթբետոնե իրերի արտադրություն	1
Գրախանութ	3	Մետաղապլաստե դռների և պատուհանների արտադրություն	3

⁶⁶Տվյալները հավաքագրված են Եղեգնաձոր համայնքի 2013-2016 թթ. Զարգացման քառամյա ծրագրից: (Հաստատվել է համայնքի ավագանու 04.02.13թ.թիվ 10 որոշմամբ: // www.yeghegnadzor.am)և լրացվել են Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի Վալոնգ ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տնտեսական քարտեզի տվյալներով: // http://smednc.am/ecomap/?gyux=exegnadzor

Հավելված 3

Ջրոսաշրջային-ռեկրեացիոն ներուժի համալիր գնահատման ցուցանիշների համակարգ՝ կշռման գործակիցներով⁶⁷

Հիմնական թեմատիկ բաժինները	Ցուցանիշների անվանումը		Կշռման գործակից ⁶⁸	
	Առաջնային (հիմնական)	Երկրորդական		
Բնական պայմաններ ու ռեսուրսներ	Ռելիեֆ	Գծային-էրոզիոն մասնատում, կմ 10	Գծային-էրոզիոն ցանցի խտությունը, կմ ² 0.37	0,41
		Ուղղահայաց մասնատում (առանձնացում), մ 1250	Անփոփոխ 1	0,0008
	Կլիմա	Ձմռան միջին ջերմաստիճանը, °C -5-6	Նվազագույնը °C -22	0,25
		Ամռան միջին ջերմաստիճանը, °C +20	Առավելագույնը °C +35	0,57
		Տեղումների միջին տարեկան քանակը, մմ 300-700	Անփոփոխ 1	0,002
		Չյան շերտի պահպանման տևողությունը 8-80մմ	Չյան շերտի պահպանման օրերի թիվը 1,25 օր	0,35
	Ջրագրություն (hydrography)	Գետային ցանցի ընդհանուր երկարությունը, կմ 13	Գետային ցանցի խտությունը, կմ, կմ ² 3.1	0,24
		Լճային համակարգի գումարային մակերեսը, կմ ² 0	Լճապատվածությունը, % 0	0
	Հանքային աղբյուրներ	Հանքային աղբյուրների քանակը 0	Հանքային աղբյուրների հաճախականությունը 0	0
	Ցեխաբուժության օբյեկտները	Ցեխաբուժության համար նախատեսված աղբյուրների քանակը 0	Աղբյուրների հաճախականությունը 0	0
	Ֆլորա	Անտառապատ տարածքը, կմ ² 0.012	Անտառապատվածությունը, % 4.6	0,002
		Կարմիր գրքում ներառված բույսերի քանակը 60	Հանդիպման հաճախականությունը 0.09	0,0015
	Ֆաունա	Կենդանիների տեսակների քանակը 32	Հանդիպման հաճախականությունը 0.06	0,002
		Կարմիր գրքում ներառված կենդանիների քանակը 9	Հանդիպման հաճախականությունը 0,03	0,003
	Լանդշաֆտներ	Տեսակային բազմազանությունը 6	Տեսակների քանակը 3	0,5
		Տարածքային բազմազանությունը 4	Էնտրոպիա (Entropy), բիտ 0.96	0,24
Բնության հուշարձաններ	Բնության հուշարձանների քանակը 1	Հանդիպման հաճախականությունը 0,9	0,9	
Բնության հատուկ պահպանվող տարածքներ	ԲՀԳ-երի ընդհանուր մակերեսը, կմ ² 42	Ծածկված տարածքը, % 0,6	0,01	

⁶⁷ Աղյուսակի տվյալների հաշվարկմանը մասնակցել են ՀԳՏՀ «Ջրոսաշրջության կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհիներ Անահիտ Հովհաննիսյանը, Լուիզա Վարդանյանը, Աիդա Սերոբյանը:


⁶⁸ Յուրաքանչյուր կշռված ցուցանիշ (Biⁱ), որն արտահայտված է միավորներով, որոշվում է հետևյալ քանաձևով. Biⁱ=Biⁱ*k, որտեղ k-ն մասնագիտական հարցումների արդյունքում ստացված կշռման գործակիցն է:

		<i>Աղյուսակի շարունակություն</i>			
Մշակութային-սպառնական գործոններ	Պատմության հուշարձաններ	Պատմության հուշարձանների քանակը 12	Հանդիպման հաճախականությունը 11,3	0,94	
	Քաղաքային-հուշարձաններ	Հնէաբանության հուշարձանների քանակը 7	Հանդիպման հաճախականությունը 6,6	0,94	
	Բնակչության մշակութային կառույցները	Մշակութային կառույցները, որոնք կապված են հայտնի մարդկանց կյանքի հետ 3	Հանդիպման հաճախականությունը 2,8	0,93	
		Ազգային մշակույթի կառույցների քանակը (խոհանոց, ազգային ֆոլկլոր) 1	Հանդիպման հաճախականությունը 0,9	0,9	
		Մշակութային ժամանցի կառույցների քանակը (թանգարան, թատրոն, համերգային համալիր, գրադարան) 5	Հանդիպման հաճախականությունը 4,7	0,94	
Սոցիալ-տնտեսական գործոններ	Սպորտային և զվարճալիքների կառույցները	Կառույցների քանակը (դիսկոտեկ, բոուլինգ, խաղարան, սպորտային վայրեր, գիշերային ակումբ) 2	Հանդիպման հաճախականությունը 1,88	0,94	
	Բուժիչ-վերականգնողական զբոսաշրջության կառույցներ	Կառույցների քանակը (առողջարան, կուրորտ, վերականգնողական բժշկության բաժանմունքներ, մասնագիտացված բժշկական կենտրոն) 1	Հանդիպման հաճախականությունը 0,9	0,9	
	Գործարար զբոսաշրջության կառույցներ	Կոնգրես-կենտրոնների, գործարար կենտրոնների քանակը 1	Հանդիպման հաճախականությունը 0,9	0,9	
	Առևտրի կենտրոններ	Առևտրի կենտրոնների քանակը 188	Հանդիպման հաճախականությունը 0,69	0,94	
	Հանրային սննդի ձեռնարկություններ	Հանրային սննդի ձեռնարկությունների քանակը 13	Հանդիպման հաճախականությունը 12,2	0,94	
	Սպորտային զբոսաշրջության կառույցներ	Կառույցների քանակը (լողավազան, սպորտային բազաներ, սպորտսրահներ) 1	Հանդիպման հաճախականությունը 0,9	0,9	
	Ձկնորսության, որսորդության կառույցներ	Մարքավորումներով հագեցած ձկնորսության և որսորդության տնտեսությունները 0	Հանդիպման հաճախականությունը 0	0	
	Տրանսպորտային ենթակառուցվածք	Տրանսպորտային ցանցի ընդհանուր երկարությունն ըստ կատեգորիաների			
			Տրանսպորտային ցանցի խտությունը, կմ² 1,58	Երկաթուղի 0	0
				Պետական նշանակության ճանապարհ, կմ 12	0,1
			Պինդ ծածկույթով ճանապարհ, կմ 26,2	0,06	
			Գրունտային ճանապարհ, կմ 12,6	0,1	
			Ներքաղաքային ճանապարհ, կմ 38,80	0,04	

<i>Աղյուսակի շարունակություն</i>			
Տրանսպորտային ենթակառուցվածքի կառույցները	Օդանավակայանների, երկաթուղային կայարանների, ավտոկայանների քանակը 1	Հանդիպման հաճախականությունը 0,9	0,9
Կապի և տեղեկատվության կառույցները	Միջազգային և միջքաղաքային կապի, տեղեկատվական գործակալների, ինտերնետ-սրահների քանակը 7	Հանդիպման հաճախականությունը 6,58	0,94
Զբոսաշրջիկների կուլեկտիվ տեղաբաշխման միջոցները	Մոթելների, քեմփինգների, որսորդների, ձկնորսների և այլ կառույցների քանակը 2	Հանդիպման հաճախականությունը 1,88	0,94
Գյուղական զբոսաշրջության կառույցների քանակը, զբոսաշրջային տների քանակը 2	Գյուղական զբոսաշրջության կառույցների քանակը, զբոսաշրջային տների քանակը 2	Հանդիպման հաճախականությունը 1,88	0,94

Հավելված 4

Տարածաշրջանում կլաստերների ստեղծմանն ալգորիթմ⁶⁹



⁶⁹ Ускова Т.В., Развитие региональных кластерных систем. // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз 1 (1)2008. - стр. 92-103

Հավելված 5

Խաղողի մթերման 2012-2013 թթ. Փաստացի ծավալները ըստ մթերող ընկերությունների

h/h	Մթերող ձեռնարկության անվանումը	2012 թ. փաստացի տարեկան մթերվել է (տոննա)	2013 թ. մթերման կանխատեսում (տոննա)		2013 թ. փաստացի տարեկան մթերվել է (տոննա)			Մթերման սկիզբը, միջին գինը
			Ընդամենը	Այդ թվում՝ Աղայնաձորից	Ընդամենը	Այդ թվում՝ Աղայնաձորից		
						Ընդամենը	Այդ թվում՝ Արևնի	
1	Գետափի գինու գործարան, ԲԲԸ	1341	700	350	585.4	434.8	361.4	170 դր.
2	Վայք գրուպ, ՓԲԸ	50	55	5	45			200 դր.
3	Գինեքար, ՍՊԸ	76	5	5	9	9	9	200 դր.
4	Հին Արենի, ՍՊԸ	84	100		100	10	10	200 դր.
5	Մեծ Սյունիք, ՓԲԸ	200	30	30	36	36	36	200 դր.
6	Գետնատուն, ՍՊԸ	238.8	150	120	250.1	138.6	126.2	200 դր.
7	Արենի գինու գործարան, ՓԲԸ	231	160	30	201	34	23	200 դր.
8	Ստեփանյան Արթուր, ԱԶ	43						
9	Մարան, ՍՊԸ	115	150	120	120	117	107	200 դր.
ԸՆԴԱՄԵՆԸ		2378.8	1350	660	1346.5	779.4	672.6	

Հավելված 6

**Գինեգործության ոլորտի SWOT վերլուծություն
Վայոց ձորի մարզում**

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> ▪ Ճանաչում վայելող «Արենի» գինի ▪ «Արենի» տեսակի տեղական հումքի բավարար քանակության առկայություն ▪ Ավանդաբար բարձր զարգացած ոլորտ ▪ Տեղական աշխատուժի առկայություն ▪ Վերանշակող ձեռնարկության մոտ գրավելը հումքի և ռեսուրսներին ▪ Ժամանակակից հմտություններով մասնագետների առկայություն ▪ Արտահանման շուկաներում հայկական Սիլյուրքի առկայություն ▪ «Արենի» գինու փառասրուն 	<ul style="list-style-type: none"> ▪ Մարքեթինգի և մենեջմենթի թույլ հմտություններ, ▪ հնացած տեխնոլոգիաներ, ▪ փոքրածավալ արտադրություն արտաքին շուկա մտնելու համար, ▪ Ֆինանսական սուղ ռեսուրսները: Մարչելի ֆինանսական ռեսուրսների բացակայություն: ▪ Տեղական ապաման շուկայի սահմանափակություն ▪ Տեղեկատվության պակաս գինու արտադրության արդի տեխնոլոգիաների վերաբերյալ ▪ Ժամանակակից տեխնիկայի և արտադրական հնարավորությունների բացակայություն ▪ Գինու փորձաքննության մեթոդների բացակայություն ▪ Գինու համերես սրահների բացակայություն
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> ▪ Գինու արտահանման պոպուլյար աճ ▪ Խաղողի մթերման ծավալների մեծացման հնարավորություն ▪ ԱՊՀ շուկաներում հայկական գինու համբավի դրական արձագանք ▪ Կողմնորոշվածության մեծացում դեպի արտահանման շուկաներ ▪ Համագործակցության ծրագրերի զարգացումներ (USDA-ի աջակցության ծրագրեր) ▪ ՓՄՁ ԶԱԿ գործունեության միջոցով պեղական աջակցություն ▪ Կաթիլային ոռոգման համակարգի ներդրում ▪ Գինու որակի բարելավում միջազգային սրանդարտներին համապատասխան ▪ Կառավարության ակտիվ քաղաքականություն ուղղված գինեգործությանը ▪ 2012-2020 թթ. գինեգործության մրցունակության ռազմավարության հաստատում ▪ Գինու համալսարանի հիմնում Վայոց ձորի մարզում (բանակցային փուլում է) ▪ Հայկական գինիներ հովանոցային բրենդի հայեցակարգի ստեղծում 	<ul style="list-style-type: none"> ▪ Բնակլիմայական աղերներ, որոնք կարող են նվազեցնել խաղողի բերքը ▪ Բնական աղերների դեմ պայքարաարվածության ցածր մակարդակ ▪ Արտագաղթ գյուղական բնակավայրերից ▪ Հայկական գինի բրենդի բացակայություն ▪ Վրացական գինու հեղ սուր մրցակցություն արտաքին շուկայում (ՌԴ) ▪ Հարկային և մաքսային դաշտի անբարենպաստ պայմանները գինու արտադրության ՓՄՁ ոլորտում

Հնարագորական խմբի ղեկավար՝

ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հնարագորական խմբի կազմը՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

տ.գ.դ., պրոֆեսոր

ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ

տ.գ.թ., դոցենտ

ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ

տ.գ.թ., դոցենտ

ՏԻԳՐԱՆ ԹԵՐԶՅԱՆ

ֆ.մ.գ.թ., դոցենտ

ԼԻԼԻԹ ԶՈՒՅԱՆ

տ.գ.թ., ասիստենտ

ՀԱՄՄԻԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

ասիստենտ

ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆ

ասպիրանտ

ՎԵՆԵՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

մագիստրանտ

Տարածական զարգացում

Հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ-ում տարածական զարգացման հնարավորությունների գնահատումը և դրանց իրականացման հիմնական ուղղությունների բացահայտումը: Մշակվել են ՀՀ տարածական զարգացման հայեցակարգային հիմնադրույթները: Վերլուծվել են քաղաքների զարգացման բազմաթիվ մոդելներ: Ուսումնասիրվել է տարածական զարգացման միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում: Կատարվել են ՀՀ տարածքների՝ մարզերի և համայնքների տնտեսական ռեսուրսների հետազոտություն և տարածքներում կրեատիվ արդյունաբերության զարգացման վերլուծություն: Մասնավորապես՝ բացահայտվել է, որ Երևանի քաղաքի միջուկային բժշկության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ճշգրիտ ճարտարագիտության և դեղագործության ոլորտներում առկա է զարգացման զգալի ներուժ:

Հաշվարկվել է ՀՀ մարզերի տնտեսական զարգացման համաթիվը, որն իր հերթին բաղկացած է մարզի տարբեր ոլորտները բնութագրող համաթվերից՝ ժողովրդագրական, նորարարության, մրցունակության, տնտեսական և սոցիալական զարգացման: Հենվելով մարզերը բնութագրող 20-ից ավելի տնտեսական, սոցիալական և այլ ցուցանիշների վրա՝ հայտնաբերվել են այն մարզերը, որոնք ամենախոցելին են:

Վերլուծվել են նաև Եղեգնաձոր քաղաքում նոր արժեշրջանների ձևավորման հնարավորությունները: Դիտարկվել են տարածաշրջանի ճյուղային կլաստերավորմանն առնչվող խնդիրներ, ինչպես նաև տարածական կլաստերավորման պայմանները և մեխանիզմները՝ որպես մրցունակության բարձրացման մեթոդ: Ուսումնասիրվել և առաջարկվել է ստեղծել գինեգործության կլաստեր Վայոց Ձորի մարզում:

Руководитель исследовательской группы

КАРЕН ГАМЛЕТОВИЧ ГРИГОРЯН

кандидат экономических наук, доцент

Состав исследовательской группы

КОРЮН АТОЯН

доктор экономических наук, профессор

ТАТУЛ МКРТЧЯН

кандидат экономических наук, доцент

СОС ХАЧИКЯН

кандидат экономических наук, доцент

ТИГРАН ТЕРЗЯН

кандидат физико-математических наук,

доцент

ЛИЛИТ КОЛЯН

кандидат экономических наук

АСМИК АМБАРЦУМЯН

асистент

АКОП АРШАКЯН

аспирант

ВЕНЕРА АРАКЕЛЯН

магистрант

Пространственное развитие

Основная цель исследования заключается в оценке возможностей пространственного развития и в определении основных направлений пространственного развития. Разработаны основы концепции пространственного развития Армении. Анализированы экономические ресурсы общин и областей (марзов) РА и уровень перспективы развития креативной промышленности Армении, в частности города Еревана. Исследован международный опыт пространственного развития и возможностей его применения в РА.

Рассчитан индекс экономического развития, который, в свою очередь, состоит из индексов, описывающих разные сферы марза - индексы демографического, инновационного, экономического и социального развития. На основе более 20 социальных, экономических и других индикаторов, описывающих марзы, были определены наиболее уязвимые марзы.

Промышленные традиции города Ехегнадзор, а также уже имеющиеся цепочки приращения стоимости, ресурсный потенциал и близость транспортных путей межгосударственного значения, позволяют наметить новые виды цепочек приращения стоимости, которые дадут возможность повысить социально-экономические показатели и уровень жизни региона. Рассматриваются вопросы отраслевой кластеризации региона. Наблюдаются механизмы и условия кластеризации региона как метод повышения конкурентоспособности. Предложен пример кластера виноделия в регионе Вайоц Дзор.

Head of research team

KAREN GRIGORYAN,
PhD in Economics, Associate Professor

Members of research team

KORYUN ATOYAN
Doctor of Economics, Professor
TATUL MKRTCHYAN
PhD in Economics, Associate Professor
SOS KHACHIKYAN
PhD in Economics, Associate Professor
TIGRAN TERZYAN
PhD in Physics and Mathematics,
Associate Professor
LILIT QOLYAN
PhD in Economics, Assistant Professor
HASMIK HAMBARTSUMYAN
Assistant Professor
HAKOB ARSHAKYAN
PhD student
VENERA ARAKELYAN
Master's program student

Spatial Development

The main objective of the study is to assess the possibilities and outline main directions of spatial development in Armenia. The fundamentals of the concept of spatial development in Armenia were worked out. The economic resources of communities and regions (marz) of Armenia were analyzed and as well the level and prospects of development of the creative industry in Armenia, particularly in the city of Yerevan. International experience of spatial development and the possibilities to implement it in RA were studied.

The economic development index had been calculated, which comprises the following indices that describe various spheres of marz (region): demographic, innovation, competitiveness, economic and social development indices. Calculations discovered the most vulnerable marzes according to more than 20 social, economic and other indicators that describe marzes.

Industrial traditions of the city Eghegnadzor and existing value chains, resource potential and the proximity of the interstate transportation routes allow to identify new types of value chains, which will give an opportunity to improve the socio-economic performance and living standards in the region. The issues which concerning the field of clustering region is reviewed. The mechanisms and conditions of the clustering region were observed as a method of increasing competitiveness. An example of winemaking cluster in the region of Vayots Dzor was suggested.



Հերագորական խմբի ղեկավար՝
ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ

Հերագորական խմբի անդամներ՝
ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ
ՍՈՍ ԽԱԶԻԿՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԵՐԶՅԱՆ
ԼԻԼԻԹ ՔՈԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆ
ՎԵՆԵՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Խմբագիր՝ Վ. Միրզոյան
Տեխնիկական խմբագիր՝ Ն. Խչեյան

Էջադրումը և սրբագրումը՝ Ս. Բոյաջյանի
Ձևավորումը՝ Ն. Խչեյանի

Չափս՝ 70×108¹/₁₆:
5,5 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

